



ՍԱՐԳԻՍ ՊԱՅԱԶԱՆ

ԿԱՉԱՆՈՒՄԻ
ՄԻՐԱՏԱԴՆԵՐԸ



КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗЖЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

891.99

12204

7-19

Пшечин, И.

Чашинский ирригационный

б.н.

ՍԱՐԳՈՒՄ ՊԱՅԱՋԱՍ

891.99

Պ- 19

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1951 թ.

ԿԱՃԱՌՈՒՄ
ՄԻՐԱՏԱՐՆԵՐԸ

ԿԻՊԱԿ

№
29130



ՀԱՅՈՒՆԵՏՀՐԱՍ
ԵՐԵՎԱՆ
1948

С. ПАЯЗАТ
ВЛЮБЛЕННЫЕ ИЗ КАХНУТА

Повесть

(На армянском языке)

Аргиз, Ереван, 1948

Ձեռքերը դեպի վեր և հայացքն ուսի վրայից ետ ուղղած, շրջված տակառի վրա սրտատրոփ կանգնել էր նվագախմբի ղեկավարը: Նա կարճահասակ էր, երիտասարդ, ոլործուն սև դանդուրներով և նվագախումբը ղեկավարելու եկել էր ուղիղ աշխատանքի վայրից: Նրա յուզոտված կապույտ բլուզը, մինչև սրունքները ետ ծալած շալվարը չէին համապատասխանում տոնական հանդեսին:

Հայացքները հառած նրա ձեռքերին, տանձենու տակ, լարված լռությամբ սպասում էին խառը գործիքներով դյուղական երաժիշտները, որոնք նույնպես շտապ հավաքվել էին բազմությամբ խռնված լեռնադաշտի վրա: Լեռնադաշտի շուրջը երեք կողմից ոլորվում էր ձորը՝ խնձորի փարթամ այգիներով, ձորի միջով հոսում էր Շողանա-ջուրը, տեղ-տեղ մի քանի ջրաղացների կային, մի սղոցարան, իսկ այգիներից վերև՝ ծխում էր աղյուսի փոքրիկ գործարանը: Ավելի հեռու, ուր ձորը խառնվում էր մի ուրիշ ձորի, Շողանա-ջուրը՝ մի ուրիշ դետի, անտառի տակ, սարերի գալարվող լանջին, փոքրիկ այգիների և հաղթ ծառերի խմբի մեջ փռվել էին Կաղնուտի տները, մուգ-կարմիր աղյուսե տանիքներով:

Նվագախմբից քիչ հեռու կանգնած էր վառվռուն աչքերով մի երիտասարդ, անհամբեր նայում էր հեռավոր զույգ թիկերին, ուր ոլորվում էր ձորից բարձրացող թեք ճանապարհ-

Մասի՛ս... Մաքրուհի տուտուն ճիշտ այդպես էլ պատկերացնում էր. մի գագաթը մեծ, մյուսը՝ փոքր: Մեծ գագաթն ամպերի հետ է խաղում, փոքրը՝ հովերի: Տեղերը, որ նա տեսավ երազում, կարծես ծանոթ լինեին, հարազատ. մարդիկ նույնպես ծանոթ, հարազատ: Տուն շինում էին, չէին վախենում, որ կողոպտեն... Երեխաները հասակ էին առնում բարդու նման, ու ոչ-ոք չէր գլխատում նրանց... Այդ ի՛նչ դրախտ էր, այդ ի՛նչ դրախտ էր...

Զարթնելուց հետո Մաքրուհի տուտուն այլևս չկարողացավ անկողնում մնալ: Ամպերն իջել էին, լուսադեմը դեռ թվում էր մութ, սակայն նա վեր կացավ, գգվանքով ծածկեց Թորոսիկի մեջքը, ապա մեղարը վերցնելով՝ տանից գուրս ելավ:

Թեպետ Փեշտմալջյանն ապրում էր թաղի հակառակ ծայրում, բայց Մաքրուհի տուտուն երազի ազդեցության՝ տակ աշխույժ քայլերով հասավ, դարկեց դռան ճկիկը:

— Փիլիպոս աղբար, ներիր, որ շուտ եմ եկել...

— Զարար չկա, — պատասխանեց ջուլհակը ֆեսը ծածկելով, — համա աստված խեր անի, առտուն կանոնիս տերտերակնոջ պես...

— Երազիս ուրախությունեն եկա, — ասաց Մաքրուհի տուտուն, տեսածը պատմեց ու ավելացրեց. — ես էլ կուզեմ ձեզ հետ երկիր երթալ, հայրենիք:

— Գրե՛մ անունդ:

— Հրամանք ես, — ոգևորվեց Մաքրուհի տուտուն, ապա անհամբեր հարցրեց. — շո՛ւտ պիտի երթանք:

— Կենտրոնեն վիզա ստանալուն պես:

Մաքրուհի տուտուն երջանկությունից առանց հրավերի նստեց սեղրին. երանելի ժամ...

— Իսկ եթե, Փիլիպոս աղբար, Հայաստանը ուշացնե՞:

— Բոշ-բոշ հերիք զրուցես, ջանքմ, — ընդհատեց խոսակիցը, — Հայաստանը մայր ասել է, մայրը կարո՞ղ է շաճապարել ընդունելու իր աստանդական զավակներուն:

Անհանգստությունը, որ ստվերել էր Մաքրուհի տու-

բանալով, ինչ-որ աղմուկով շարժվեց առաջ: Խեչանը նայեց աղմուկի կողմը: Երևաց Սոնա տատին: Դա մի փոքրահասակ, նիհար, բայց արտասովոր աշխույժ ու արագաշարժ պառավ էր, մոտ վաթսուն տարեկան, մուգ ծաղկավոր տոնական շալն ուսերին դրած:

— Մեր Սոնա տատին է, Տիգրանի մերը, — հոնքերը թեքելով նրա կողմը, Խեչանը ժպտալով կամացով ասաց Սարոյանին:

Սարոյանը կրծքից կախած իր լուսանկարչական գործիքն ուղղեց՝ Խեչանի խոսքերից հպարտացած Սոնա տատի վրա, արագ շրխկացրեց, նորից շուռ եկավ: Սոնա տատին թեթև շփոթվեց, ամոթի զգացումով նայեց շուրջը, մոտեցավ Խեչանին:

— Էն ի՞նչ արեց, Խեչան:

— Ոչի՛նչ: Պատկերդ հանեց, որ տանի թերթում տպի:

— Վո՛ւյ, քոռանամ, բա ժած եկա: Չտե՞սավ:

Բայց Խեչանը չսեց նրան, նայեց Սարոյանին, որն իր լուսանկարչական գործիքն արդեն ուղղել էր հեռվում երևացող տրակտորների կողմը: Նա նորից անհանգիստ խոսում, հարցնում էր Խեչանին:

— Բոլորն, ուրեմն, կոմերիտականնե՞ր են: Իսկ վառելանյութի քանի՞ տոկոս են խնայել և ավարիաների քանակը...

— Ավարիա՞: Աշխատանքի միջին սրանցից մեկի տրակտորը խափանվի՞, մի մասը ջարդվի՞, փչանա՞: Էդպես բան չի պատահել...

Բայց հանկարծ, անսպասելի լռեց Խեչանը, զարմանքից դեմքը կարծես ձգվեց, երկարեց: Չեռքով նա շտապ, շփոթված ծածկեց Սարոյանի լուսանկարչական գործիքն ուղիղ այն պահին, երբ լավեց նրա շրխկոցը: Սարոյանը տարակուսած նայեց Խեչանին, նայեց թիեթի կողմը: Ճանապարհի վրա, թիեթի մոտ կանգ էր առել Սիմոնի տրակտորը, մյուսներն արդեն բավական հեռացել էին նրանից: Սիմոնն իջավ տրակտորից, տենդորեն սկսեց ինչ-որ բան կարգի բերել: Տրակտորը խափանվել էր: Խեչանն այդ անակնկալից, որ

հակառակի պես պատահեց իր խոսքի վրա, ծայր աստիճան
զայրացած թափ տվեց ձեռքը:

Եվ ահա, տակառի վրա կանգնած Սաղաթելը, որ աչքը
երբեք չէր հեռացնում խեղանից, այդ ամենն ընդունելով որ-
պես իրեն ուղղված նշան, կտրուկ թափով իջեցրեց վեր
պարզած զույգ ձեռքերը: Ուժեղ և որոտալից աղմկեց նվա-
գախումբը: Խեղանը ձեռքն արագ ու զայրացած թափահարեց
նվագախմբի կողմը: Սակայն նվագախումբն այդ նույնպես
ընդունեց յուրովի և սկսեց ավելի ոգևորված, աշխույժ նվա-
գել...

Նունոն նկատեց Սիմոնի ետ մնալը, իր տրակտորը
կանգնեցրեց, վազեց նրան օգնության: Լեռնը նույնպես
նկատեց, դռաց Տիգրանին: Հեռվում բոլոր տրակտորները
կանգ առան: Երբ Տիգրանն օգնության հասավ Սիմոնին,
Նունոն արդեն կարգի էր բերել նրա տրակտորը:

Երաժիշտները, որ ոչինչ չէին նկատել, շարունակում էին
զիլ նվագել, և իր ոլործուն սև դանդուրները ցնցելով, Սաղա-
թելը թափահարում էր ձեռքերը, արդեն ծայր աստիճան ոգե-
վորված: Խեղանը շրջվելով դռագոռաց, զայրացավ, բայց ի՞նչ
էր պահանջում, Սաղաթելը չհասկացավ. խանդարում էր
նվագը, ձայնը չէր լսվում: Մի կերպ վերջապես հասկանալով,
Սաղաթելը զույգ ձեռքերը սարսափահար թափահարեց, աշ-
խատեց դադարեցնել նվագը: Սակայն թունդ ոգևորված երա-
ժիշտները միանգամից գլխի չընկնելով, աչքերը կիսախուփ,
ինքնագոհ շարունակում էին ավելի եռանդով ու բարձր նվա-
գել: Վերջապես երաժիշտները լռեցին:

Բաղմոթյունն անհամբեր նայում էր թիերի մոտ կանգ-
նած տրակտորին ու երբ հանկարծ շարժվեց տեղից, նրա
հետևում բոլորը զարմանքով տեսան՝ Տիգրանն ամուր փա-
թաթված համբուրում էր Նունոյին: Բայց ոչ ոք չիմացավ,
չհասկացավ, նա որքա՞ն գոհ էր Նունոյից, և ուրախությունից
միայն համբուրեց նրան, որ մինչև իր հասնելն օգնեց Սիմո-
նին, կարգի բերեց տրակտորը: Աղմուկով պոռթկաց բաղ-
մոթյան զիլ ծիծաղը: Տիգրանը հանկարծ շփոթված թեթև

հրեց Նունոյին, նայեց բազմության կողմը: Շփոթվեց Նունոն, կարմրեց, ամոթից ծածկեց աչքերը, փախավ: Իսկ բազմությունը դեռ շարունակում էր ուրախ հռհռալ:

Սոնա տատին ամոթից կարմրեց, շիկնեց, կիսախուփ բռունցքը դրեց շրթերին, ինքն իրեն բարկացավ, թաքուն շանչեց որդուն ու ամոթահար, արագ թաքնվելով հեռացավ, որ չտեսնեն, շնկատեն իրեն:

— Նոր են պսակվել, — ականարկելով նրանց Խեչանն աչքով արեց Սարոյանին, հազիվ զսպելով նաև իր ծիծաղը, ուրախացած այդ միջադեպով, որ մոռացության տվեց նվագախմբի հետ պատահած թյուրիմացությունը:

Տրակտորները մոտեցան: Լուռ էին երաժիշտները: Նունոն ամոթահար քաշվեց մի կողմ, իր տրակտորի հետևը: Տիգրանը մոտեցավ նրան, հանդիմանեց, թեթև զայրացավ:

— Տեսա՞ր, ո՛նց են ծիծաղում:

— Ի՛նչ անեմ, ես հո մեղավոր չեմ, — շփոթված պատասխանեց Նունոն:

Երաժիշտները սկսեցին ուշացած նվագել: Սարոյանը մոտեցավ Տիգրանին:

— Ինձ փաստեր տվեք: Պլանների կատարումը ըստ ամիսների, վառելանյութի տնտեսումը և ավարիաների քանակը:

Սակայն Տիգրանը երաժիշտների զիլ աղմուկի մեջ չսեց նրա ձայնը, լուռ էր, ուշադիր հայացքը քարացած հառել էր հեռու, դեպի երկինք:

— Տե՛ս, Նունո՛, հրե՛ն: Ա՛յ, էն ամպի տակին սավառնակ է, — շրջվելով Նունոյին՝ արդեն մեղմացած ցույց տվեց Տիգրանը, աչքն ամպերից շիջեցնելով:

— Այո, տեսնում եմ, — շարունակեց Սարոյանը: — Դուք այսօր սպասո՞ւմ եք սավառնակի: Ինչո՞ւ եք լռում:

— Չէ: Մեզ մոտ սավառնակ չի գալիս, — ամուսնու փոխարեն պատասխանեց Նունոն, կամացուկ ու թաքուն քաշեց նրա թևը, կարմրելով աշխատեց անխոս հանդիմանել:

— Ուրեմն սիրո՞ւմ եք, հետաքրքրվո՞ւմ:

Տիգրանը կարծես ուշքի գալով նայեց Սարոյանին, ոչինչ չպատասխանեց։ Երաժիշտները հանկարծ լռեցին։ Խեչանը բարձրացավ տակառի վրա։ Բազմության աղմուկն աստիճանաբար մարեց, սակայն մեջընդմեջ, հատուկենտ շարունակվում էին աղջիկների դուսպ պոռթկացող քրքիջները։

— Դե՛, իհարկե, ընկերներ, մենք բոլ ծիծաղեցինք։ Բայց հիմի ես ուզում եմ... պաժալուստա, աղջիկները թող դադարեն ծիծաղելուց... ես, ընկերներ, ուզում եմ շնորհամորեւ մեր անվանի բրիգադը, որն առաջին տեղը գրավեց շրջանում։ Եվ շնորհիվ սրանց մենք նույնպես ժամկետից առաջ կատարեցինք բերքահավաքն ու աշնանացանը։ Շնորհիվ էս տեսակ մարդկանց, շնորհիվ ձեր աշխատանքի, մեր կոլխոզը, ընկերներ, շրջանում նույնպես գրավեց առաջին տեղը և...

Բայց նրա խոսքի կեսին հայտնվեց սավառնակը, շատ ցածր թռավ լեռնադաշտի վրայով։ Խեչանի ձայնը խլացավ նրա աղմուկի մեջ։ Բազմությունը թեթև իրարանցումով նայեց դեպի վեր։ Սավառնակից ի՞նչ էր ընկավ ներքև, ուղիղ նունույի ոտքերի մոտ։ Նունոն վերցրեց, զարմանքից շուռ ու մուռ տվեց, տարավ Տիգրանին. տե՛ս, տե՛ս։ Տիգրանը բացեց, հանեց թղթի մի կտոր, կարդաց, թողեց նունույին, փախավ՝ գնաց։ Տեսնես ի՞նչ պատահեց։ Նունոն մնաց անշարժ, հեռվից լսեց Տիգրանին։

— Խեչա՛ն, սավառնակն ուզում է իջնել։ Կարդա՛։

— Ի՞նչ։ Տուր տեսնեմ... Ընկերներ, հեռացեք, ազատեք դաշտը...

Նորից մոտեցավ սավառնակը։ Երաժիշտներն իրենց գործիքներով փախան։ Բազմությունը ցրվլ գալով շաղ եկավ ձորափին։

II

Դա մի վարժական երկտեղանի սավառնակ էր, երբ իջավ լեռնադաշտի վրա, բազմությունը շրջապատեց նրան։ Օդաշուի թիկունքում նստած էր մի ուղևոր։ Սարոյանը բոլորից առաջինը մոտենալով, մի շնչով հարցրեց օդաշուին.

— Ավարիա՞ է: Հարկադի՞ր վայրէջք: Ո՞չ: Ե՞րբ և ո՞ւր
այստեղից:

Նա ոչինչ չպատասխանեց, հանեց ակնոցը, ճառագայ-
թող դեմքով ժպտաց:

— Սեդա՛, — զարմացան բոլորը:

— Տեղացի՞ եք, — շարունակեց Սարոյանը, — արձակո՞ւրդ
եք եկել: Ինչո՞ւ չեք պատասխանում:

— Սպասում եմ, որովհետև հերթ չեք տալիս: Գալիս եմ
Երևանից, ուղևոր եմ բերել... Բարև, ընկեր խեչան, ծանոթա-
ցեք Միքայելի հետ, նա դործով է եկել, — ասաց Սեդան, ներ-
կայացնելով իր ուղևորին:

Միքայելը մի քսանվեց-քսանյոթ տարեկան, կոկիկ հագ-
նըված կիրթ երիտասարդ էր: Քաղաքավարությամբ նա ծա-
նոթացավ խեչանի հետ, դրպանից ինչ-որ թղթեր հանելով
մեկնեց նրան, հայտնեց, որ ինքը դործուղված է աշնանա-
յին օլիմպիադայի համար լավագույն կատարողների ընտ-
րության և վերջում ավելացրեց՝ թե հրաշալի հանդիպում
եղավ, անսպասելի:

— Դե՛, մեր դործն է էդպես, դաշտից տուն չենք գնում, —
ժպտաց խեչանը, հարցրեց, — ուրեմն երգիչներ, պարողներ,
նվագողներ եք ուզո՞ւմ: Քանի՞ հոգի:

— Մի տասը մարդ: Իհարկե, կա՞ն ձեզ մոտ:

— Ոնց չկան: Սեփական նվագախումբ ունենք, — հպար-
տացավ խեչանը, — գործիքներն ինքս եմ քաղաքից առել:
Պարողներ էլ կան, երգիչներ էլ... Թե իմանաք ի՞նչ երգչուհի
ունենք: Մի հատ է:

— Սոպրանո՞ է, մեցցո՞, — հետաքրքրվեց Միքայելը:

Խեչանը շատկացավ, մատի ծայրով մտածկոտ սղալեց
ծնոտը, շփոթվեց, բայց ցույց չտվեց:

— Չեմ իմանում ինչ է, բայց մեր լեզվով սոխակ է:
Մեր գյուղի սոխակը, — կատակելով խորամանկ պատասխա-
նեց նա:

Նրանցից քիչ հեռու, տեսնվելով իր հին ընկերների հետ,
Սեդան հարցրեց.

— Իսկ ինչո՞ւ եք հավաքվել, ի՞նչ էիք անում:

— Տոնակատարություն էր, խանդարվեց,—ասաց Սեդաթելը,—մեր գյուղը ու Տիգրանի բրիգադը, Սեդա, առաջին տեղն են գրավել: Մեծ տոնակատարությունը հետո է լինելու:

— Շնորհավորում եմ: Իսկ ո՞ւր է Տիգրանը:

— Համեցե՛ք,—Սարոյանը ձեռքը պարզեց դեպի սավառնակը:

Սեդան նայեց ետ: Տիգրանը նստած էր սավառնակի մեջ, ուշադիր նայում զննում էր նրա մասերը:

— Իջի՛ր, Տիգրա՛ն: Դուրս եկ, շո՛ւտ,—բարկացավ Սեդան ու անմիջապես ժպտաց,—իջիր քեզ ասում եմ: Եկ նախ բարեկենք: Չե՞ս ուզում: Դե՛, նստիր: Վարդաբլուրից կգա ձեր Հմայակը, նրա հետ կթռչես քաղաք:

— Հմայակն արդեն օդաշո՞ւ է: Ե՞րբ է գնալու,—հարցրեց Տիգրանը:

— Վաղը լրանում է արձակուրդը:

— Չե՞ս լսում, Տիգրան, սավառնակը քաղաք է թռչելու, ներքև արի,—Միքայելի հետ մոտենալով կանչեց Խեչանը:

— Ես քաղաք չեմ գնա: Ուզում եմ...

— Եղա՛վ, այդ դեպքում ինքս կթռչեմ,—ասաց Սարոյանը,—նյութերը պետք է շտապ հասցնեմ խմբագրություն:

— Սեդա, ինձ մի քիչ ման չե՞ս ածի,—խնդրեց Տիգրանը:

— Ի՛նձ էլ, Սեդա՛, ինձ է՛լ...—հանկարծ խնդրեցին բոլորը, աղմկեցին:

— Բոլորիդ դժվար է,—մերժեց Սեդան,—բենզինը քիչ է:

— Չէ, Բոլորին շարժի,—միջամտեց Խեչանը.—գուցե միայն մեր բրիգադին, Սեդա՛, հը՞: Շատ չեն, հինգ հոգի են:

— Լա՛վ: Ամեն մեկին երեք բռնակ:

Երաժիշտները նորից նվագեցին: Սավառնակը բազմության ծափերի տակ թռավ, երկու շրջան կազմեց լեռնադաշտի վրա, իջավ: Սիմոնը մոտեցավ, փորձեց բարձրանալ, քայց Տիգրանը նստած էր անշարժ, անտարբեր:

— Սեդա՛, մի անգամ էլ,—խնդրեց Տիգրանը:

— Չեմ կարող, եթե որեւէ մեկը քեզ զիջի՝ խնդրեմ:

Տիգրանը նայեց ընկերներին, իզուր էր նրանց դեմքերին համաձայնութեան նշան որոնում, բոլորը դժգոհ էին: Նայեց Նունոյին, համոզւած ասաց.

— Ինձ Նունոն կզիջի...

— Իսկ ի՞նչ է, նա քեզանից վա՞տ է աշխատել, — հարցրեց Սեդան: — Գուցե դու, Նունո, չե՞ս ուզում: Հա՛:

Նունոն ամոթից ժպտաց.

— Իմ փոխարեն թող ինքը թռչի...

— Բախտդ բերում է, Տիգրան: Դու ոչ թե կին՝ ուղղակի չգիտեմ ինչ ունես: Ես երբեք, Նունո, իմ ամուսնուն այդքան չէի... — Սեդան լռեց, ինչ-որ բանից անհամաձայն օրորեց պոլսը:

Նորից բարձրացավ սավառնակը: Նունոն հանկարծ ականջի տակը լսեց սուր մի հռհռոց, շրջվեց, տեսավ Նազիկին:

— Բա՞ն ես ուզում ասել: Ի՞նչ ես ասելու:

Նազիկը շարաճճի հռհռաց.

— Կլսեն, կիմանան...

— Չեն լսի, ասա՛: Դե՛, վերջ տուր, ի՞նչ ես հռհռում:

— Ամոթ է, չեմ ասի:

— Ի՞նչն է ամոթ, — համառորեն հարցրեց Նունոն:

— Պաշվեցիր, ամենքը տեսան... էստեղ էլ...

— էստեղ էլ՝ ի՞նչ...

— Սեդային ասիր, թող Տիգրանը թռչի, ինքդ շուգեցիր... սիրո՞ւմ ես, հա՛, շա՛տ ես սիրում:

— Ինչե՞ր ես խոսում, Նազիկ, — անհամբեր ասաց Նունոն:

— Պաշվում ես ամենքի առաջ: Ով չտեսավ՝ շատ ես սիրում: Ես ամոթից էնպե՛ս ամաչեցի որ...

Սավառնակն իջավ... Իր առաջվա տեղից նա այս անգամ նստեց շատ հեռու, բազմությունը մնաց մի կողմը, միայն Նունոն ու Նազիկն ավելի մոտ գտնվելով՝ վազեցին դեպի սավառնակը, բոլորից շուտ հասան նրանք: Սավառնակի

մյուս կողմում, բաղմոթյունից ծածկված, զրուցում էին Սեդան ու Տիգրանը:

— Իսկ ճիշտն ասա, Սեդա,—խոսքը շարունակելով խնդրեց Տիգրանը,—ինձանից օգաշու դուրս կգա՞:

Սեդան ժպտադեմ նայեց նրա գեղեցիկ ու զորեղ հասակին, ձեռքն ուսին դարկեց, փորձեց թափահարել, չկարողացավ:

— Առողջությունդ չի ներում, թո՛ւյլ ես,—ասաց շինծու լրջությամբ ու կատակով բժշկի նման տնտղեց, ականջը դրեց կրծքին՝ լսեց սիրտը:

Նազիկն առջևից վազելով՝ թեքվեց սավառնակի հետևը, ամեն ինչ նկատեց, շփոթվեց, կանգ առավ, նրան թվաց Սեդան փաթաթվել էր Տիգրանին, ամոթով ու սարսափած ետ նայեց, ձեռքով արագ ծածկեց իր հետևից վազող Նունոյի աչքերը: Նունոն հեռացրեց Նազիկի ձեռքը, նայեց նրա սարսափած դեմքին, ապա տեսավ Սեդային, թվաց՝ նա փաթաթվել, գրկել էր Տիգրանին, գլուխը կրծքին դրած: Սեդան տեսավ Նունոյին, ուղղվեց, քաշվեց ետ, ժպտաց: Տիգրանը շրջվեց, նույնպես տեսավ ցրված, շփոթված Նունոյին, կարծես ուշք չդարձրեց նրան:

— Դու տուն գնա, Նունո... ես հիմի կգամ: Սեդայի հետ խոսելու բան ունեմ:

Նունոն կախեց աչքերը, անխոս շրջվեց և լցված սրտով արագ հեռացավ: Նազիկը նույնպես շրջվեց, վիրավորված / գնաց Նունոյի հետևից, կզակը բարձր պահած, ուսերը թույլ շորորելով:

— Դու ինչո՞ւ նեղացրիր Նունոյին:

— Ի՞նչ արի որ, ես բան չասի... Սեդա, ասա՛, ինձ կընդունե՞ն ձեր դպրոցում:

— Այս տարի ուշ է, չես հասցնի: Երեք օրից հետո քննությունները սկսվելու են:

— Իսկ եթե վա՞ղը Հմայակի հետ գնամ սավառնակով... Սեդա, ես չեմ թաքցնի քեզանից, ես վաղուց որոշել եմ... Բայց միշտ վախենում էի, հանկարծ չընդունեն, բոլորը կի-

մանան, կխալտառակւիմ: Բայց արդեն վերջնականապես որոշեցի... Դիմումս երևի վաղուց պիտի ուղարկեի:

— Եթե վաղն ես գնում՝ դու ուղղակի դպրոցի պետին դիմիր: Հավատացած եմ կընդունվես: Ես քեզ կօգնեմ:

— Սեդա՛, — անդուսպ ուրախությամբ Տիգրանն ամուր բռնեց նրա ուսերը, ուժեղ թափահարեց, ցավից թույլ ճշաց աղջիկը, ապա թողեց նրան, վազեց՝ գնաց Խեչանին գտնելու:

Սավառնակի մյուս կողմն անցնելով նա տեսավ Խեչանին, որն արագ մոտենում էր խմբի առաջից քայլելով:

— Խեչա՛ն, — ասաց Տիգրանը, — ես վաղը պիտի շտա՛պ քաղաք գնամ:

— Վա՛ղը: Ի՞նչ դործ ունես: Ի՞նչ իմացար մի անգամից, — զարմացավ Խեչանը:

— Գործ ունեմ: Շտա՛պ դործ ունեմ:

— Վաղը չեմ թողնի: Մի ամսից՝ տեսնենք, — կանգ չառնելով մերժեց Խեչանը:

— Չէ, ինձ անսպասման վաղն է հարկավոր, — նրա կողքից, բայց մի փոքր ետ քայլելով, Տիգրանը նորից խնդրեց: Խեչանը կանգ առավ, շրջվեց ետ.

— Շա՛տ ես շտապում: Գնա քո ՄՏ Կայանի դիրեկտորին խնդրի:

— Բա՛ քո համաձայնությո՞ւնը:

— Ինձ մի խնդրի, չեմ կարող: Գործ շատ կա: Մորուտի խոպանը, ինքդ գիտես, վարելու ենք էս տարի, արտապլանային: Ինչի՞ ես վիճում, — ու նորից շուտ եկավ, արագ գնաց:

Տիգրանն այլևս ոչինչ չասաց, շխնդրեց, վիրավորված, փշրված սրտով նայեց նրա հետևից...

* * *

Չորի միջով, այգիների ճանապարհով լուռ գնում էին Նունոն ու Նազիկը: Նրանք անցան ոտքի փոքրիկ կամուրջը, Ջխտակ ուռիների ջրաղացի մոտով բարձրացան դեպի բլրակը, որի գագաթի վրա երկնքից կախվել էր սպիտակ վիթխա-

րի մի ամպ: Հեռվում գյուղը նորից երևաց: Արագ գնում էր Նու-
նոն, գնում էր հպարտ, գեղեցիկ, գնում էր սև խոշոր աչքերը
տխուր կախած, քամին ծածանում էր ճակատին կեռացած մա-
զերի ոլործուն փոքրիկ փունջը և նուրբ բարակ թիկունքի վրա
թրթռում էին երկար-երկար զույգ ծամերը: Նազիկը, որ նույն-
պես լուռ, հոնքերը ծանրացած, քայլում էր կողքից, վերջա-
պես չհամբերեց, դառնացավ.

— Տեսա՞ր, Նունո, ոնց էր Տիգրանին փաթաթվել:

— Սո՛ւ, Նազի՛կ... մարդու շասես... Շատ եմ աղաչում,
թող չիմանան:

— Քո տեղակ ես լինեի, Նունո...

Նունոն խստորեն ընդհատեց նրան.

— Սո՛ւ կաց: Հերի՛ք է... Թող մարդ չիմանա:

Նազիկը սրտնեղած ու քմահաճ վեր քաշեց ուար:

III

Վառ աշնանային կեսօր էր: Բժիշկ Արադյանների տնա-
կի բակը լուռ էր, խաղաղ. հաճելի ջերմություն կար և՛ թա-
փանցիկ հստակ օդում, և՛ արևկող, կապույտ ներկը թափած
պատշգամբում, ուր հատակի կեսի վրա փռվել էին նուրբ
ժանյակների նման ծաղկավոր ճաղերի և սյունների կամարնե-
րի մանր ստվերները: Ծերունի ամուսինները պատշգամբում
նստած ճաշից հետո թեյ էին խմում: Սեղանի վրա խուլ աղ-
մըկում էր ինքնայեռը: Կեսօրի մարմանդ հովից, բակում, պա-
տըշգամբի առջև հազիվ լսելի սվսվում էին՝ խնձորի ու սա-
լորի պայծառ դեղնավուն ծառերն ու վարդի թփերը: Բակում,
տնակից հեռու, ծառերի գագաթների վրայից երևում էր գյու-
ղական փոքրիկ հիվանդանոցը: Ավելի հեռու, ներքևում, երե-
վում էին հարևան տների կտուրները և տների առջև փռված
փոքրիկ պարտեզներն ու այգիները: Ավելի ներքև՝ ձորի մի-
ջով հոսում էր գետը, գետից այն կողմը փռվել էին հեռավոր
լեռնադաշտերը, ավելի հեռու՝ երկնքի կապուտակ կամար-
ների վրա բարձրացել էին լանջերն անտառներով ծածկված,

մերկ գագաթներով լեռները, որոնք աշնան առաջին իսկ ցրտերի հետ տեղ-տեղ արդեն ծածկվել էին ձյունով...

Կարմրավուն, կլոր-մլորիկ բարի դեմքով, վաթսունն անց մի ծերունի էր Արազյանը, ծածկում էր ծղոտե գլխարկ, քայլում էր հաստ ձեռնափայտով, մի՛շտ զվարթ, մի՛շտ ուրախ, երբեք գործից չէր հոգնում, չէր դժգոհում իր ծերությունից։ Շատ լավ ու վատ օրեր էր տեսել նաև տիկին Սաթենիկը։ Երկար տարիների անտրտունջ նա ապրում էր գյուղում, իր ամուսնու հետ, քաղաքում բնակվող ազգականներից հեռու։ Եվ վերջերս միայն, ծերության պատճառով, տիկին Սաթենիկը գյուղական դպրոցում թողեց իր դասերը։ Հոգսերով ապրած, մեղմ կին էր նա, արձագանքող քնքուշ սրտով, շարունակ հաղնում էր սպիտակ փոքրիկ կոֆտա, մազերի կծիկը գագաթի վրա սանրած, իսկ սև երկար, մինչև կրունկները հասնող լայն փեշերով շրջազգեստի տակից ոտքերը չէին երևում, քայլելիս միայն նկատվում էին կոշիկների փոքրիկ բթերը։

Սեդան արագ բարձրացավ աստիճաններով, նրան հետեւում էր Միքայելը, ճամբրուկը բռնած։ Պատշգամբում, զարմացած ծնողների առջև անսպասելի հայտնվելով, ոտքի վրա ֆրֆռալով նա համբուրեց մորը.

— Բարև, մամոշկա... բարև, պապոշկա։— Ապա ներկայացրեց Միքայելին։— Ծանոթացեք։ Այս տղայի հետ, կարող է պատահել, ամուսնանամ։

Տիկին Սաթենիկը հանկարծակի գունատվելով շփոթվեց, ձեռքից ընկավ բաժակը, շր՛խկ, փշրվեց։ Նա իսկույն հավաքեց իրեն, նայեց նույնպես շփոթված, ժպտացող Միքայելին։

Հայրը ձեռքն ազատելու համար, թե՛ շտապելուց շփոթված, անձեռոցիկը թաշկինակի տեղ արագ խոթեց գրպանը, ականոցը շտկեց, ծանոթացավ.

— Նա ձեր մասին մի քանի անգամ՝ իհարկե գրել է... Ինձ համար սրտանց հետաքրքիր էր տեսնել այն քաջին, ով խիզախություն կունենար իմ Սեդայի հետ ամուսնանալ։ Ի՞նչպես ես, Սեդա։

— Հրաշալի, պապոշկա, — Սեդան ոտքի վրա նորից ֆրֆրե-
տալով, սեղանից վերցրեց երկու խնձոր, մեկն ինքը կծեց,
մյուսը տվեց Միքայելին, — աշխատանքս անշափ հետաքրքիր
է, հինգ տարի հետո կլինեմ փորձված օղաշու և կուղևորվեմ
ամենահեռավոր ու ամենավտանգավոր թռիչքների...

Տիկին Սաթենիկի ձեռքից ընկավ, փշրվեց երկրորդ բա-
ժակը:

— Մամոշկա', ախր դա լինելու է հինգ տարի հետո...

— Սեդա', միևնույն է... ես լսել չեմ կարող, — ու արդեն
զայրացած սկսեց արագ-արագ սրբել մի ուրիշ բաժակ թեյի
համար:

— Քեզ, մամոշկա, անհրաժեշտ է ջղերի բուժում, — շինծու
լրջությամբ, ինչպես միշտ, նրա հետ կատակեց Սեդան, —
այո', կյանքի նորմալ պայմաններ ու ֆիզկուլտուրա, առա-
վոտները՝ մարզանք, ցերեկը՝ ինչքան հնարավոր է շատ
զբոսնել, պառկել շատ, խաղալ վոլեյբոլ: Ո՛ւղում ես, մա-
մրշկա, քեզ մայկա ու տրուսիկ տամ...

Տիկին Սաթենիկը նորից շիկնեց, ձեռքից ընկավ փշրվեց
երրորդ բաժակը:

— Սեդա', լավ է լռես, թե չէ՝ մեր տանն ապակեղեն չի
մնա, — ժպտալով միջամտեց հայրը, որ նույնպես հաճախ
դուրգուրանքով, զվարթ, բարձր ծիծաղելով տանը կատակում
էր, ինչպես ինքն էր ասում, իր պառավի հետ: — Դե', նստեք
թեյ խմենք: Մաթո', բաժակները շորքես: Պետք չէ:

— Մենք, պապոշկա, հիմա գնալու ենք, — հրաժարվեց
Սեդան, — մեղ սպասում են:

Եվ նա Միքայելի ձեռքից բռնած, որն իր սակավախոսու-
թյամբ, ինչպես այդ հատուկ է յուրաքանչյուր նորափեսի,
դեռ չէր հասցրել ոչ մի խոսք ասել, — իր հետևից արագ տա-
րավ: Հեռանալիս Միքայելը նորից թեթև ժպտաց, գլուխ
տվեց, սեղանի ծայրին դնելով՝ ճնշվելուց դեռ ձեռքի մեջ
պահած խնձորը:

Նրանց հետևից տիկին Սաթենիկը կիսով չափ կախվեց
պատշգամբից, ձայն տվեց.

— Քեզ ե՞րբ ենք տեսնելու, Սեդա, — բայց արդեն պա-
տասխան չկար, նրանք հեռացել էին բակից, և շրջվելով
ամուսնուն, նա մտահոգված անհանգիստ խոսեց. — փեսայի
ձայնն անգամ չիմացանք: Գուցե համր է:

Նրա ձայնի մեջ ամուսինը զգաց կասկածանքի ու տագ-
նապի նշաններ, վեր քաշեց ուները, ժպտաց.

— Հնարավոր է, — ու գրպանից զարմացած հանեց ան-
ձեռոցիկը...

* * *

Նրա ժիշտները զիլ նվազելով, գյուղի ողջ երեխաներով
շրջապատված, անցան փոքրիկ հրապարակով, մտան կոլ-
տրնտեսության վարչության երկհարկանի շենքի բակը: Նվա-
զախմբի առջևից հպարտ քայլում էր արդեն կոկիկ ու մա-
քուր հագնված Սաղաթելը, իր փոքրիկ ձողը գլխի վերևն օդի
մեջ օրորելով: Բակում երաժիշտները շարվեցին միթխարի
ընկուղենու տակ: Ձայնի վրա, մի քանի հոգու հետ, խեչանը
պատուհանից զարմացած նայեց դուրս, տեսավ աստիճան-
ներով արագ բարձրացող Սաղաթելին:

— Սաղաթե՛լ, էս մուղիկեն ո՞ւր ես բերել, քեզ ասի էն-
տեղ գնա, ակումբը, — ու սպառված համբերատարությամբ
ձեռքը թափահարելով շարունակեց. — ասածս միշտ շփոթում
ես, ինչի՞ ես շփոթվում:

— Եկա իմանալու... ուղում եմ հարցնել, ընդամենը
տա՞սը հոգի պիտի քաղաք գնա: Բա իմ նվազախո՞ւմբը:

— Էլի՞: Ինչի՞ ես նորից հարցնում, տասը հոգին հերիք
է, դործ շատ կա, ասա ձեները կտրեն: Տար ակումբ, ժողո-
վուրդը հիմի հավաքվելու է: Գնացե՛ք, — ու արագ հեռացավ
պատուհանից:

Սաղաթելը երաժիշտներին ձեռքով նշան արեց լռելու:
Երաժիշտները լռեցին: Խեչանը դուրս եկավ պատշգամբը,
իջավ ներքև: Աստիճանների կեսին Սաղաթելը կտրեց նրա
ճանապարհը.



— Նվագախումբը որ մնա՝ էլ ո՞վ է գնալու:

— Դուք անփորձ եք, քաղաք է, խայտառակ կլինեք:

— Տիգրանը մեզ հետ կգա, խոսք է տվել: Հրաշալի նվագել գիտի:

— Տիգրանը: Ե՞րբ սովորեց: Հասկանում եմ, միասին եք մտածել: Նա ի՞նչ նվագող է: Չեմ թողնի, Տիգրանը գործ ունի: Ինչի՞ հս խնդրում: Էդպես էլ ասա իրեն:

Սաղաթելը վիրավորված շուռ եկավ, արագ գնաց: Նրա հետևից նվագելով գնացին երաժիշտները:

Գյուղական փողոցով գնում էր Խեչանը, քայլում էր դանդաղ ու մի փոքր հպարտ, ազդեցիկ ու պատկառելի. մուգ դարչնագույն, խոշոր գրպաններով ֆրենչն ուներ լիքա ամուր նստած, որի երկար թևերի միջից կարծես կաղնու ճյուղերի պես աճել էին մեջքին դրած ձեռքերը: Շուրջը փռված էին կղմինդրե տանիքներով, պատշգամբներով, տեղ-տեղ երկհարկանի տները, յուրաքանչյուրի առաջ՝ փոքրիկ բակ, բաց հարնջագույն պտղատու ծառեր, վարդենիներ: Փողոցի երկու կողմում, ցանկապատերի, առուների ու փողոցի վրա ճյուղերը կախած՝ հանդարտ օրորվում, խշշում էին թեք բներով դեղնած ուռիները: Քայլում էր Խեչանը, ուռիների ստվերները խաղում էին նրա թուխ կարմրագույն դեմքի վրա, որ կարծես հաղիվ շողում էր ինչպես միշտ՝ ինչ-որ քաղցր ու քնքուշ, աննշմարելի ժպիտով: Սրտացավ ու խստապահանջ մարդ էր Խեչանը, երբեմն սակայն դյուրագրգիռ, շուտ բորբոքվող, շուտ մեղմացող, զայրույթն անգամ սրտացավ էր, թեթև ժպիտ հարուցող, ինչպես իր հպարտությունը: Անգիր գիտեր Կաղնուտում ով ինչ ունի, ինչ է պատահել հերու, մեկ էլ տարին, գիտեր բոլոր տների ներսն իրենց մանրամասնություններով, ասլա նաև մեծի ու փոքրի բնավորությունը, և գյուղի դաշտերը, սարերն ու անտառները, թե երբ, որտեղ ինչ է հասունանում, որտեղ ինչ կա: Նայում էր ամպերին, գետի ջրերին, լսում էր թռչունների ու քամու ձայնը՝ բնության գաղտնիքների նշանները հասկանում, անձրև է լինելու արդյոք, թե՛ խաղաղ արև, արդյոք կարճ է լինելու աշունը,

— Թե՛ ձմեռը ցրտաշունչ, ձյունառատ: Միշտ արթնանում էր վաղ, կապուտակ մութուշուսին ու ձիով, քուռակը հետևն քնկած, ելնում էր դաշտերը: Միրում էր լռիկ արոտները՝ արշալույսի ոսկով ու շաղով հեղեղված, սարերում՝ ոչխարների հոտերը, թանձր խոտերի ու կաթի խշշոցը, հովիվների կանչերը: Դաշտերում նկատում էր յուրաքանչյուր մանրուք, մեկի գործին դիտողություններ էր անում, մյուսին խորհուրդներ տալիս: Ու միշտ անհանգիստ, որոնող՝ թե ինչ է պակաս, որ պիտի արվի, որ գյուղը լինի շեն ու առաջավոր: Երեք որդի էր հասունացրել Խեչանը, ամուսնացրել էր աղջիկներին: Որդիներն ապրում էին քաղաքում, տնից հեռու, տանը մնացել էին ինքն ու կինը, Յաղուի մայրիկը, որդիների սրտամաշ կարոտով: Տունը գյուղի կենտրոնումն էր, երկհարկանի ու գեղեցիկ, շեն ու բարի, միշտ լեցուն հյուրերով...

Գյուղական ակումբի մոտ Խեչանը պատահեց Սեդային ու Միքայելին, հեռվից ձայն տվեց, մոտեցավ նրանց: Սեդան նկատեց դիմացից եկող Տիգրանին: Ուռիների տակ, ցանկապատի մոտ, Տիգրանը կանգ առավ, երևի Խեչանի աչքին չերևալու համար: Սեդան դեմքի նշաններով կանչեց նրան: Տիգրանը հրաժարվեց մոտենալ: Չեռքերով թաքուն կանչեց Սեդային: Միքայելը շուռ եկավ՝ նկատեց, Տիգրանը շփոթված արագ պահեց ձեռքերը: Սեդան ժպտաց իր բաց-կարմիր խալիտով, մոտեցավ նրան:

— Խոսեցի՞ր ՄՏ կայանի դիրեկտորի հետ: Ի՞նչ ասաց, — հարցրեց Սեդան:

— Չի թողնում: Առանց Խեչանի համաձայնության, ասում է, չես դնա: Խեչանն էլ թարսվել է:

— Իսկ դու ասա Խեչանին, որ քննություններից կուշանաս:

— Չեմ կարող: Եթե հանկարծ չընդունեն՝ ինձ համար ամոթ է, ես առաջին բրիգադիրն եմ մեր շրջանում...

— Հիմար ես դու, հպարտությունդ շատ է, քան խելքդ:

— Իսկ լա՞վ է խայտառակվել, կարմրել: Բոլորը պիտի լսեն, խոսեն, մտքներում ծիծաղեն, պատիվս կկորչի, ամոթ է: Ես անգամ նույնոյին չեմ ասել:

— Իզուր:

— Չէ, խնդրում եմ, Սեդա', թող ոչ-ոք չիմանա, երբ ընդունվեմ հետո:

Սեդան մտածկոտ լռեց, ամեն կերպ նա ուզում էր օգնել Տիգրանին, հանկարծ նայեց Միքայելի կողմը: Միքայելը նույնպես նայեց նրան, բայց ավելի երկար, ուշադիր:

— Երգել կամ նվագել կարո՞ղ ես, — հարցրեց Սեդան:

— Էդպես էլ չի թողնում: Սաղաթելը խնդրեց՝ նվագախմբի հետ քաղաք դնամ՝ մերժեց: Նվագախումբն էլ չի թողնում:

— Իսկ պարել չե՞ս կարող... Բոլորովին չե՞ս կարող: Ուրեմն մի քիչ պարո՞ւմ ես: Լա՛վ, կգաս ակումբ, Միքայելի հետ ինքս կխոսեմ՝ կհաջողվի:

Միքայելը նորից անհանգիստ նայեց նրանց կողմը. ինչի՞ մասին են այդպես կամաց զրուցում, ինչո՞ւ հանկարծ լռեց Սեդան, ոչինչ չհասկացավ, սակայն աշխատեց ամեն ինչ թաքցնել խեղանից: Խեղանն ուզեց բաժանվել, Միքայելին թվաց, թե նա նույնպես ամեն ինչ նկատեց, բայց աշխատեց ցույց չտալ:

— Իսկ ձեր երգչուհին, որին դուք գովեցիք, գալո՞ւ է, — զրույցը շարունակելով հարցրեց Միքայելը:

— Հա՛, լավ ասիր, շմոռանամ, — խեղանը շրջվեց՝ կանչեց Տիգրանին:

Սեդայի հետ մոտեցավ Տիգրանը: Միքայելը նայեց Տիգրանին, նայեց Սեդային: Սեդան նկատեց նրա կիսահարցական հայացքը, հոնքերը վեր քաշեց կարծես հարցնելով — ինչո՞ւ ես ինձ այդպես նայում:

— Նույնոյին ասա, անպայման դա... Չէ՛, ինքդ կբերես՝ ելույթ ունենա, — Տիգրանին ասաց խեղանն ու կրկին շրջվեց Միքայելին, — սոխակ է, սոխակ:

IV

Աշնան իրիկնապահի արևը ողողել էր լիքը կահկարասիներով, մաքուր ու կոկիկ սենյակը: Պատից թեք կախված

ծաղկաւոր շրջանակով հայելու տակ, սպիտակ սփռոցով փոքրիկ սեղանի վրա պսպղում էր ինքնաեռը, որի շուրջը կնոջ հոգատար ձեռքով շարված՝ խեցիների շրջանակներով դանազան լուսանկարներ կային, մի երկու բարակ-երկար վազ ու դեղին-կանաչ ներկած կավե երկու աղավնի, որ դնել էր Սոնա տատին, երբ մի անգամ դնացել էր քաղաք տոնավաճառի: Մյուս պատից կախված էր մուգ-կարմիր պայծառ մի գորգ, նրա մոտ դրված էին Նունոյի ու Տիգրանի սպիտակ ձողերով մահճակալները, սպիտակ բարձերով, որոնք մանր ժանյակե երիզներ ունեին: Անկյունում երևում էր հասարակ հայելիե դռնով պահարանը, նրա կողքը՝ Սոնա տատի զրնդան փակով գունավոր սնդուկը: Ներքեում՝ լայն մի թախտ, վրան մաշված մի կարպետ ու մեծ մուգ-կարմիր բարձերը պատի երկայնքով դարսած: Մյուս պատից մի դուռ տանում էր կից փոքրիկ սենյակը, ուր քնում էր Սոնա տատին, իսկ այնտեղից մի ուրիշ դուռ բացվում էր ցածրիկ պատշգամբը:

Պատուհանի մոտ, որը ծածկված էր ասեղնագործ երկար վարագույրով, տխուր նստել էր Նունոն ու իր մտքերով տարված՝ դանդաղ բիբար էր շարում թելին: Մայր մտնող արևը վարագույրից թափանցելով, ոսկեգույն և մեղմորեն լուսավորել էր նրա հանգիստ ու սիրուն դեմքը, թեք, քնքուշ ուսերն ու երկար ծամերը: Բաց պատուհանից, պատշգամբում արևկող պատի տակ երևում էին փայլփլուն լվացած կավե կճուճներն ու ճաղին շարված արևի գույն դդումները: Երևում էր բակի հին, ծոված թթենին, արևոտ լայն ճյուղերը փռած, նրա տակ՝ պռունկը թռած կարասը, սանդը, սանդի մոտ նիրհում էր բոցի պես շեկ Բողարը, գլուխը խաչված թաթերին դրած: Իսկ ավելի հեռու, ցանկապատի վրա օրորվում էին աշնան կանեփները:

Հատակին, հին կարպետի վրա նստել էր Սոնա տատին ու հավանգ էր ծեծում՝ բարկացած, արագ-արագ: Կողքը դրած կիսատ պարկից երբեմն-երբեմն բռնով հատիկ էր լըցնում հավանգը ու ինքը իրեն անվերջ մրթմրթում էր՝ խոսում, զայրանում:

— Տիգրանն ինձ միշտ ասում է, շատ ես խոսում, կըռվում ես... Հրեա, ես չեմ խոսում, բերանս խուփ, ըհը'... Տիգրանը բան չի կարա ինձ ասի... Բա դուզը չեմ խոսում, հարսն օտարի մոտ առաջ իր մարդի հետ չէր խոսում, սուս էր մնում... Համա հիմի... խալխի մոտ պաշվում են: Ամոթ չկա: Ես չեմ խոսում, ես սուս եմ մնում ըհը'... Տիգրանն ինձ չի կարա բան ասի, — ու մի պահ նա լռեց, մոլեգնորեն ծեծելով հավանդը:

Բայց դռնից աքլորի առաջնորդությամբ, վախժխելով ներս մտան խատուտիկ հավերը, դանդաղ, տոտիկ-տոտիկ մոտեցան, վերջապես հասան Սոնա տատի կողքն ընկած պարկին: Նախ կտցահարեց աքլորը, հետո իր կանաչ մամռոտ աչքերով կարծես երկշտությամբ նայեց Սոնա տատին, ու հանկարծ հավերն ագահորեն թափվեցին պարկի վրա:

Սոնա տատին ընդհատեց աշխատանքը, որ հավանգը հատիկ լցնի, շուռ եկավ, սարսափած նկատեց հավերին:

— Վա՛յ... Քշա՛, — ճչաց Սոնա տատին, ծափ պես թռավ տեղից, հավանգը պցեց հատակին, հավերին զայրացած քշելով վազեց, դրսի սենյակում աղմկելով դարնվեց կահկարասիներին, ձեռքը պցեց շեմի մոտ դրված ավելին ու անիծելով՝ հավերի հետևից շարտեց բակը, — ա՛յ, քոռանաք դուք՝ ավազակներ, աստված ձեր հախից էնպես գա, դողե՛ր, ոնց որ դուք եք ինձ շարշարում... Ձեր ամեն մի գողացած հատիկը սև ցավ դառնա, ասածուն աղաչանք անեմ՝ ձեր փուշ քոքը կտրվի, փետրաթափ լինեք ու աղվեսի բաժին դառնաք, մինչ չի ձեր մահ գերեզմանը չալթուկի կարոտ սատկեք: Անամո՛թ գողեր:

Բախում Սոնա տատին վերցրեց ավելը, նորից շարտեց ու կշկշացող հավերի հետևն ընկած քշեց բակով մեկ, ապա խոսելով վերադարձավ, վերջին բառերն արդեն շեմի վրա ավարտելով՝ շրջվեց դեպի դուրս, սպառնալով թափ տվեց ավելը:

— Որ սատկեն, էլ ձու չեն ածի, նանի, — տխուր ժպտաց Նունոն, փորձեց մեղմացնել նրա զայրույթը:

— Դե՛, ես հանաք արի, — հանկարծ մեղմացած, շփոթված պատասխանեց Սոնա տատին, — աստված հո՞ էս հավերի պես անխելք չի, նա ինձ հասկանում է, երբ ստից եմ խոսում... Իմ հավերը, աստված ջան, թող ամեն օր, ամառ-ձմեռ խոշոր ձվեր ածեն ու իրենց կյանքից մի քսան տարի էլ ավել ապրեն: Համա գողութուն թող չանեն, — ու նորից նըստեց իր տեղը, կարծես զայրույթը թափած՝ առաջվա նման շարունակեց հավանդ ծեծել, բայց ավելի մեղմ ու հանգիստ:

Արևն արդեն քաշվել էր տնից, երևում էր միայն թթենու ճյուղերի վրա: Խաղաղ իրիկնապահի կապտավուն թեթև մթի շղարշը լցվել էր տունը: Կամաց, հազիվ լսելի, տխուր մրմըռում էր նունոն, կարծես մրմնջում էր վշտից ու նորից բիբար էր շարում թելին: Նա կամաց-կամաց բարձրացրեց ծորացող ու հանդարտիկ քնքուշ ձայնը:

Չինար ես՝ կռանա՛լ մի,

Յա՛ր, յա՛ր,

Մեր դռնեն հեռանա՛լ մի,

Յա՛ր, յա՛ր,

Յա՛ր, քո աստված կը սիրես,

Յա՛ր, յա՛ր,

Հեռու ես, մոռանա՛լ մի:

Յա՛ր, յա՛ր,

Յա՛ր, նա նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,

Նա նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ...

Ինչքան սկսում էր բարձր երգել նունոն, այնքան դանդաղ ու մեղմ էին դառնում Սոնա տատի զրնգան հավանգի զարկերը, հետո շուտով դադարեցին: Նունոյի երգից, ինչպես միշտ պատահում էր այդ, Սոնա տատի սիրտը լցվեց: Նա անսահման քնքշորեն ու արցունքոտ աչքերով, անշարժ, հավանգը ծնկների վրա պահած, նայում էր նունոյին, ջերմ թրթռուն երջանկությամբ:

Հավերը կրկին մոտեցան դռանը: Ըստ երևույթին, նրանք շատ էին ցանկանում իրիկնապահի իրենց կուտը, որ բարկութունից գուցե, թե՛ երգով տարված՝ մոռացել էր Սոնա

տատին: Բայց այս անգամ նրանք արդեն չէին համարձակ-
վում ներս մտնել, շեմի վրա բարձրաձայն ու պահանջկոտ
կշկշացին: Սոնա տատին նայեց դռան կողմը, զգուշությամբ
բարձրացավ տեղից, պարկից երկու բոով հատիկ վերցրեց,
տարավ նետեց դուրս՝ հավերին, որ լոեն, չխանդարեն նունո-
յին, ապա զգուշ ու ամուր ծածկեց դուռը: Դրսում լոեց հա-
վերի կշկշոցը:

Հազիվ-հազ թանձրացող կիսախավարի մեջ հնչում էր
նունոյի ձայնը, ավելի բարձր, ազատ: Նրա թիկունքում մեղ-
մորեն լուսավորված պատուհանից, ասեղնազործ սպիտակ
վարագույրի միջից, տեղ-տեղ արդեն երևում էին դյուղի
պայծառ-դեղնավուն, մանր ու հեռու կրակները: Նրեկոն
քիչ-քիչ մարում էր թթենու կատարին, լույսամպաշող երկըն-
քում: Նրգում էր նունոն, ձայնը լցվել էր ողջ տունն ու բակը:

Ձեր բաղի դուռը բաց ա,
Յա՛ր, յա՛ր,
Ոտներս շաղով թաց ա,
Յա՛ր, յա՛ր,
Ինձանից հեռացել ես,
Յա՛ր, յա՛ր,
Աչքերըս լիքը լաց ա:
Յա՛ր, յա՛ր,
Յա՛ր, նա նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
Նա նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ...

Հանկարծ նունոն անսպասելի ընդհատեց երգը, բիրարի
շարանը գցեց ծնկների վրա, գլուխը թուլացած կախեց կրծ-
քին, լոեց:

— Էդ ի՞նչ պատահեց, բալա ջան, — անհանգիստ ու կա-
րեկցաբար հարցրեց Սոնա տատին, բարձրացրեց նունոյի
խոշոր, տխուր աչքերով գլուխը, նայեց երեսին. — արևը հո-
շի՞ խփել քեզ: Հո չար աչքով չե՞ն տվել: Թե՞ իմ ոչ ու փուշ
Տիգրանն է նեղացրել քեզ... Ը՛մ, վայ թե՛ ե՞ս, հը՛... ինձա-

նից մի նեղանա: Սիրտդ մի՛ կոտրի, իմ ծաղիկ աչքի լույս: Դե՛, ես պառավել եմ, չե՞ս տեսնում ա՛յ, պառավել եմ:

Նունոն լուռ էր: Սոնա տատին գրկեց նրան, սեղմեց կրծքին, ու այդպես նրանք անխոս ու երկար մնացին նստած մթնող խավարի մեջ:

Դուռն աղմուկով լայն բացվեց ու ներս մտավ Տիգրանը, վառեց էլեկտրական լամպը: Սենյակը լցվեց ադամանդե լույսով: Սոնա տատին ու Նունոն անշարժ, լուռ նայեցին նրան:

— Նանի, հաց բեր ուտելու ու թաղա կոստյումս հանիր, — ասաց Տիգրանը, նստեց սեղանի մոտ, — Նունո, դու էլ հագնվիր ման գալու գնանք:

— Ես չեմ գա, — տխուր պատասխանեց Նունոն:

— Ինչի՞ գա, — խոսքի մեջ խառնվեց Սոնա տատին, — տեսնում ես՝ չի ուզում: Բեզարած է:

— Դե, որ չի ուզում՝ ես մենակ կգնամ:

— Մենակ ո՞ւր պիտի գնաս, — ընթրիքի ամանը սեղանին դնելով արագ հարցրեց Սոնա տատին. — Թաղա ես պսակվել՝ օտար աղջիկների հետ պիտի քա՞շ գաս:

— Չէ, նանի, ես գործ ունեմ, — ժպտաց Տիգրանը ու աչքի պոչով թաքուն նայեց Նունոյին:

— Ի՞նչ գործ ունես: Կարիք չկա՞ մենակ գնաս:

— Ախր Նունոն չի ուզում:

— Նունոն չի ուզում՝ ես կգամ... Հենց գիտես՝ չեմ գա: Կգա՛մ:

Ու Սոնա տատին աղմկով վերջին փսեն դրեց սեղանի վրա, արագ բացեց սնդուկը, հանեց իր տոնական շալը, նստեց ուտերին:

Շուտով, ընթրիքից հետո, Տիգրանը նոր զգեստը հագին, խի Սոնա տատին շրթունքները խստորեն սեղմած իրար, դուրս ելան պատշգամբը: Դռների մեջ Տիգրանը ետ նայեց, տեսավ տխուր նստած Նունոյին, մոտեցավ նրան:

— Չե՞ս գա, դե վեր կաց, Նունո ջան:

Նունոն հայացքը շքարձրացրեց, տխուր օրորեց գլուխը, մերժեց.

— Դու Սեդայի հետ գործ ունես, ես ինչի՞ գամ: Թե որ գամ՝ պիտի քեզ խանդարեմ...

— Դրա՞ համար ես նոթերդ կախել,— Տիգրանը նոր միայն հասկացավ՝ ինչու էր տխրել Նունոն ու քնքշանքով շիտակ նայեց նրան.— անխելք, ո՞նց էլ չես ամաչում: Գիտես ինչ կա, հիմի ես ուզում եմ... Ինձ վաղն անհրաժեշտ է քաղաք գնալ... Քեզ հետո կասեմ... Սեդան ինձ օգնելու է: Չե՞ս հավատում, Նունո:

— Հավատում եմ,— մի փոքր լռելուց հետո, գլուխը կախ, կամաց պատասխանեց նա:

— Դե՛, արի՛, Նունո ջան,— Տիգրանը թեթև դրկեց նրա արմուկները,— վե՛ր կաց: Խեղանք շատ խնդրեց, որ գաս:

— Կա՛մ: Կգամ,— հաշտվելով տեղից բարձրացավ Նունո,— մենակ թե, տես, թող Սեդան քեզ շօղնի, ես ինքս քեզ էօգնեմ:

Ու գնաց շորերը փոխելու:

V.

Լուանկա խաղաղ գիշեր էր: Հեռավոր, լռիկ սարերի վրա, գյուղի պարտեզների ու սպիտակ տնակների վրա իջել էր լուանի ճառագայթներով արծաթազօծված մի նոսր մշուշ, փայլփլուն, թափանցիկ մի շղարշ: Ու արար աշխարհը կարծես սուզվել էր մեղմ ու հեզիկ լույսով հեղեղված պայծառ ու քնքուշ գիշերվա քաղցրության մեջ: Չորակում, խավար ուռիների մոտ, լուանից տեղ-տեղ թույլ պսպղում էր գետի գալաջուն հոսանքը ու գիշերվա սառնորակ քնքուշ հովից ներքևում ծածանվում էին բարդիների կատարները: Չորակի եզրին, քարափի վրա, ընկած էին գյուղական ակումբն ու պարտեզը: Բազմությամբ խռնված, վառվռուն լույսերով փոքրիկ հրապարակում նվազում էին երաժիշտները: Իսկ հրապարակի շուրջը, պտղատու ծառերն իրենց լայն ստվերները փռել էին ավելի խավար թվացող ծառուղիների ու թփերի վրա, ուր տեղ-տեղ հեզիկ լուսավորելով՝ ծառերի ճյուղերից թափան-

ցել էին լուանի շողերը: Ու մեղմ, օրորուն ծորում էր երա-
ժիշտների նվագը, արձագանքում էր լռիկ հեռուներում ու
հնչուն երկնակամարի տակ, որն ավելի էր մեծացնում պայ-
ծառ գիշերվա հրապույրը:

Բաղմության շրջանի ներսում պարում էր մի աղջիկ,
խշխշան բաց կանաչ շորերով, մերթ հանդարտ շորորվում էր
չքնաղ եղեգնի նման ձգված, ուներն ուղիղ, նուրբ ու ծանր
նազանքով, մերթ կարծես ծածանվում էր հովից, ձեռքերն
ուներից վեր, օդի մեջ փոքրիկ թաշկինակը բռնած, մատները
քնքշորեն կախ, մե'րթ դալարում էր մեջքը, մերթ հանդարտ
սահում էր նազանքով, գլուխը կարծես մազերի ծանրությու-
նից մի փոքր ետ պահած, աչքերը կախ:

Նվագախմբի մոտ, կարմիր ծածկոցով փոքրիկ սեղանի
առջև նստած էին Խեչանն ու Միքայելը: Աղջկա պարով հիա-
ցած դանդաղ ծափ էր տալիս Խեչանը, երբեմն-երբեմն ան-
խոս ու թեթև նայում էր Միքայելին, գոհ ու հպարտ:

Բաղմության մեջ, գնդաձև լուսամփոփներով սյան տակ
կանգնել էր Նազիկը, հռհռոցը շուրթերի տակ զսպած, աչքե-
րը կախ՝ նայում էր մատներին և թաշկինակի հետ խաղում:
Պայծառ լույսով հեղեղված նրա փափուկ, գանգուր մազերին
շողշողում էր աղեղնաձև կապած արծաթավուն մի թել: Նրա
կողքը կանգնած էր Սեդան: Նա հագել էր վարդագույն գեղե-
ցիկ շրջազգեստ, որի մեջ կարծես ավելի էր բացվել—գեղեց-
կացել: Ու արդեն գրեթե սպառված համբերատարությամբ,
բայց մտերմական զայրույթով նա խոսում, կռվում, համո-
զում էր Նազիկին:

— Մի' վիճիր, էլ մի' վիճիր, Նազի'կ, ասա', երգելո՞ւ
ես: Ինչո՞ւ չես ուզում: Պիտի երգես: Միքայելից մի ամաչիր,
հետո ի՞նչ թե օտար է: Ախր նա հատկապես ձեզ լսելու հա-
մար է եկել: Դե' ասա, երգելո՞ւ ես:

— Չեմ ուզում: Ես չեմ երգի,— ավելի ամոթահար խույս
տալով՝ նա օրորեց գլուխը, աչքերն ամուր փակեց, կամաց
հռհռաց, հրաժարվեց, ապա մի ուրիշ, կարծես փոխված ձայ-
նով ասաց, կամենալով խայթել նրան. — Նունոն ինձանից

լավ է երգում, թող նունոն երգի, Տիգրանը չի նեղանա, նունոյին շատ է սիրում:

Նազիկը կարմրեց, շիկնեց. «Կերար, դե՛ դնա... Տիգրանին էլ չի մոտենա: Նունոն թե իմանա՝ ո՛նց է ուրախանալու», — մտածեց ու փախավ՝ դնաց:

Բազմության մյուս կողմում կանգնած էին նունոն ու Սոնա տատին: Նրանք նույնպես հետևում էին աղջկա պարին: Իսկ Տիգրանն անհանգիստ ու նունոյից թաքուն նայում էր Սեդային:

Աղջիկն արդեն ավարտում էր պարը: Ժպտալով նա հայացքը պտտեցնում էր բոլորի վրա, արդյոք ո՛ւմ հրավիրի պարելու: Սեդան գլխի շարժումով կանչեց նրան: Պարելով մոտեցավ աղջիկը. Սեդան աչքով ցույց տվեց Տիգրանին: Աղջիկը հեռացավ, հրավիրեց Տիգրանին:

Չնայած որ Տիգրանը եկել էր ուղղակի պարելու մտադրությամբ, բայց այնպես շփոթվեց, կարմրեց, անակնկալի գալով՝ սկսեց վարանել: Ինչ պարող է ինքը, մի՞թե անհարմար չէ, մտածում էր նա, եթե հանկարծ ծիծաղեն, ապա գյուղում երկար ժամանակ կարող է չմոռացվել, իսկ դրանից ինքը ճնշվելու է բոլորի, նույնիսկ նունոյի հանդեպ: Նա անզգույշ ետ քաշվեց կպավ նունոյին: Բոլորը նկատեցին, ավելի շփոթվեց: Իսկ աղջիկը համառորեն չէր հեռանում, շարունակում էր հրավիրել, բազմությունը կանչում էր ուրախ աղմուկով: Աղմուկի ու ծափերի մեջ Տիգրանը նկատեց Սեդային, նա անհանգիստ նշաններ էր անում, նույնպես ստիպում էր պարել: Ու հանկարծ նրան հրեցին բազմության կենտրոնը: Վերջապես սկսեց պարել: Աղջիկը շուտով թողեց պարը, ճակատին կախված մազերի փունջը թեթև ուղղելով հեռացավ, խառնվեց բազմությանը:

Նունոն ու Սոնա տատին ժպտալով նայում էին Տիգրանին: Բայց խեղանը գոհ չէր: Սեդան նկատեց և ամեն կերպ աշխատեց գովել Տիգրանին, տրամադրել, համոզել Միքայելին:

— Կա՛վ է պարում... ինչպիսի՜ տեմպերամենտ... Եվ

առաջին բրիգադիրն է շրջանում: Դա նույնպես նշանակութ-
ւոյուն ունի: Հրաշալի՛ է:

Խեչանը հոնքերը կախեց, թեք հայացքով անխոս նայեց
Սեդային, նայեց Միքայելին.

— Իհարկե, նշանավոր տրակտորիստ է, բայց որպես
պարող... — նա լռեց ու մի խոստում շարժումով շուրջ մատները,
դուխն օրորեց. «է՛, թողեք, ի՞նչ կա հավանելու»:

— Ինձ էլ է նույնը թվում, — ասաց Միքայելը, ապա
շրջվեց Սեդային, — դու հավանո՞ւմ ես: Միջակ պարող է:
Նվ առանձնապես...

Սեդան թեքվեց Միքայելին ու թաքուն կշտամբելով դայ-
քացած շնչաց ախանջին.

— Քո մեջ, Միքայել՛, հասկանում եմ, խոսում է խանդը,
այդ անասնական սարսափելի զգացումը, ես այդ հասկանում
եմ... Աշխատիր անկողմնապահ լինել: Եթե Տիգրանին չգրես,
նշանակում է... — Սեդան մի վայրկյան լռեց, ծափերի աղմու-
կից նայեց Տիգրանին, որն արդեն ավարտել էր իր պարը,
նորից նայեց Միքայելին ու մի անխոս բռնությամբ պա-
հանջկոտ ձգեց նրա թևքը:

Միքայելը թեթև վիրավորվեց, այլևս չկարողացավ դի-
մադրել, իր անկողմնապահությունը ցույց տալու համար և
միաժամանակ դժկամորեն ցուցակում ամենավերջինը գրեց
Տիգրանի անունը, ավարտելով օլիմպիադային մասնակցող
տաս հոգու ընտրությունը:

— Գրեցի՞ր նրան, — զարմացած անհանգստացավ Խե-
չանը: — Միկենույն է, ես նրան հիմի չեմ կարող բաց թողնել:
Ջնջի՛ր:

— Իսկ ինչո՞ւ չես կարող... ինչո՞ւ ջնջի, — Սեդան Խեչա-
նի հետ կարծես մենամարտի պատրաստվելով՝ հերթ շտվեց
Միքայելին անգամ մի բառ ասելու:

Վեճի հենց այդ պահին Տիգրանը մոտեցավ նրանց: Խե-
չանն աշխատեց նրա աչքից ձեռքով թաքուն ծածկել Միքա-
յելի ցուցակը: Զարմանալով Խեչանի այդ անհանգիստ շար-
ժումից, Տիգրանը հետաքրքրությունից հեռացրեց նրա ձեռ-
քը և ցուցակում տեսավ իր անունը:

— Էդ ի՞նչի գրեցիք անունս,— հարցրեց Տիգրանը, ձե-
վացնելով իբր ոչնչից տեղյակ չէ:

— Վաղը քաղաք եք գնալու, օլիմպիադայի—տատան-
վելով ու անվստահ պատասխանեց Միքայելը, ապա թուցիկ
կերպով նայեց Սեդային:

— Է՛հ, չէ՛...— անհանգստացավ Խեչանը:

— Համբերի, Խեչան, քո հարցը ջոկ է, վաղը կխոսենք,—
Սեդան ընդհատեց նրան, թույլ չտալով որ դաշրույթը թափի,
բռնեց Տիգրանի ձեռքը, քաշ տվեց իր հետևից.— դե՛, ե՛կ,
մենք պետք է առանձին խոսենք:

Ու խավար ծառուղով նրանք հեռացան, դնացին աշխույժ
խոսելով: Նունոն նկատեց, սիրտը հանկարծ թրթռաց, ան-
հանգիստ, շփոթված հայացքով հետևեց նրանց:

Խեչանը մոտեցավ Նունոյին:

— Հիմի, Նունո, դու պիտի երգես:

— Է՛հ, չէ՛...— անհանգստացավ Սոնա տատին,— մեր
Նունոն երգել չի իմանում: Չի կարա: Խալխի առաջ իմ հար-
սը չի երգում: Ամոթը ջուրը չի գցել...

— Համբերի՛ր, Սոնա, քո հարցն էլ է ջոկ, վաղը կխո-
սենք,— Խեչանը ընդհատեց նրան, բռնեց Նունոյի ձեռքը քաշ
տվեց իր հետևից:

Խեչանի հետևից դանդաղ քայլում էր Նունոն, սրտի մեջ
մի դառը, անասելի վիշտ պահած, քայլում էր ինչպես երա-
զում, դեռ ուշքի չեկած ու հազիվ կարողանում էր հասկանալ՝
ուր և ինչու են տանում իրեն: Երեսը շրջել և ուսի վրայից
նայում էր ետ, նայում էր տխուր հայացքն առաջվա նման
դեպի հեռացող Սեդայի ու Տիգրանի կողմն ուղղած, որ դեռ
խավար երևում էին խավար թիւերի մոտ:

Խեչանի ու Նունոյի հետևից անհանգիստ թխսամոր
նման վազում էր Սոնա տատին: Խեչանը Նունոյին հասցրեց
բազմության կենտրոնը, բաց թողեց նրան, բռնեց Սոնա տա-
տի ձեռքը՝ տարավ իր նախկին տեղը, Միքայելի մոտ:

Քարացած կանգնել էր Նունոն, հայացքը նորից Սեդայի
ու Տիգրանի կողմն ուղղած: Նրանք շուտով անհետացան մութ

ծառուղու ոլորտում, թիերի հետևը: Նունոն աչքից կորցրեց
նրանց, հանկարծ կարծես ուշքի գալով նայեց շուրջը և նոր
միայն զգաց, որ արդեն կանգնած է բաղմոթյան կենտրո-
նում: Նրա երկար լռությանն ամենքին թվաց որպես հան-
կարծակի շփոթմունքի ու ամոթխածության նշան: Նա կանգ-
նած էր շփոթված, հուզված, ծանր բարախում էր սիրտը և
նրան թվում էր, թե ամենքն ահա մտերմորեն ու անհոգ,
ուրախ նայում են ու սպասում, որ երգի, բայց ինչո՞ւ, ինչո՞ւ
չեն հասկանում իրեն: Նա ուղեց վշտից հանկարծ փղձկալ,
փախչել բոլորից հեռու, մենակ ու երկար լաց լինել, բայց
տիրապետեց իրեն, հանկարծ լսեց Սաղաթելի ձայնը, հա-
յացքը կամաց շրջեց նվագախմբի կողմը: Իր փոքրիկ ձողը
դեմքի մոտ երկու ձեռքով թեք բռնած, նվագախմբի առջև
կանգնել էր Սաղաթելը, ոլործուն սև դանդուրներով գլուխն
ուսերի մեջ քաշած:

— Երգի՛ր, Նունո, մի՛ ամաչիր: Կուգես «Կապույտ մա-
նուշակ» նվագեմ, «Ալադյազ բարձր սար ա», «Քելե, քելե»,
ինչ ուղես՝ կարող եմ, կուգես՝ «Դարդս լացեք»:

Նունոն թույլ ժպտաց, հազիվ շարժեց գլուխը: Սաղաթելն
արագ շրջվեց, երաժիշտները նվագեցին: Նունոն մեղմիկ ու
տխուր սկսեց երգել.

Դա՛րդս լացեք, սարի սըմբուլ,
Ալվան-ալվան ծաղիկներ,
Դարդըս լացեք, բաղի բլլբո՛ւլ
Ամպշող երկնուց զով-հովեր...

Քարացած, հիացած լսում էին բոլորը: Լսում էին՝ Խեչա-
նը, Միքայելը, արցունքոտ աչքերով Սոնա տատին:

Երկինք-գետինք գլուխս մթնան,
Անտուն-անտեր կուլամ ես.
Յարիս- տարա՛ն, ջանիս-տարա՛ն,
Հոնքո՛ւր-հոնքո՛ւր կուլամ ես...

Հեռավոր մի ծառուղու անկյունում, խավար ու վիթխարի ընկուղենու տակ, փայտե նստարանի վրա անխոս նստել էին ծերունի բժիշկն ու տիկին Սաթենիկը։ Ականջները լարած, նրանք նույնպես լսում էին Նունոյին, որի ձայնը հեռվից քնքշորեն կարկաչում էր մեղմ, հազիվ լսելի։ Նրանց մոտից լուանի շողերի միջով անցան Սեդան ու Տիգրանը։ Աղջիկն օդի մեջ մատները շարժելով՝ ձեռքը թափահարեց ծնողների, ժպտաց։ Ու թեքվեցին նրանք անցան մի ուրիշ ծառուղի։

— Նունո՞յի ամուսնու հետ,— բավականաչափ վախեցած, անհանդիստ շնչաց ամուսնուն տիկին Սաթենիկը, իր կլորիկ աչքերը լայն բացած՝ ուղեկցելով նրանց ու քիչ հետո սրբանեղած շարունակեց,— այդ արդեն անհարմար է։ Պետք է զգուշացնել մեր Սեդային։

— Է՛, սիրելիս, իմանալով քո աղջկա բնավորությունը, ես անձամբ սիրտ չեմ անի։ Հանձն չեմ առնի։

— Տե՛ս, մի տե՛ս, ինչ քաղցր է խոսում հետը...

— Դու հիմար ես, Տիգրան, խելք չունես, չնեղանաս խնդրեմ,— ասաց Սեդան,— դու ուղղակի դիմիր դպրոցի պետին, ասա՝ եկել եմ գյուղից, խնդրում եմ բացառություն անեք։

— Իսկ եթե չանի՞,— հարցրեց Տիգրանը։

— Նորից հիմար ես։ Պետք է համոզել,— Սեդան հանկարծ մի պահ լռեց, շրջվելով նայեց ետ, բազմության կողմը, հիացած ականջ դրեց.— ինչ լավ է երգում Նունոն։ Հրաշալի աղջիկ է։ Դու բախտավոր ես, Տիգրան։

Ա՛խ, յարս ինձի հանեց սրբտեն,

Անճար թողեց ու գնաց.

Սրբտիս սավդեն-խորունկ յարեն

Անդեղ թողեց ու գնաց։

Դարդըս լացեք, սարի սըմբուլ,

Ալվան-ալվան ծաղիկներ...

Սոնա տատին արդեն իր բարկությունը մոռացած, բազմության կենտրոնում ուրախ կանգնած էր Նունոյի կողքը

ձեռքը թեթևորեն նրա թիկունքին փաթաթած: Անշարժ կանգնել էր Նունոն, աչքերը կախ: Բազմության ծափերին պատասխանում էր Սոնա տատին՝ գոհ ու հպարտ, խորունկ երջանկությամբ գլուխն աջ ու ձախ տմբտմբացնելով:

Միքայելն իր ցուցակի ամենասկզբում խոշոր տառերով գրեց Նունոյի անունը:

— Տասնմեկ հոգի դարձավ, մեկն ավել է,— Միքայելը գիմեց խեղանին, — հարկավոր է մեկին ջնջել, տասը հոգի մնա, որ գնա Նունոն:

— Ո՞ւր պիտի գնա, — անհանգստացավ Սոնա տատին:

— Քաղաք պիտի գնա, Սոնա, համբերի, — ասաց խեղանը: — Միքայել, դու Տիգրանին ջնջիր, մնացածը կարգին կլինի: Ես էդպես էլ գիտեի: Նունոյին պահել էի վերջում:

Սոնա տատին թողեց Նունոյին ու արագ հեռացավ:

— Այո, ինձ էլ է նույնը թվում, այդպես ճիշտ կլինի, — համաձայնեց Միքայելն ու Տիգրանի անունը ջնջեց ցուցակից:

Սեդան ու Տիգրանը վաղուց արդեն վերադարձել կանգնել էին բոլորակ կազմած բազմության մեջ: Սոնա տատին արագ մոտեցավ նրանց, անշափ հուզված ասաց որդուն.

— Նունոյին քաղաք են տանում: Արի՛:

— Ոչինչ, նախի, ես էլ եմ գնալու:

— Դու չես գնա: Քո տեղակ Նունոյին գրեցին, քեզ էլ ջնջեց խեղանը:

Իրար երեսի հարցական նայելուց հետո, նախ Տիգրանը, ապա Սեդան այնպես արագ հեռացան, որ Սոնա տատին մի փոքր շփոթվեց, նույնիսկ շփորձեց հասնել նրանց:

Սոնա տատին բարձրացավ ոտքի թաթերին, երկարեց վիզը, ուղեց մարդկանց ուսերի վրայից նայել շրջանի ներսը, արդյոք չի՞ երևում Նունոն: Բայց նրա ջանքերն իզուր էին, այնքան կարճ էր հասակը, որ խանգարում էր որևէ բան տեսնել: Այլևս չհամբերեց Սոնա տատին, իր փոքրիկ բռունցքով բարկացած ծեծեց առջևում կանգնածի թիկունքը, ինչպես

տագնապով սովորաբար թակում են փակ դուռը և անհանգիստ հարցրեց.

— Մեր նունոն էդտեղ չի՞: Տիգրանին շտեսա՞ք:

Բայց ծափերի աղմուկի մեջ ոչ-ոք չլսեց, չպատասխանեց նրան: Ինչո՞ւ չեն լսում, տեսնես ի՞նչ է կատարվում այնտեղ, ավելի անհանգստացավ, հետաքրքրվեց Սոնա տատին, ապա սրան ու նրան հրելով անցավ առաջ, շրջանի կենտրոնում տեսավ Միքայելին:

— ...Այս ընկերները, որոնց անունները կարդացի ես, վաղը, ուրեմն մեկնելու են քաղաք, օլիմպիադայի, — Միքայելն ավարտեց իր խոսքը:

Նորից որոտաց նվագախումբը: Բազմությունը ցրիվ եկավ: Առանձին խմբերով ոմանք բարձր-բարձր խոսում, իրենց տպավորությունն ու հիացմունքն էին հայտնում, ոմանք՝ վիճում էին օլիմպիադայի գնացողների մասին: Բազմության հոսանքը գնում էր դեպի այգու դուռը, իր հետ քշելով նաև՝ կարծես գետն ընկած Սոնա տատին: Բայց նա Հիգեր թափելով դիմադրում էր, մեկ այս, մեկ այն կողմը կարծես մղկտալով որոնում էր, խոսում, հարցնում ամենքին.

— Մեր Տիգրանին շտեսա՞ք... Նունոյին շտեսա՞ք...

Երբեմն-երբեմն նրան ցույց էին տալիս միշտ հակառակ, միշտ տարբեր կողմեր: Վերջապես երևաց Տիգրանը: Նա գալիս էր Սեդայի հետ:

— Ես չեմ կարող, Սեդա, — Սոնա տատին լսեց Տիգրանի ձայնը, — խնդրում եմ ի՛նքդ ասա, խոսի՛ր:

— Լավ, որ չես կարող՝ ես կխոսեմ Միքայելի հետ: Խեղանի հետ էլ կխոսեմ, — խոստացավ Սեդան:

— Տիգրան, նունոն ո՞ւր է, ի՞նչ էլավ, — հարցրեց Սոնա տատին:

— Գալիս եմ, նանի, համբերի՛ր, — անփուլթ պատասխանեց Տիգրանը, արդյոք լա՞վ չլսեց, թե՞ չհասկացավ մորը:

Բայց Սոնա տատին չհամբերեց, մոտեցավ, անխոս բռնեց նրա թևը, քաշ տալով բաժանեց Սեդայից: Եվ հենց այդ պահին, հեռվում, Սոնա տատին նկատեց, — մի՞թե նու-

ևոն է: Չէ՛, մութ էր, խաբւեց: Բայց ոնց-որ նունոն լինի: Նա
գալիս էր Միքայելի հետ: Սոնա տատի աչքերը մթնեցին: Չէ՛,
չէ՛, նա է, նունոն է:

Մտերմորեն խոսում էր Միքայելը, ոգևորված համոզում
էր նրան:

— Չէի սպասում, դուք ուղղակի... ի՛նչ ասեմ, հաճելի է,
լավ եք երգում: Ձեզ հարկավոր է սովորել: Կոնսերվատորիա
է պետք: Ձեզանից, նունո, հրաշալի, տաղանդավոր երգչուհի
դուքս կգա...

— Նունո՛, Տիգրանն էստեղ է, արի,—կանչեց Սոնա տա-
տին:

— Գալիս եմ, նանի, համբերիր,—Միքայելի զրուցում
տարված, թե՛ քաղաքավարությունից չկարողանալով հեռա-
նալ. նույնպես կարծես անփույթ պատասխանեց նունոն:

Թեև արդեն անասելի բարկացել էր Սոնա տատին, սա-
կայն ոչինչ չասաց, Տիգրանի ձեռքից բռնած անխոս մոտե-
ցավ նունոյին ու ամբողջ ուժով նրան հեռացրեց Միքայելից,
անգամ թույլ չտալով, որ իր զրույցն ավարտի: Միքայելն
անսպասելի դեպքից ապշած, շփոթված նայեց նունոյի հետե-
վից: Մի երկու քայլ դնաց Սոնա տատին, կանգ առավ, ուսի
վրայից ծուռ-ծուռ նայեց ետ՝ Միքայելին, շանչեց նրան ու
նորից հեռացավ:

Հուանկա ամայի ու լռիկ փողոցով կողք-կողքի անխոս
քայլում էին Տիգրանն ու նունոն: Նրանք վերադառնում էին
տուն: Նրանց հետևից, մի քանի քայլ ետ, թխսամոր նման քայ-
լում էր Սոնա տատին՝ նույնպես անխոս, բարկացած, զայ-
րույթից գլուխն անշարժ, մի փոքր բարձր պահած: Զայրա-
ցած էր նաև Տիգրանը: Նա ամբողջ ճանապարհին լուռ էր,
անգամ չէր նայում նունոյին: Վերջապես բավական երկար
այդպես քայլելուց հետո շհամբերեց, երեսը կիսով չափ շր-
ջեց նունոյին, սրտնեղած ասաց.

— Լավ ես օգնում ինձ...

— Ես մեղք չունեմ, թե ուղում ես Խեչանի հետ կխոս-
եմ... դու գնա,—կամաց պատասխանեց նունոն:

— Պետք չի: Դու լավ կանես, որ էլ չօգնես ինձ:

Վիրավորվեց նունոն, լռեց: Ու նորից այդպես անխոս,
իրարից արդեն խիստ նեղացած, քայլում էին նրանք: Իսկ
նրանց հետևից՝ գնում էր Սոնա տատին:

VI

Արհեստանոցն քնկած էր ձորակում, գյուղի ներքևը, գե-
տափին: Բակի մի կողմում աճել էին վիթխարի ու ծեր ուռի-
ները, իսկ ուռիների տակով հոսում էր ծանծաղուտ գետը:

Արևոտ զով առավոտ էր: Բակում ամենքը զբաղված էին
աշխատանքով: Սիմոնը, որի տրակտորը երեկ, ամենահան-
դիսավոր պահին խափանվել էր, կարգի էր բերում նրա
քանդված մասերը, որոնք գետնի վրա թափված էին շուրջը:
Քիչ հեռու, եռոտանու վրա դրած գրատախտակին լեռներ
խնամքով գծագրում էր տրակտորի սխեման: Նունոն լուռ
հետևում էր նրան: Մի երկու աստիճան ցածրացող ու ծխով
լցված արհեստանոցի խորքում, դռան փոքրիկ քառակուսու
միջից երբեմն-երբեմն երևում էր Նազիկը, մուգ բոցով քու-
րայի մոտ: Բակի մի անկյունում, ուռիների տակ կապված էր
Խեչանի ձին: Արևի շողերը գետի մեջ բեկվելով մանր քնքուշ
լույսով արտացոլվել էին ուռիների վրա, ձիու կրծքին, շող-
շողում էին ասպանդակները, և թվում էր, ջրի հոսանքի հետ
թրթռալով, անվերջ սահում էին ցոլքերը: Ջիււ ալանջների
մոտ, օդի մեջ լողում էին կանաչ-կապտավուն պիծակները:

Տիգրանի հետ վիճելով Խեչանը կանգնեց բակի կենտրո-
նում: Նունոն հետաքրքրությամբ, անհանդիստ նայեց նրան:
Նազիկն արագ դուրս եկավ, կանգնեց շեմի վրա: Սիմոնը
նույնպես կիսատ թողեց գործը: Լեռներ շփոթված նայեց գրա-
տախտակի հետևից: Խեչանը հանեց իր մեծ, գրեթե պայտի
շափ ժամացույցը, որի նմանը սովորաբար ունենում են եր-
կաթուղու կոնդուկտորները, նայեց ժամացույցին, զայրացավ:

— Կես ժամ է վիճում ես: Գոնե իմանամ՝ ի՞նչ ես ուզում,
ի՞նչ ունես քաղաքում: Ի՞նչ էլ ասես, չեմ կարող թողնել: Փո-
խարինող շունես: Գործ շատ կա:

— Ունեմ, իմ բրիգադից կարող են:

— Ինչի՞ ճիշտը չես խոսում: Ինչի՞ ես վիճում,— ու հանկարծ, բազի մի անկյունում նկատեց Սիմոնի տրակտորը, մտրակը պարզելով ցույց տվեց, հայացքը շեռացնելով Տիգրանից,— դու տրակտորը քսանհինգ թռակում ես հավաքում, ուրիշ ո՞վ է կարող:

— Կարո՞ղ են:

— Քսանհինգ թռակում: Կասկածում եմ:

Տիգրանը լռեց, մի փոքր շփոթվեց, իհարկե դժվար էր պնդել, թե իր բրիգադից ուրիշ որևէ մեկը կկարողանա կատարել այդ: Խեղանը շարունակեց քայլել, մտավ արհեստանոցը: Տիգրանը մի պահ մնաց շփարած, անշարժ կանգնած, նայեց նրա հետևից, ապա արագ քայլեց, հասավ նրան:

Նունոն մոտեցավ Սիմոնին:

— Շուտ արա, հավաքիր, ինքս քեզ կօգնեմ... Թող տեսնի Խեղանը,— տազնապով, թաքուն ասաց նա ցածր ձայնով և արագ սկսեց հավաքել տրակտորը:

Նազիկը տեսավ, վազեց նրանց օգնելու:

Խեղանն արհեստանոցից դուրս եկավ Տիգրանի հետ, անխոս քայլեց դեպի ուռիները:

— Ինչի՞ ես խնդրում, մի՛ խնդրիր, ինքդ գիտես՝ չեմ կարող: Էս տարի Մորուտի խոպանը պիտի վարենք,— ասաց Խեղանը, արդեն ուռիների տակ, ձիու փորկապներն ամրացնելով, հետո սանձը քանդեց ծառից, գցեց թևն ու հանեց ժամացույցը:— Քեզ հետ նորից քսան թռակ կորցրի: Գնա բանիդ: Ինչի՞ ես պարապ ուստոստում: Մի ամսից՝ կմտածենք:

— Ինչի՞ մի ամսից: Ա՛յ, Սիմոնը էս քսան թռակում հավաքեց տրակտորը: Տե՛ս:

Խեղանը շուտ եկավ, տեսավ բազի միջով դեպի իրենց մոտեցող տրակտորը, որի վրա հպարտ նստած էր Սիմոնը: Խեղանը շահավատաց աչքերին, նայեց բազի այն կողմը, ուր քիչ առաջ քանդված մասերով կանգնած էր տրակտորը: Իրոք, նրա տեղը դատարկ էր արդեն: Այլևս ոչ մի կասկած չմնաց:

Խեչանն աչքի պոչով նայեց Սիմոնին, անխոս շուռ եկավ, կարծես պարտված դնաց սանձը թեր դցած, ձին հետևից քաշ տալով։ Տիգրանը հետևեց նրան։ Նունոն մերադարձավ Լևոնի մոտ։ Մտածկոտ կանգնել էր նա, դժվարանում էր ավարտել սխեման։ Նունոն արագ վերցրեց կավիճը, սկսեց թաքուն նկարել, օգնել Լևոնին։

— Ինչի՞ ես վիճում։ Ախր ինչի՞ ես ինձ հետ միշտ վիճում,— նորից բարկացավ Խեչանը, թեպետ Տիգրանը այլևս ոչ մի խոսք չէր ասել նրան և միայն անխոս քայլում էր կողքից։

— Իմ տղաներն աճել են, Խեչան, չես նկատում, դրա համար էլ վիճում եմ։

— Կա՞վ, տեսա, հավաքեց քսան ըռպեում,— կարծես հաշտվելով ասաց Խեչանը,— բա հե՞շտ է խոպան վարելը, չեն կարող, կդժվարանան,— ու կռացավ, մտրակի պոչով գետնին ինչ-որ արագ գծեց, դրեց,— տրակտորով պիտի էնպեռ վարես, ոնց որ թղթի վրա, ա՛յ, էսպես գրես։

— Կարող են։ Հավատա։

— Կարո՞ղ են։

— Հա՛։

Խեչանն ուզեց ինչ-որ ասել, բայց չհասցրեց, արագ քաշվեց մի կողմ՝ ճանապարհ տալով առջևից անցնող տրակտորին, որի վրա նստած էր Նազիկը։ Խեչանը նայեց տրակտորի հետևից։ Բակի կենտրոնում շրջագծեր կազմելով արագ պտտվեց տրակտորը, հետևից կախված երկաթե կեռով գետնի վրա խոշոր տառերով գրեց «ՀԱ»։ Դրեց ու հեռացավ շխշխկոցով։

— Իրենց քշելը քիչ է, մի՛ վիճիր,— ճանապարհը փոխելով Խեչանը շրջվեց ետ, աշխատեց հեռանալ Տիգրանից,— ո՞վ է թեորիա իմանում, ո՞վ կարող է չերտյոժ նկարել, փչացած մասերը սարքել, որ գործը չկանգնի...

Ու Լևոնի մոտով անցնելիս, աչքն ընկավ եռոտանուն, կանգ առավ, լռեց, եռոտանու վրա տեսավ գեղեցիկ ու հմուտ գծագրված տրակտորի սխեման։ Լևոնն արդեն ավարտում էր

վերջին շտրիխը: Նրա մոտ կանգնած էր Նունոն: Խեղանք
կռացավ, ուշադիր դիտեց, ապա զարմացած նայեց Լևոնին և
ոչինչ չասաց: Հանկարծ մեկը բարձր ձայնով կանչեց իրեն,
շուռ եկավ՝ տեսավ Սեդային: Արագ, շտապելուց հեռավ,
շառադունած մոտեցավ Սեդան, կարկուտի պես թափելով
խոսքերը:

— Խեղան, ես հենց հիմա գալիս եմ Միքայելի մոտից...
Ուզում եմ քեզ հետ խոսել: Ո՞վ ասաց, թե Միքայելը ցուցա-
կից հանել է Տիգրանին: Ցուցական ինքս իմ աչքով տեսա:
Տիգրանը կա ցուցակում, և Միքայելը շատ է ուզում, պա-
հանջում է, որ նա նույնպես գնա... Դու պետք է թույլ տաս:
Իրավունք չունես արգելելու...

Խեղանը խորամանկորեն նայեց նրան, ժպտաց, երկու
ձեռքը սկսեց դանդաղ բարձրացնել ուսերից վեր:

— Անձնատուր եմ, հաղթեցիք, թող գնա, պրծա՞նք,—
աշխատեց ընդհատել Սեդային, հետո արագ հանեց ժամա-
ցույցը,—է՛հ, ձեզ հետ արդեն մի ժամ կորցրի: Ուշանում եմ:

Ու իր տարիքի համար զարմանալի ճարակությամբ ցատ-
կեց ձիու վրա, խթանեց, ապա ձին քշելով՝ նրա վրա ետ
թեքվեց, ձեռքով հենվեց գավակին:

— Գնա՛ ավանս ստացիր,—ասաց Տիգրանին ու անցավ
գետը, հետո բարձրացավ դարավանդի կեռման ճանապար-
հով, գնաց դեպի դաշտերը: Իսկ նժույգի առջևից վազում էր
քուռակը:

Երբ Խեղանը դեռ գետը չէր անցել, բոլորն ուրախ շրջա-
պատեցին Սեդային: Բայց նրանց մեջ չկար Նունոն: Ամեն-
քից հեռու նա կանգնել էր դռան շեմի վրա՝ մենակ ու լռիկ:

— Սեդա՛, շնորհակալ եմ...—մտերմորեն ու անսահման
ուրախությամբ ասաց Տիգրանը, ափերի մեջ հրճվանքով սեղ-
մեց նրա ձեռքը:

Նունոն նրա խոսքերից ինչ-որ ծանր, խորունկ մի ցավ
զգաց, վիրավորանք ու ամոթ, ավելի ճնշվեց, այլևս չկարո-
ղացավ տիրապետել իրեն, աչքերը լցվեցին արցունքով, սա-
կայն հպարտությամբ աշխատեց ամենքից թաքցնել: Նա
արագ շուռ եկավ՝ մտավ արհեստանոց, կանգնեց սյան հե-

տւր, որ շտեման են իրեն, և շնչահեղձ, լռիկ հեկեկաց, հայացքն անորոշ, տխուր հառած. նրա արցունքները փոքրիկ ընդհատումներով գլորվում էին վառվող այտերի վրա: Իսկ դուրսը, բակը լցվել էր Սեդայի կարկաշուն ձայնով: Նա ձեռքն ազատելով Տիգրանից, շարաճճիորեն վեր քաշեց հոնքերը, ծիծաղելով ասաց.

— Դու կարծում էիր, ի՛նչ է, Միքայելը քեզ դե՞մ է լինելու: Վախենում էիր միայն Նունոյին տանի... Միքայելը շատ է հավանել Նունոյին: Չէ՛, չէ՛, կատակ եմ անում: Նա հրաշալի ընկեր է:

— Սեդա, Միքայելին ասա, շնորհակալ եմ և իրենից: Չէ՛, ես կասեմ,—ասաց Տիգրանը, հայացքը հեռացրեց Սեդայից, նայեց ընկերներին, սեղմեց բոլորի ձեռքը,—ձեզանից էլ շնորհակալ եմ, փրկեցիք ինձ, ո՛նց փրկեցիք:

Տիգրանի խոսքերից լեռներ շփոթվեց, կարմրեց ամոթից, նայեց Նունոյի կողմը, բայց նա արդեն չկար: Տիգրանը ոչինչ չհասկացավ: Լեռնն ուղեց ամեն ինչ պատմել, թե ինչպես Նունոն օգնեց իրեն, օգնեց մյուսներին, բայց Սեդայի ներկայությունից ճնշվեց, հուզմունքից չկարողացավ խոսել, ավելի կարմրեց, ապա անխոս շուռ եկավ ու գնաց:

— Շատ է փոքր, որ գովում ես՝ ամաչում է, բայց մի տես, է՛, ո՛նց է սովորել,—ասաց Տիգրանը Սեդային, ցույց տալով նրա գծագրությունը,—շուտով քննություն կտա: Բրիգադիր է դառնալու: Իսկ Սիմոնը քսան բռակում տրակտորը հավաքեց: Ինձ էլ գերազանցեց:

Սեդան նորից ժպտաց, նայեց Սիմոնին: Սիմոնը նույնպես լռեց, խորամանկ հայացքով փնտրեց Նունոյին, այնպես, որ Սեդան հասկանա: Բայց Նազիկը չհամբերեց, խառնվեց խոսակցությանը՝ թե Նունոն էլ ետ չի մնում, բայց Տիգրանը չի տեսնում, չի ուզում գովել:

— Իսկ ո՞ւր է Նունոն,—հարցրեց Սեդան:

— Ներսում կլինի: Նունո՛,—կանչեց Տիգրանը շրջվելով արհեստանոցի կողմը:

Նունոն չկար: Տիգրանը նորից կանչեց, ձայնն ավելի

բարձրացնելով: Շեմի վրա երևաց Նունոն, կարմրած աչքերով, շփոթված: Նրա թիկունքում կանգնել էր Լևոնը:

— Արի՛, Նունո: Իմացա՞ր, դալիս եմ: Թողեց Խեչանը, միասին կզնանք,—Տիգրանը հանկարծ լռեց, մոտեցավ նրան, կամաց ու անհանգիստ հարցրեց,—աչքերդ ինչի՞ են կարմրել:

Նունոն լուռ էր: Նա ոչինչ չկարողանալով պատասխանել, կախեց գլուխը, հուզված ու վիրավորված արագ գնաց, զգալով դեպի իրեն ուղղված Սեդայի ու ընկերների հայացքը: Տիգրանը մի պահ մնաց անշարժ, շվարուն կանգնած, նայեց Նունոյի հետևից: Սեդան նկատելով Նունոյի վիճակը, մոտեցավ Տիգրանին:

— Դու վիրավորե՞լ ես Նունոյին, ի՞նչ ես ասել նրան:

Տիգրանը չպատասխանեց, շտապ գնաց, բակից դուրս թփերի մոտ հասավ Նունոյին, կողքից քայլելով հարցրեց.

— Ի՞նչ պատահեց, Նունո:

Նունոն լուռ էր: Տիգրանը նորից հարցրեց.

— Ինձանի՞ց ես նեղացել:

Նունոն լուռ էր: Տիգրանն ինչ-որ կարծես հիշելով, դժվարությամբ հարցրեց.

— Դու, երեի, նորից Սեդայի համա՞ր ես... Բա ես շնորհակալություն չասեի՞: Ախր, ինձ օգնեց:

Վերջապես երեսը շուռ շտալով, Նունոն խոսեց.

— Ի՞նչ կապ ունի Սեդան, թե՛ կարծում ես՝ նա քեզ օգնեց...

— Չտեսա՞ր: Բա չօգնե՞ց:

— Որ կարծում ես, թող էդպես լինի... Էլ ինչի՞ ես ինձ հետ խոսում,—զսպված վիրավորանքով շարունակեց Նունոն:

— Ինչի՞ եմ խոսում... Տեսնում եմ, Նունո, ես քեզ ձանձրացրել եմ:

— Կավ է, ասես՝ ես եմ քեզ ձանձրացրել,—պատասխանեց Նունոն ու ավելի արագացրեց քայլերը:

Տիգրանը կանգ առավ և, տարակուսված ու դժգոհ, երկար-երկար նայեց հեռացող Նունոյի հետևից, ոչինչ չհասկանալով, իսկ նա գնաց, բարձրացավ դարավանդով, գնաց դպի գյուղ ու երբեք չնայեց հետ:

VII

Վաղուց արդեն Նունոն վերադարձել էր տուն: Նա քաղաք գնալու պատրաստություն էր տեսնում: Պահարանից խառը-խառը հանում, ճամբրուկի մեջ արագ դասավորում էր զգեստները, անխնամ ու անփուլթ: Նրա մոտ անհանգիստ ֆրֆռում էր նազիկը, շուտ-շուտ պատուհանից նայում էր դուրս, կարծես ամեն վայրկյան փորձում էր սարսափից ազատվել՝ փախչել ու հեի-հե շշնջալով՝ զանազան պատվերներ էր տալիս, որ իրեն համար Նունոն բերի քաղաքից:

— Կրունկը թող բարձր լինի, էսքան, էստեղը՝ նախշով, էստեղը՝ էսպես... Շորն էլ՝ էսպեսը կառնես, էստեղը՝ ծալեր, էստեղը՝ էսպես, կամ՝ էսպես... Չէ, ինձ ականջ մի՛ անի, ինքդ որը հավանես, սիրուն լինի, էն էլ՝ կբերես: Ֆիլգիպերսի գուլպա շմռանա: Երկու տակ էլ մարջան, չէ՛, մինը՝ մարգարիտ, մինը՝ մարջան,— ու հանկարծ աչքը պատուհանից ընկավ դուրս,— վա՛յ, Սոնա տատին գալիս է...

— Դալիս է՝ թող գա: Քեզ հո չի՞ ուտի, ինչի՞ վախեցար,— տխուր, անտարբեր ասաց Նունոն, գլուխը չբարձրացրեց, չնայեց նրան:

— Չի ուտի, կխոսի, կռիվ կանի: Դու, ասում է, շատ ես կոտորտվում, պոչդ շատ ես թափ տալիս, ես սկի էլ էդպես չեմ: Էն օրը՝ կամուրջի մոտ տղերքը պատահեցին, միասին ձկանք, տեսա՞մ՝ ամոթանք տվեց, էնպես խոսքեր ասեց, որ չեզուր չի դառնում: Մեր Նունոյի հետ, ասում է, քիչ մանարի,— ապա վաղեց թաքնվեց բաց դռան հետևը, հենվեց պատին, ձգվեց, սպասեց, նորից շշնջաց,— Նունո ջան, ինչ ասի՝ կբերես: Կուզես մատիդ թել կտպեմ. չէ՛, թաշկինակիդ ականջը հանգուստ արա, չես մոռանա:

Երբ Սոնա տատին ներս մտավ, դուռը չծածկեց, նազիկը թաքուն փախավ դուրս, հետո գլուխը նորից արագ կոխեց ներս, նայեց Սոնա տատի հետևից, դեմքը շարաճճիորեն ծամածռելով նմանեցրեց նրան, ապա մատները խոսուն շարժելով վերջին անգամ ինչ-որ բան պատվիրեց Նունոյին ու անծպտուն թաքնվեց, հեռացավ: Սոնա տատին ձեռքերը կրծքին ծալած, տխուր նստեց թախտի վրա, հետաքրքրությամբ ու անխոս հետևելով Նունոյին, մտքում ծայր աստիճան հավանություն չտալով նրա յուրաքանչյուր շարժումին: Նունոն ուշադրություն չդարձնելով, դասավորում էր ճամբրուկը:

— Էդ շորերդ հագնես, դռնդ բաց, խալիսը քեզ պիտի թամաշա անի,— շղիմացավ ու անսպասելիորեն, հանգիստ, փոսեց Սոնա տատին:

— Դռնս չէ, նանի, վիզս: Ինձ թամաշա չեն անի,— թեթև արտնդյաժ պատասխանեց Նունոն:

— Մի հաշիվ է, ամոթ է: Դու հո երեխա աղջիկ չես, Զահել հարսն էդպես շորեր բա կհագնի՞:

Նունոն լռեց:

— Այ, Տիգրանը թե քեզանից բաժանվի...

Նունոն արագ բարձրացրեց գլուխը, ցանկացավ պատասխանել, բայց նորից լռեց:

— ...Ես քեզ եմ, Նունո ջան, խղճում,— մի անկեղծ ու ջերմ կարեկցությամբ Սոնա տատին շարունակեց խոսել, համոզել,— ես միշտ էլ Տիգրանին ասում եմ, կռիվ մի՛ անի, մի՛ նեղացնի Նունոյին: Դու էլ՝ ինչ նա ասի՝ ականջ արա, կնկա ճարը էդպես է: Ես որ հարս գնացի էդպես չէ՞ր: Թե խմանաս ի՞նչ օրեր եմ քաշել, շղիմացա՞: Ո՞ւմ գանգատ գնացի, ապրեցի, յուրա գնացի: Հիմի էլ շատ չեմ ապրի, էգուց կգնամ՝ ես մի բուռ հող կդառնամ. տունը քեզ է մնում, դու էլ ապրի, յուրա գնա: Երեկ դիշեր ինչի՞ կռիվ արիք. մենակ ի՞նչ ունես քաղաքում: Տե՛ս, Տիգրանը թե քեզանից բաժանվի ու հորանցդ տուն գնաս, քեզ ո՛չ ազաբ աղջիկ կասեն, ո՛չ էլ մարդիդ կնիկը: Ամոթ չի՞:

— Ես տեղ էլ չեմ գնա, — պատասխանեց Նունոն, — տունը մեր աշխատանքով է շինված: Կեսը կկտրեմ ու ինձ համար կապրեմ:

— Վո՛ւյ, ինչե՛ր ես խոսում...

— Ինքս կբաժանվեմ նրանից, ի՞նչ է, չե՞մ կարող, — աչքերն արցունքներով լի, հուզմունքից դողդողացող ձայնով մի փոքր բարձրացնելով, մճռական կերպով ասաց Նունոն:

Սոնա տատին կարծես հանկարծ պապանձվեց, փոխվեց բոլորովին, չկարողացավ խոսել, հավաքեց փեշն ու ետ-ետ գնալով՝ մոտեցավ դռանը, արագ նետվեց դուրս:

* * *

Պահեստի բակում, գերաններից շղթաներով կախված մեծ նժարներով կշեռքի մոտ՝ զրուցում էին Տիգրանն ու Սաղաթելը: Նժարներից մեկի վրա դարսված էր ցորենի մի քանի պարկ, իսկ մյուսը՝ դատարկ բարձրացել էր վեր և հազիվ նկատելի ճոճվում էր օդի մեջ: Կշեռքի մյուս կողմում, կանգնած էր պարկերով բեռնված մի ավտո: Ավտոյի տակ, անիվների մոտ պառկած, աշխատում էր շոֆերը: Բակի արևոտ բարդիների վրա զիլ աղմկում էին ճնճղուկները, աշխույժ, տենդոտ իրարանցումով, կտուցները բաց, ու երբեք տիտիկ չէին անում ճյուղերին: Մերթ ընդ մերթ ճնճղուկները կարծես թափվում էին բարդիներից, իջնում էին կշեռքի շուրջը, աղմրկում, թռչկոտում նժարների վրա, ապա նորից թռչում էին, հեռանում: Պահեստից Մացո ապերը կրում էր պարկերը, դարսում կշեռքի վրա: Դանդաղաշարժ, մի քիչ թլվառ, ուժեղ մարդ էր պահեստի պահակ Մացո ապերը: Զրադացի քարի պես կռնակ ուներ, խոշոր դուխ, թափթփուն, փշոտ բեղեր, կարծես կավից շինած հաստ, խոշոր քիթ ու ծխանման կապույտ աչքեր: Պատմում էին, թե Մացո ապերը մութի մեջ անգամ տեսնում է: Ո՞վ գիտե:

— Էսօ՛ր եք գնալու, ժամը քանիսի՞ն, — հարցրեց Սաղաթելը:

— Մի ժամից: Վերջացրու, Սաղաթել, քաշիր ցորենը, ուշանում եմ:

— Էլ ինչի՞ ես տխրել: Ասում ես, Սեդա՞ն քեզ օգնեց: Ո՞նց թողեց խեղանը:

— Հետո կպատմեմ: Հիմա ուշանում եմ:

Մացո ապերը վերջին ջվալը դրեց կշեռքին: Սաղաթելը կշռաքարերը դարսեց նժարի վրա, կշռեց:

— Էս էլ երկու քաշ: Վերջացավ: Տա՛ր, Մացո ապեր: Դե՛, ես գնացի. նվագախումբը հազիվ հավաքեմ,— Սաղաթելը գնաց, փակեց պահեստը, հեռանալիս նայեց շոֆերին, պատվիրեց նրան, որ մինչև դատարկեն պարկերը, մտնի իրենց տուն կլարնետը վերցնի, մյուսներին էլ եթե տեսնի՝ հայտնի, որ հավաքվեն:

— Նվագելո՞ւ ենք: Ինչի՞ առթիվ,— ավտոյի տակ պառկած՝ աշխատանքը շղադարեցնելով, հարցրեց շոֆերը:

— Քաղաք են գնում... խեղանին ես լավ գիտեմ, մինչև կայարան մեզ փչել կտա: Ես գնացի:

Տիգրանն սկսեց նժարի վրայից պարկերը բարձրացնել, օգնել Մացո ապորը: Դարբասից խառնված ներս ընկավ Սոնա տատին:

— Տիգրան, էստե՞ղ ես: Հենց հիմի տուն գնա...

— Ի՞նչ է պատահել, նանի...

— Ա՛յ, գետնի տակովն անցնելի ես, կեծակը թափվեր վրես, էդ բանը շիմանայի Նունոյից... Գնա, թող ինքը քեզ ասի: Ի՞նչ ես մնջվել մնացել կանգնած: Գնա՛ խելքի բեր կնկանդ... Դե՛ գնա, էլի՛:

Տիգրանն օդի մեջ թափ տվեց ձեռքը, շտապ գնաց:

— Կշռե՞լ եք,— հանկարծ փոխված, խաղաղ ձայնով, անուշ ծոր տվեց Սոնա տատին:

Մացո ապերը խուսափող հայացքով գլխով արեց: Սոնա տատին սկսեց ֆրֆռալ կշեռքի շուրջը:

— Դե՛, տա՛ր, տա՛ր, Մացո: Տիգրանը գնաց՝ հիմի քեզ վրա աչք պահող չկա... Դու էնպես կամաց տար, Մացո,— որ մի հատիկ էլ չկորչի, աղաչում եմ: Դե՛, ղոշաղ կաց, էդ ո՞նց

ես վերցնում, Մացո: Ինչի՞ ես ցորենը շաղ տալիս: Տակը էջ ի՞նչ կմնա մեզ, թե քեզ պես տնաքանդը մեր հացը շաղ տա՞վա՞յ, էդ ջվալը մի՞ վերցնի, բերանը լավ չի կապած...

Ու Սոնա տատին ճարակորեն ցատկեց արդեն օդի մեջ բարձրացած պարկերով նժարի վրա: Մացո ապոր ուսից քաշեց յոթը փթանոց ջվալը: Զվալի հետ արջի պես նժարի վրա ընկավ Մացո ապերը: Նրանց ծանրությունից նժարն ամուր կպավ հողին: Իսկ մյուս նժարը, որի վրա դեռ մնում էին խոշոր, ծանր կշռաքարերը, ճոճվելով՝ գետնից բարձրացավ օդի մեջ:

— Վա՛յ, քո մուխը շմարի... Շա՛ռ ես, Սոնա, շա՛ռ,— նժարի վրա ընկած, ոտքերն օդի մեջ թափահարելով ցավից թոնթորաց Մացո ապերը:

— Հը՛, ի՞նչ ասիր, Մացո,— կշեռքից ցատկելով գետին, կռվարար հարցրեց Սոնա տատին:

Այս անգամ, երբ կշեռքից ցատկեց Սոնա տատին, կշռաքարերի ծանրությունից վայրկենապես օդի մեջ բարձրացավ պարկերով նժարը, կշեռքը ցնցվեց, ու թրը՛փ, Մացո ապերը նժարից ընկավ, վախվժելով նայեց Սոնա տատին և ակամա լռեց:

— Դե՛, գնա՛: էդ աստված քո հախիցը եկավ,— կտրուկ ասաց Սոնա տատին,— ինչի՞ ես նեղացնում խեղճ պառավիս: Թամբա՛լ:

VIII

Երբ ներս մտավ Տիգրանը, Նունոն դեռ դասավորում էր զգեստները, բայց արդեն ավելի հոգատար ու խնամքով: Շրջելով երեսը նա ուսի վրայից մի պահ թռուցիկ հայացքով նայեց Տիգրանին, ապա կրկին շարունակեց աշխատանքը:

— Ինչի՞ ես շորերդ հավաքում... Դու ի՞նչ ես ասել նախին,— հարցրեց Տիգրանը:

Նունոն լուռ էր, չպատասխանեց: Նա թերթերունքներն ավելի կախեց, շնայեց նրան:

— Ինչի՞ ես մենակ քո շորերը հավաքում: Ի՞նչ ես ասել նանին, — կրկնեց Տիգրանը:

Նունոն հպարտորեն բարձրացրեց գլուխը: Նրա գեղեցիկ դեմքը դունատ էր, աչքերը վշտով լցված, բայց դարձյալ շնայեց ամուսնուն, սիրտն ուժեղ բաբախեց.

— Ինձանից վաղն արի, Տիգրան... Ես նանին ասել եմ, որ քեզանից կբաժանվեմ:

Տիգրանն աչքերը լայն բացած անիմաստ հայացքով նայեց նրան, կարմրեց, այդ նոր անակնկալն ապշեցրեց նրան, ուղեց ինչ-որ բան ասել, սակայն զսպեց իրեն, միտավորված ինքնասիրությամբ լռեց, անխոս մոտեցավ պահարանին, բարկացած դուրս թափեց իր զգեստները, հետո բերեց մի ուրիշ ճամբրուկ ու զգեստներն արագ սկսեց դասավորել նրան մեջ:

Բակը մտավ ցորենի պարկերով լիքը բեռնված ավտոն: Բարձր պարկերի գագաթին, բարկությունից ուռած-փքված, հպարտ նստել էր Սոնա տատին: Նրանից վախենալով՝ հեռու նստել էր Մացո ապերը: Բակի կենտրոնում ավտոն կանգ առավ: Սոնա տատին բարձրացավ, հանդիսավոր թափ տվեց փեշերը: Բակից արագ դուրս գնաց շոֆերը, ցանկապատի մոտ պատահեց ձիու վրա նստած Խեչանին:

— Ես էլ հենց քեզ էի փնտրում, — ասաց Խեչանը, ձին կանգնեցնելով, — գրասենյակ կգաս: Կայարան ենք գնալու: Չուշանաս:

— Չեմ ուշանա, հիմի կգամ:

— Էդ ո՞ւր:

— Կլարնետս վերցնեմ. բա չե՞նք նվագելու:

Խեչանը ժպտաց, չպատասխանեց, ապա մի փոքր բարձրացավ ասպանդակների վրա, նայեց բակի կողմը, ձայն տվեց Սոնա տատին:

— Սոնա՛, լսո՛ւմ ես, պաշար սարքի ձերոնց համար. քաղաք են գնում, միասին են գնալու... Ասա՛, թող չուշանան, — ու ձին թեքելով դնաց, անցավ ցանկապատի մոտ բուսած կանեփների հետևը:

Սոնա տատին ավտոյի վրա կանգնած օգնում էր Մացո ապորը, զգուշությամբ նրա ուսին շուռ տալով պարկերը։ Մացո ապերը ցորենը կրում էր ներս։ Սոնա տատին չպատասխանեց խեղանին, նրա անսպասելի խոսքերից թուլացավ, երկար նայեց ցանկապատի կողմը, աչքերը մթնեցին, ձեռքերից բաց թողեց յոթ փթանոց ջվալը։ Զվալը գլորվեց Մացո ապոր վրա, ընկավ գետին։

— Վա՛հ, կամաց,— թոնթորաց Մացո ապերը, ցավից վիզը ծռած, մախվիսելով նայեց նրան։

Սոնա տատին իջավ պարկերի վրայից։

— Խփեցի՞ քեզ, Մացո։ Ներող մնա։ Դե՛, մի քիչ նստիր, շունչ քաշի... Ես քեզ կօգնեմ,— ու խորը ճիգ թափելով աշխատեց բարձրացնել յոթ փթանոց ջվալը։

— Թո՛ղ, խնամի Սոնա, թո՛ղ, մի՛ վերցնի,— վախեցած դռնեց Մացո ապերը։

— Չէ՛... դու գնա, Մացո, հանգստացիր,— ուժասպառ, բեկբեկուն ձայնով, հազիվ ասաց Սոնա տատին, մի փոքր բարձրացրեց ջվալը, անմիջապես զիլ ճշաց, ընկավ գետին։ — վա՛ - ա՛խ...

Մացո ապերը սարսափած նայեց նրան, ետ-ետ գնաց, շփոթված վազեց՝ բարձրացավ պատշգամբը, ահաւոր ձայնով թլվատ դողդողաց, Տիգրանին ու Նունոյին կանչելով՝ մտավ ներս։

Բակի կենտրոնում, ջվալի մոտ պառկած էր Սոնա տատին։ Հավերը մոտեցան, սկսեցին կոցահարել ջվալի պատրուկած ականջից թափված ցորենի հատիկները։ Սոնա տատին նկատեց, աչքի պոչով թաքուն նայեց պատշգամբի կողմը, հետո արագ թեքվեց, մի քիչ բարձրացավ, բարկացած քշեց հավերին, շուտով լսեց դռան ճռոցը, նորից ընկավ, փռեց թևերը, աչքերն ուժեղ փակեց, տքտքաց։

Վազելով մոտեցան Տիգրանն ու Նունոն։ Սոնա տատին լացալիումած բարակ ձայնով հարցրեց։

— Եկա՞ք... Ա՛ - ա՛խ, մեռնում եմ, կեսս գնաց... աչ,

բալեք... հիմի քաղաք եք գնում, ինձ թողնում եք՝ մենակ մեռնեմ...

— Մացո՛, բժիշկ, — գոռաց Տիգրանը:

Մացո ապերը նորից խուսափող հայացքով նայեց Սոնա տատին, կարծես մի նոր անախորժություն սպասելով նրանից ու խույս տալով, նապաստակի պես երկյուղով արագ փախավ, գնաց...

Պատշգամբում, ճաղերի մոտ, աշնան դուրեկան արևի տակ նստել էր տիկին Սաթենիկը, բոլե ձեռագործը ծնկներին: Դիմացը՝ լրագիրը ձեռքին, կարդում էր բժիշկը: Հանկարծ պատշգամբի աստիճանները ցնցելով, արագ բարձրացավ Մացո ապերը:

— Տանն ե՞ս, վռազ կանչում են, հոգին փչում է...

Բժիշկն իսկույն ցատկեց տեղից, ժամանակ չկորցնելու համար ոչինչ չհարցրեց, նետեց լրագիրը, արագ մտավ ներս: Վախեցած կանգնել էր տիկին Սաթենիկը, ձեռագործը ոտքերի մոտ ընկած, քարացած աչքերով դունատ նայում էր Մացո ապորը: Շուտով դուռը բացվեց, արագ դուրս եկավ ծերունին՝ գլխարկը ծածկած, դեղորայքի փոքրիկ ճամբրուկը ձեռքին:

— Ո՞վ է մեռնողը: Ի՞նչ է եղել, — աստիճաններից իջնելիս հարցրեց նա:

— Խնամի Սոնան, — արդեն հանգիստ ձայնով, բայց դառնացած, ասաց Մացո ապերը:

— Ը՞մ, Սոնա՞ն, — մեղմ ժպտաց բժիշկը, աստիճանների կեսի վրա կանգ առնելով, — զավակների հետ հո էլի դալմադալ չի՞ արել:

— Քաղաք են գնում, ինքն էլ չի թողնում:

— Ես էդպես էլ գիտեի, — բժիշկը շուտ եկավ ու ճամբրուկը պարզեց կնոջը:

Տիկին Սաթենիկը մի խորը հանգստություն զգալով ծանր շունչ քաշեց, դառնացած օրորեց գլուխը, դժգոհելով Սոնա տատից:

— Գնանք, Դե՛, արի, — ասաց բժիշկը Մացո ապորը:

Երբ բժիշկը եկավ, բակում ծածկի տակ, թախտի վրա պառկած էր Սոնա տատին։ Նրա մոտ շփոթված կանգնել էին Տիգրանն ու Նոնոն։

— Էդ ի՞նչ է պատահել քեզ, Սոնա, — թեքվելով նրան՝ հոգատար ու հանգիստ հարցրեց բժիշկը, թեթևակի ձեռքը բռնելով։

— Ա՛-ա՛խ... ոտքիցս եմ դանդատավոր, ջարդվել է... ջվալի տակն ընկա... Ամաշում եմ ասեմ, բժիշկ ջան, պորտախառնվել է իրար, կտրվել է... Աչքերիս սև ջուր է իջել... Զի՛գա՛րս, ամա՛ն...

— Էստե՛ղդ է ցավում, — զննելով, շոշափելով հարցրեց բժիշկը, — իսկ էստե՛ղ, էստե՛ղ էլ։

Սոնա տատին ցավից շշնջաց, տքտքաց։

— Հա՛-ա՛... Մեռնում եմ... կեսս դնաց։ Սրանց ասա՛ քաղաք շգնան, թող տանը անուշ ապրեն, սիրեն իրար... Թող ինձ գերեզման դնեն, մի բուռ հող գցեն երեսիս... Հրես ձեռքից դնացի... ես իստակ մեռա...

— Չես էլ ապրի, Սոնա, թե տանը մնաս... Դե՛, ուրեմն կտանենք քեզ, Սոնա, հիվանդանոց։ Էնտեղ, Սոնա, քեզ կբուժենք։ Դու էլ, ա՛յ կտեսնես, կառողջանաս, շուտով ոտքի կկանգնես։

— Հիվանդանո՞ց... ինչի՞, — ճշաց Սոնա տատին, — էդ էր պակաս... Չեմ ուզում։ Ես իմ հարկի տակ պիտի մեռնեմ...

Բայց Սոնա տատի բողոքներն իզուր էին։ Վերջապես, Մացո ապերն ու Տիգրանը զգուշությամբ բարձրացրին նրան ու տարան հիվանդանոց։

IX

Գյուղական փոքրիկ հիվանդանոցում երկու մահճակալներից մեկը դատարկ էր, իսկ մյուսի վրա արդեն պառկած էր Սոնա տատին։ Պառավի դեմքին նշմարվում էին ուժեղ ցավի տառապանքներ։ Լաշակների մեջ կապած գլուխը բարձերին

պցած, նա զիլ ու անբնական հառաչանքներով տքտքում էր, բողոքում: Նրա մոտ, պատուհանի առջև, սպիտակ խալաթով նստած էր բժիշկը, հանգիստ ու անխոս նայում էր նրան: Դրսից համաշափ զարկերով լսվում էին ինչ-որ ուժեղ ձայներ, թվում էր, թե աղմկելով անցնում էր մի հին ավտո: Սոնա տատին ձայնից խաբված արագ նստեց անկողնու մեջ, վիզը ձգեց և բժշկի ուսերի վրայից անհանգիստ նայեց պատուհանից դուրս: Պատուհանից, դիմացը, երևում էր Արազյանների պատշգամբը: Բակում, հիվանդանոցի քույրը, ջահել ու կարմրաթուշ հաղթանդամ մի մալական աղջիկ, տիկին Սաթենիկին օգնելով, ուժեղ զարկերով թափ էր տալիս պարանի վրա փռված դանադան շորերի փոշին: Սոնա տատին խորապես հիասթափված դեմքով նայեց բժշկին:

— Մերոնք ավտոմոբիլով շանցա՞ն, — աղերսագին հարցրեց նա:

— Չէ, շանցան:

— Սեփան ջան, դու իմ ազիզ ախպերն ես, — նստած շարունակեց նա մեղմ ու հանգիստ, — Սեդայի ու Միքայելի քամակից որ դան, իմ երեխոցը կասես՝ թող քաղաք չգնան... Ախր, մեռնում եմ... մեղքը՝ չեմ:

— Է՛, գուցե չես մեռնելու, Սոնա, հը՛:

Սոնա տատին թռուցիկ հայացքով նայեց բժշկին, հարնկավ, գլուխը նետեց բարձերին, սկսեց առաջվանից ավելի ողբագին հառաչել:

— Ա՛-ա՛խ, ո՛-ո՛խ... ոտս, կեսս մեռավ, բժիշկ... ձեռքից գնացի:

— Հա՛, տեսնում եմ, մեռնում ես, — գլուխը թափահարելով ասաց բժիշկը, — անժամանակ ես մեռնում, Սոնա: Դու քանի՞ տարեկան կաս:

— Վաթսունս հերու խոտհնձին թամամեց, բժիշկ ջան, — լացակումած պատասխանեց Սոնա տատին:

— Դե՛, տեսնում ես, իսկ դու դեռ ժիր ես, նույնիսկ ջահելացել ես:

Սոնա տատին նրա խոսքերից շոյվելով հանգիստ ժրպտաց:

— Բա ի՞նչ էիր կարծում... Ա՛յ, քսան տարի առաջ քեզ որ բուժեցի, դու ձեռ ու ոտից շատ էիր ընկած: Էն ժամանակ, մի՞տդ է, չեմ հիշում, Սոնա, քեզ ի՞նչ հիվանդությունից բուժեցի:

— Սովից էի մեռնում, բժիշկ ջան,—կամաց պատասխանեց Սոնա տատին:

— Հիշեցի: Էն ժամանակ, Սոնա, դու ուրիշ տեսակ էիր մեռնում,—մտածկոտ ասաց բժիշկը.—որ եկա, արդեն կապուեի էիր: Ոնց առողջացար—մինչև հիմա էլ գլխի չեմ ընկել: Իմ աչքի առաջ էն ձմեռը քո երեխեքն էլ...

Բժիշկը խոսքը թողեց կիսատ, ականոցների տակ մտածկոտ կկոցեց աչքերը, գլուխը դառնությամբ թափ տվեց, խորասուզվեց հեռավոր, տխուր մտքերի մեջ, լռեց: Կուռ էր նաև Սոնա տատին:

— Քո թոռները, չէ՛, էդպես չեն մեռնի,—սպիտակ գլուխը բարձրացնելով մխիթարական ու հանգիստ ասաց բժիշկը, նորից մտածկոտ նայեց մի կետի, հետո երեսը վարդագույն ժպիտով շրջեց Սոնա տատին,—իրար հետ, Սոնա, մեր թևերի վրա էստեղից տուն կտանենք նրանց, իրար հետ օրորոց ու օժիտ առնելու կգնանք: Տունդ նոր, կաթը՝ առատ, թոռներդ կմեծանան առողջ... Մեր կյանքին, Սոնա, շատ կարիք ու նեղություն բաժին ընկավ, մինչև մեծացանք: Կավ էր, որ էդպես եղավ. ծանրությունը մենք քաշեցինք: Կհիշեն: Իսկ նրանք, է՛, ապրելու են, Սոնա, ուրիշ կյանքով: Այդ կյանքից, տե՛ս, մեզ էլ բաժին հասավ: Դե՛, լավ կլիներ, Սոնա, շմեռնեիր հիմա: Շուտով դու թոռներ կունենաս, թոռներիդ կտեսնեիր:

Բժշկի խոսքերի վրա Սոնա տատին կամաց-կամաց բարձրացավ, նստեց անկողնու մեջ, ուշի-ուշով, հմայված նայեց ուղիղ նրա երեսին:

— Ա՛յ, այդպես, դե՛, առողջացիր, Սոնա, հերի՛ք է,—խրախուսեց բժիշկը,—Տիգրանն ու Նունոն էլ թող իրենց սրբտի ուղածի պես շարժվեն, թող գնան քաղաք, ջահել են...

Սոնա տատին ծուռ-ծուռ նայեց բժշկին, վայրկենապես նորից ընկավ բարձերին, սկսեց տքտքալ.

— Ամա՛ն... վա՛-ա՛խ... ինչեր ես խոսում, ես մեռա...

— Համա թե բնավորություն ունես, հա՛, — սպառնալով համբերատարությամբ խոսեց բժիշկը՝ աթոռից ելնելով, — երկու տարվա մեջ հինգ անգամ ես մեռնում եմ ամեն անգամ էլ երբ զավակներդ իրենց կամքով են ուզում շարժվել:

— Քո հաշվով ես չե՞մ մեռնում, — արագ նստեց Սոնա տատին:

— Մեռնում ես, պրծա՛նք: Դե՛, գնա՛ ու հանգիստ մեռիր, էլ համբերանք չթողիր, — պատասխանեց բժիշկը, ուղըղ-վելով դեպի դուռը:

— Չէ՛, կա՛ց հալա: Չե՞մ մեռնում, հա՛: Դե՛, որ չեմ մեռնում՝ թո՛ղ, թո՛ղ ինձ տուն գնամ:

— Դու էստեղից չես հեռանա, մինչև Տիգրանն ու Նունոն քաղաք չգնան, — խիստ պատասխանեց բժիշկը ու դուրս գալով՝ դուռը ուժեղ դարկեց:

Սոնա տատին ճարպկորեն ցատկեց անկողնուց, հիվանդանոցի անճոռնի խալաթի մեջ ոտները խճճելով վազեց դեպի դուռը:

— Հալա համբերի, բժի՛շկ, — ճչաց նա, բժշկի հետևից դուռը կիսով չափ բանալով:

Բայց դուռը նորից շխկոցով փակվեց: Սոնա տատին կախ ընկավ դռնից, ամբողջ ուժով փորձեց բանալ, սակայն նրա ջանքերն իզուր էին: Դրսի կողմից բժիշկն ամուր պահել էր դուռը: Սոնա տատին ընկավ դռան վրա և յուրաքանչյուր հարվածն է՛լ ավելի ուժեղացնելով, բռունցքով սկսեց ուժգին թակել:

Տիկին Սաթենիկն այս ամենից անտեղյակ իրենց պատըշգամբում ճամբրուկի մեջ դասավորում էր Սեդայի զգեստները, որոնց փոշին քիչ առաջ բալում թափ էր տալիս հիվանդանոցի քույրը: Զգեստներն այժմ խառը թափված էին պատշգամբի ճաղերի ու աթոռների վրա: Տիկին Սաթենիկը զգեստները դասավորեց, ավարտեց, ապա կախվեց պատըշգամբից, ձայն տվեց հիվանդանոցի կողմը:

— Ստեփա՛ն, ավտոն հիմա գալու է, չե՞ս լսում, շորե-

րը պետք է կապկպել, երեխաները դեռ չեն եկել, ե՛կ ինձ օգնիր, երեխաներին գտիր, Ստեփան...

Հիվանդանոցի անկյունի հետևը, պատշգամբում, որտեղից չէր երևում Արադյանների տնակը, բժիշկը քրոջ հետ քաշքշելով պահում էր մերթ ընդ մերթ ուժեղ ցնցվող դուռը, որի վրա ներսից տեղում էին Սոնա տատի հարվածները։

Տիկին Սաթենիկի ձայնի վրա ծերունին աչքով նշան արեց քրոջը, որ դուռն ավելի ամուր պահի, ու արագ իջավ աստիճաններից։ Քույրը մի պահ մենակ չկարողացավ պահել, դուռը մի փոքր ետ գնաց ու բացվող ճեղքից երևաց Սոնա տատի բարկացած դեմքը։ Նա նկատեց բակի միջով հեռացող բժշկին։

Աղմուկ-աղաղակով բացվեց հիվանդանոցի պատուհանը, նրա ուղիղ դիմացը երևում էր Արադյանների պատշգամբը. գաղաղած, զայրացած Սոնա տատին կիսով չափ թեքվեց դուրս, պատշգամբում տեսավ բժշկին, և սաստիկ արագախոսությամբ գոռաց.

— Թո՛ղ, ասում եմ, տուն գնամ։ Մինչի մահ գերեզման հո՞ չես բուժելու։ Բո՛լ է։ Ես սաղ-սալամաթ եմ ու թո՛ղ քո հոգին կորեկ դառնա։ Թո՛ղ, ասում եմ։ Ա՛յ, գլխովդ գա քո դեղ ու դարմանը... Քարանաս դու, պապանձվե՛ս։ Ուզում ես իմ տղեն քաղաք գնա, որ աղջիկդ հետը սիլի-բիլի անի՞... էդ ո՞ր ագռավն է հոգիդ հանել։ Անխի՛ղճ...

Ծերունին Սոնա տատին նախ ականջ դրեց անտարբեր ու պարզ, անկեղծ ժպիտով, սակայն նրա խոսքերը, որոնք կարծես պայթում էին օդի մեջ, հանկարծակի անակնկալի բերելով, տիկին Սաթենիկի վրա սկզբից մինչև վերջ անհաճո ազդեցություն թողին։ Վերջում, երբ գործը նույնիսկ հասավ նաև անձնական անվանարկության, նա, տիկին Սաթենիկը, կերպարանափոխ եղավ, ամոթից ծայրահեղ երկյուղի հասած շփոթվեց, գունատվեց։ Եվ ահա, այդ բոլորին վրա հասավ մի նոր անակնկալ, որը եկավ ու պակասը լրացրեց։ Տիկին Սաթենիկը բակում նկատեց Սեդային ու Միքայելին, որոնք հենց այդ պահին ներս մտան։ Նա ձեռքը սարսափած թա-

փահարեց Սոնա տատի կողմը, որպեսզի հարկադրի լռել, և հետո՝ ամուսնու կողմը, որ նա էլ միջոցներ ձեռք առնի, իսկույն վերջ տա այդ ամենին:

Բժիշկը, որի դեմքը նույնպես կարծես երկարել էր արդեն, զայրացած գոռաց Սոնա տատի վրա.

— Կորի՛, կորի՛ տուն: Հագիր շորերդ, անմիջապես գնա: Աչքիս չերևաս:

Սոնա տատին իսկույն լռեց, հեռացավ պատուհանից:

Մի խուրձ զգեստների գրկած, հեռավոր ներս ընկավ հիվանդանոցի հաղթանդամ քույրը: Սոնա տատին խլեց զգեստների խուրձը, գրկի մեջ հապճեպ ջոկելով, մեկիկ-մեկիկ նետեց մահճակալի վրա, ջոկեց, հաշվեց: Սկզբում նետեց լաշակները, գլխի արդուզարդարանքները, կապերը, ապա՝ երեք-չորս կոֆտիկաները, վերջում նրա ձեռքին մնաց մի շրջազգեստ: Շրջազգեստը թափահարելով քրոջ երեսն ի վայր, Սոնա տատին հանդիսավոր և խիստ ազդու հարցրեց.

— Ինձ տկլո՞ր ես ուզում թողնել: Էլի բեր: Քա, յուպկա դավայ...

Քույրը թիթիոցով վազեց դուրս:

...Բակից Սեդան ու Միքայելը բարձրացան պատշգամբի աստիճաններով: Ծերունիները հուզված էին, շփոթված:

— Սեդա, ո՞ւր մնացիք: Չամադանները պետք էր կապկըպել... Հիմա ավտոն կգա, դեռ չեք ճաշել, կուշանաք, — գժգոհելով խոսեց տիկին Սաթենիկը:

— Առանց ինձ, մամոշկա, գիտեմ, դու ավելի լավ կդասավորեիր շորերը:

— Ամեն ինչդ ե՛ս, ե՛ս, — բարի սրտենդած ու արագ շարժումներով տիկին Սաթենիկը սեղանից հավաքեց սփռոցը, ճաղին թեքվելով թափ տվեց, նորից փռեց, մոտեցավ պահաճադին, շարունակ վախվիսելով, աշխատելով, որ խոսք չբացրանին, վի Սոնա տատի հետ պատահած անախորժության մասին, կամ նորից չկրկնվի, որից ինչ-որ մի անհաղթահարելի տենդով դեռ թրթռում էր սիրտը:

— Պապոշկա, էն ի՞նչ էր ճղճղում Սոնա տատին:

— Է՛, հիմարի մեկն է, խենթ ու խելառ պառավը:

Պահարանի առջև ճաշի ափսեները գրկած շրջվեց տիկին՝ Սաթենիկը, նայեց Միքայելին, ապա ներքին երկյուղով մի անհանգիստ և աղդու, կարճ հայացք նետեց ամուսնու վրա, շտապ ընդհատեց նրան, նկատելիորեն կամենալով շեղել անախորժ գրույցը:

— Սեդա, հարկավոր է՞ շտապել: Հիմա կգան ձեր հետևից:

— Մամոչկա, այդպես սարսափած մի՛ նայիր Միքայելին: Նա առայժմ իմ փեսացուն է, ու ինձ վրա դեռ ոչ մի իրավունք չունի,— ու իր կարկաչուն բնավորությամբ Սեդան շարաճճի ժպտաց.— ուրեմն ես, լսեցի՛ր, Միքայել, я кричу любовью Сиқыранки հետ, հա՛:

— Սեդա՛,— արդեն սարսափած կանչեց տիկին Սաթենիկը:

Սեդան ուշադրություն չդարձնելով մորը, հարցրեց Միքայելին.

— Գուցե խանդո՞ւմ ես, չե՞ս խանդում: Պատճառներ կան: Տիգրանը գեղեցիկ տղա է, գյուղում՝ առաջավոր մարդ...

— Երբե՛ք: Ամենևի՛ն,— ժպտաց Միքայելը:

— Ուրեմն չե՞ս խանդում: Լավ է: Հույս ունեմ, Միքայել՛, քո մեջ երբեք չի արթնանա անասնական այդ բույթ զգացումը... Մամոչկա, մի՛ կարմրի: Ծի՛շտ չեմ ասում...

Պատշգամբից վազելով քույրը նորից ներս ընկավ Սոնա տատի մոտ, շրջազգեստների մի կույտ գրկած.

— Все, что ль,— հարցրեց ուժգին հեալով, շրջազգեստները գրկից թափելով մահճակալին:

Սոնա տատին անխոս ու մեծագույն ուշադրությամբ տնտղեց, հաշվեց խոշոր ծաղկանկարներով իր լայն շրջազգեստները, որոնք ալիքավոր փեշեր ունեին ու երկար կապեր, ապա շուտ եկավ քրոջը ու բարկացած, խիստ պահանջեց.

— Մի ջուխտ պակաս է... դվա՛, դվա՛,— երկու մատը չռած հասկացրեց նրան:

Քույրը վաղեց դուրս: Այդ ժամանակ հեռվից լսվեց նվագախմբի ձայնը: Սոնա տատին սկսեց շտապ-շտապ իրար վրա հագնել իր շրջազգեստները: Բայց շտապելուց խճճվում էին նրանց երկար կապերը, դայրանում, իրեն-իրեն խոսում էր Սոնա տատին, կապերն արագ փաթաթում էր մեջքը, բարկացած պինդ-պինդ հանգուցում ու նորից խոսում, անվերջ խոսում էր...

Արագյանների տանը ճաշը մնաց կիսատ, պատշգամբում բոլորը ոտքի ելան, խառնվեցին իրար: Յանկապատի մոտ արդեն կանգնած էր ծաղիկներով զարդարված ու քաղաք մեկնող մարդկանցով լեցուն բեռնատար ավտոն:

Ավտոյի վրա նվագում էին երաժիշտները: Լսվում էր մարդկանց զիլ, աշխույժ խոսակցությունը, աղմուկն ու կատակները: Մի քանիսը տեղավորում էին իրենց կապոցները, ճամբրուկները, մյուսներն ուրախ հրաժեշտ էին տալիս ավտոյի շուրջը խռնվածներին:

Տխուր էին միայն Նունոն ու Տիգրանը: Նրանք նստած էին կողք-կողքի, բայց չէին նայում իրար: Նունոն հագել էր բաց վարդագույն շրջազգեստ ու նստել էր հայացքը կախ:

— Սեդա', Միքայել', — կանչեց խեղանը դեպի պատշգամբի կողմը, գուլիսը դուրս կախելով ավտոյի դռնակից, — դե, շարժվեցե՛ք, արա՛գ, գնացքից կուշանանք:

Միքայելն ու Սեդան հիվանդանոցի քրոջ հետ ծանր ճամբրուկները քաշ տալով բակից ելան դուրս, բարձրացան ավտոյի վրա, տեղավորվեցին: Յանկապատի առջև գլխաբաց ու անհանդիստ կանգնել էր բժիշկը: Նրա թիկունքում երևում էր փոքրահասակ տիկին Սաթենիկը, որն աշխատում էր ամենքից թաքցնել իր արցունքները:

— Բժիշկ ջան, նանը ո՞նց է, լավ կխնամես, — ավտոյից կանչեց Տիգրանը:

— Կլավանա', կլավանա', գնացեք, շուտ գնացեք, — պատասխանեց բժիշկը և երեսը շրջելով՝ անհանդիստ հայացքը նետեց բակի կողմը: Ճշմարիտն ասած, միշտ նա Սոնա տատիի պատիվը պահելու համար ոչ-ոքի ոչինչ չէր հայտնում, երբ ամեն անգամ որևէ դեպքի առիթով հիվանդանում էր նա:

— Յտեսություն, մամոռչկա, ցտեսություն, պապոռչկա, —
ձեռքը թափահարելով ավտոյի վրայից հրաժեշտ տվեց Սե-
դան:

Ծուխ արձակելով գնաց ավտոն: Բժիշկը դեռ նայում էր
նրա հետևից, իսկ տիկին Սաթենիկն իր փոքրիկ թաշկինակը
քթի մոտ բռնած, գլուխը կախ, արդեն սրբում էր արցունք-
ները:

Երբ հիվանդանոցից դուրս վազեց Սոնա տատին, ավտոն
արդեն թեքվել էր փողոցի ծայրին բռնած բարդիների հետևը:
Սոնա տատին բակից վազեց փողոց: Նա երկու ձեռքին բռնել
էր իր վերջին երկու շրջազգեստը, որ շտապելուց չէր հասցրել
հագնել:

Սոնա տատին փորձեց հասնել ավտոյի հետևից, վազեց
մինչև ցանկապատի ծայրը, ապա երբ համոզվեց, որ այլև
չի կարող հասնել, ծնկները թուլացան, հոգնած կանգ առավ,
նայեց շուրջը, տեսավ՝ բոլորը նայում են իրեն: Ու նոր միայն
կարծես ուշքի գալով, խիստ ամոթահար ճշաց ու երկու ձեռ-
քին բռնած շրջազգեստներով ծածկեց դեմքը.

— Աման, ինձ մի՛ք նայի, ես տկլոր եմ...

X

Զարդարված կառամատուցի վրա ոմանք ծաղկեփնջերով
խումբ-խումբ կանգնած, ոմանք հանդարտ զբոսնելով՝ սպա-
սում էին գնացքին, օլիմպիադային մասնակցողներին դիմա-
փորելու համար: Մերթ ընդ մերթ նվազում էր զինվորական
նվազախումբը: Տղամարդկանց ու կանանց խառը բազմու-
թյան մեջ աչքի էր ընկնում օլիմպիադայի ժյուրիի նախագահ
պրոֆեսոր Լևոնյանը: Դա մի լիքը և բարձրահասակ, գեղեցիկ
խոշոր աչքերով պատկառելի ծերունի էր, որի լայնեզր գըլ-
խարկի տակից դուրս էին սահել երկար ու սպիտակ մազերի
փնջերը:

Բացվում էր Երևանի գեղեցիկ աշնան շռայլ առավոտը:
Դիմացը, լուսաբացի գունատ ու կապույտ հեռուներում,

արևի շողերի տակ մուգ-վարդագույն, մերթ դեղին, ծիրանա-
վառ, մերթ հստակ ադամանդացու վառվռում, փայլիլում էր
խաղաղ Մասիսի սպիտակ ու ոսկեզօծ դագաթը: Ծորում էր
լույսը դաշտի վրա, դաշտը հեղեղվում էր ծիածանի գույներով
ու լույսի ծփուն հեղեղի մեջ, մարմանդ-մարմանդ ցուցլում
էին աշնան հրով բռնկված հեռավոր դեղին բարդիները: Կա-
ռամատույցի վրա դաշտից փչում էր զով քամին: Սարոյանն
արագ դուրս գալով կառամատույց, մոտեցավ տաղավարում
նստած ծերունի լրագրավաճառին:

— Լրագիր ստացե՞լ ես: Գնացքը չի՞ եկել:

Ծերունին լրագրի վրայից բարձրացրեց գլուխը, անխոս
նայեց փոքրիկ ակնոցների միջից ու գլուխը նորից թեքեց
լրագրի վրա:

— Ուրեմն գնացքը չի՞ եկել: Չե՞մ ուշացել,—կրկնեց
Սարոյանը:—Դե՛, ինձ մի լրագիր տուր, պապի:

— Չկա՛,—գլուխն առանց բարձրացնելու պատասխանեց
ծերունին, ձեռքի լրագիրը շուռ ու մուռ տվեց: շարունակեց
կարդալ:

— Ինձ մեկը բավական է, ձեռքինդ թեկուզ:

— Չկա, ասացի: Վեց օր է ես լրագիր չեմ կարդացել:

— Ինչո՞ւ:

— Չի մնում: Եղածը խլիլում են...

— Դրա համա՞ր ես զայրացել... Մի տեսնե՛մ, տեսնե՛մ:
Ծա չեմ խլի,—Սարոյանը նրա ձեռքից պոկեց լրագիրը, շրջ-
վեց մեջքով, սկսեց արագ աչքի անցնել:

Դյուրագրգիռ, փոքրիկ ծերունին բարկությունից կանգ-
նեց, զայրացած նայեց նրան:

— Չեղավ, ինձ վրա, պապի, մի բարկանա, ե՛կ հաշտ-
վենք,—սրտաբաց ու մեղմ ժպիտով ասաց Սարոյանը, գլու-
պանները քրքրեց, հանեց արծաթե մի դրամ, նետեց սեղա-
նին:—Դե, հաջողություն: Հիմա կզանգահարեմ, քեզ լրագիր
կբերեն:

Ծերունին տաղավարից գլուխը կախեց դուրս, փորձեց
լրագիրը խլել, չկարողացավ: Սարոյանը լրագիրը գրպանը
խոթելով արագ գնաց, մտավ կայարանի դահլիճը:

Գնացքն արդեն եկել էր, երբ Սարոյանն ուշացած նորից դուրս եկավ կառամատուց: Մարդիկ արդեն խոնվել էին իրար, տեղի էր ունենում ուրախ հանդիպում: Նվագում էր զինվորական նվագախումբը: Սովորական ճամփորդներից ու կաղնուտցիներից բացի, օլիմպիադային մասնակցելու համար կային նաև ուրիշ շատ գյուղերից եկածներ: Խումբ-խումբ նրանք հավաքվում էին կառամատուցի վրա, նվագախմբի մոտ:

Սեդան գնացքից իջնելով՝ աչքը նետեց կայարանի ժամացույցին:

— Ուշացանք՝ լրիվ կես ժամ... Դե, ես գնացի ավտոյի, — կամացուկ ասաց նա Տիգրանին ու խկույն հեռացավ:

Սարոյանն իր վառվռուն, միշտ անհոգ, ժպտացող աչքերով, որոնող հայացքով նայեց շուրջը, ապա խկույն գնաց խառնվեց նվագախմբի մոտ հավաքված բազմությանը:

— Թո՛ւյլ տվեք, թո՛ւյլ տվեք, ընկերներ: Ո՞ր գյուղի ներկայացուցիչներն են այստեղ... Ո՞ւմ եմ հանդիպում, ընկեր խեչա՛ն, Տիգրա՛ն... — Նա ուժեղ, մտերմաբար թափահարեց խեչանի, ապա Տիգրանի ձեռքը. — դո՛ւք էլ օլիմպիադայի: Հրաշալի է: Այսօր ձեր մասին լույս է տեսել իմ հոգվածը:

— Հա՛: Տո՛ւր, մի տեսնեմ: Մոտո՞ղ լրագիր չկա՞, — հարցրեց խեչանը:

— Վերցրեք, թող մնա ձեզ մոտ, — Սարոյանը գրպանից հանեց լրագիրը ապա շրջվեց Տիգրանին. — լավ հոգված է: Այսօր բոլորը կկարդան ձեր մասին. կիմանան թե ինչպիսի՜ անվանի մարդ ունի Կաղնուտը: Ուրեմն, մասնակցելու եք օլիմպիադային: Երգո՞ւմ եք:

— Չէ՛, պարում է, — աչքը բարձրացնելով լրագրից, իրեն հատուկ գովեստով պատասխանեց խեչանը:

Հեռվում, ծերունի լրագրավաճառն արդեն աշխուժացած քանդում էր հենց նոր ստացած լրագրերի մեծ կապոցը: Շատերը, որոնք ուշադիր լսում էին Սարոյանին, շտապ մոտեցան լրագիր վերցնելու:

Տաղավարի առջև խկույն ահագին բազմության հերթ

զոյացաւ և կարճ ժամանակ անց կառամատուցի վրա ամեն-
քի ձեռքերի մեջ պարզած լրագիր կար, որի առաջին էջի ան-
կշունում տպւած էր Տիգրանի նկարը: Բոլորը խորասոսկւած
կարդում էին: Ամենքից վերջը, երբ Տիգրանը մոտեցաւ տա-
ղաւարին, արդեն մնացել էր վերջին լրագիրը: Նա ձեռքը
պարզեց լրագիրը վերցնելու, բայց ծերունին խկույն խլեց:

— Վերջացա՞ւ: Էլ չկա՞, — հարցրեց Տիգրանը: — Իմ մա-
սին հոգւած կա, նկարս էլ հետը... Բա ես չկարդա՞մ:

Ծերունին ինչ-որ տարակուսանքով, ուշադիր նայեց Տիգ-
րանին, նայեց նկարին, զննող հայացքով ստուգեց, ապա
լրագիրն անխոս մեկնեց նրան ու խռովկան նստած շուռ
եկավ, գլուխը հենեց ձեռքին:

Տիգրանը թուցիկ հայացքով աչքի անցկացրեց լրագի-
րը, անսահման ուրախությունը զսպելով: Քայլելիս մեկը
լուսանկարեց նրան: Տիգրանը նկատեց, սակայն ցույց չը-
տվեց: Զինվորական նվազախմբի մոտ հավաքւածները, որ
արդեն կարդացել էին Տիգրանի մասին, նրան նկատելով
հանկարծ ծափահարեցին: Նվազեց զինվորական նվազա-
խումբը: Տիգրանը մի փոքր շփոթվեց, կարմրեց, ժպտալով
մոտեցաւ Նունոյին, բռնեց նրա թևը: Նունոն շղիմադրեց:

— Ո՞վ է... կի՞նն է... — բազմության մեջ մի քանիսը
հարցրին իրար:

— Հա, — շրջվելով պատասխանեց Խեչանը, գրկի մեջ
ուղղելով նվեր ստացած ծաղկեփնջերը:

— Ուրեմն այդ դո՞ւք էիք տրակտորի հետեւում համբուր-
վողը: Զճանաչեցի, փոխվել եք, — մոտենալով Նունոյին, նվա-
զախմբի աղմուկի պատճառով ձայնն ավելի բարձրացրած
հարցրեց Սարոյանը:

Նունոն կարմրեց, կախեց հայացքը:

— Նունո, կատակ չեմ անում, շնորհավորում եմ ձեզ՝
այնպիսի ամուսնու համար:

Զինվորական նվազախումբը լռեց: Եվ վայրկենապես
տիրող կարճ լռության մեջ բարձր հնչեց Սարոյանի ձայնը:
Քիչ հեռու կանգնած մեկ ուրիշ խմբի միջից, Միքայելը
բարձրահասակ ծերունի Լևոնյանի հետ մոտեցաւ նրանց:

— Ահա նունոն: Ծանոթացե՛ք, պրոֆեսոր, — ասաց Միֆայելը:

— Ուրախ եմ, ուրախ եմ... Ձեր մասին Միֆայելն ինձ արդեն պատմեց, — ձեռքը երկարելով նունոյին ասաց Լևոնյանը:

Նունոն ամաչկոտ հայացքը շքարձրացնելով, աչքի տակով նայեց Լևոնյանին, ճնշվելով ձեռքը պարզեց նրան:

Բազմության միջից Սեդան մոտեցավ Տիգրանին:

— Գնանք, ավտո կա, — թաքուն շշնջաց նա, Տիգրանի թևից քաշելով:

— Ձե՛նք ուշանա:

— Չէ: Կհասնենք, եկ:

Տիգրանը հեռացավ:

— Միֆայելն ասում է, — շարունակում էր զրուցել Լևոնյանը, — դուք նաև շատ երգեր գիտեք: Քանի՞ տարեկան եք:

— Քսանը նոր է լրացել: Սոխա՛կ է, — պատասխանեց Խեչանը, օդի մեջ մի քանի մատը շռելով:

Լևոնյանը նայեց նրան:

— Կաղնուտի կոլխոզի նախագահն է, պրոֆեսոր, ծանոթացե՛ք, — ասաց Սարոյանը:

— Ուրախ եմ: Միֆայելը ձեր նունոյին շատ գովեց, շատ է հավանել: Ինքս էլ եմ տեսնում՝ համեստ, շնորհքով աղջիկ է երևում: Լավ պահպանեցեք:

— Նունոյին, պրոֆեսոր, հարկավոր է սովորել, նրան պետք է պահել քաղաքում, երգվում եմ, տաղանդ է, — միջամտեց Միֆայելը:

— Տեսնենք: Կմտածենք: — Լևոնյանը նորից նայեց Խեչանին. — ձեր գյուղի մասին շատ եմ լսել, պատմում են, որ լավ երգող աղջիկներ շատ կան. այո՞:

Նունոն հայացքը կախ լսում էր, Միֆայելի խոսքերի վրա նայեց Տիգրանի կողմը, բայց նա արդեն չկար: Նունոն բարձրացրեց հայացքը, մի անդուստ տազնապով նայեց շուրջը, փնտրեց նրան: Հեռվում բազմության մեջ նա տեսավ Սեդայի հետ հեռացող Տիգրանին, երեսը հպարտ, շրջեց,

բայց իսկույն խորը ցավով լցվեց սիրտը, սակայն բոլորն
ուրախ էին, անուշադիր և ոչ ոք ոչինչ չհասկացավ, չնկատեց:

XI

Հյուրանոցի ծերունի սպասավորի հեռեկից ներս մտավ
Նունոն: Ծերունին ճամբրուկները վար դրեց, անաղմուկ քայ-
լեց հատակին փռված գորգի վրա, բացեց լուսամուտի դարշ-
նագույն թավիշե վարագույրները, ժպտաց ու հեռացավ:

Տիգրանի և իրեն ճամբրուկների մոտ Նունոն մի՞ պահ
մնաց անշարժ կանգնած, տխուր ու թուլցիկ հայացքն օտա-
րոտի պտտեցրեց շուրջը, նայեց ծածկոցներով ավոտներին,
ճոխ կահկարասիներին ու դանդաղ քայլերով մոտեցավ՝ բա-
ցեց լուսամուտը: Դիմացը, ներքևում, արևոտ ու կապույտ
երկնքի տակ փռված էր քաղաքը, երևում էին մարդաշատ ու
արձաններով հրապարակները, շատրվաններով մշտադալար
պուրակները, փողոցները, ավելի հեռու՝ համատարած գու-
նավոր կտուրներ ու ծխնելույզներ, ուր տեղ-տեղ բարձրացել
էին լայն փռված ծառերի անշարժ, հանդարտ դադաթները:

Սակայն ոչինչ չկար գրավիչ Նունոյի համար: Առանց
այդ էլ նրա սիրտը փշրված էր: Նա հեռացավ պատուհանից,
ձեռքով ետ քաշեց ննջարանի թավիշե վարագույրի ծայրը,
նայեց ներս: Ննջարանում կողք-կողքի դրված էին փայտե
երկու մահճակալ, որոնց արանքում, հատակի վրա փռված
էր մի արջի մորթի, աչքերի մեջ զույգ կարմիր-կանաչ վառ-
վրուռն ուլունքներ գրած: Նունոն բաց թողեց վարագույրը,
տարտամ քայլերով մոտեցավ սենյակի կենտրոնում կլոր սե-
ղանին, սփռոցից բռնելով մտածկոտ նստեց ավոտի վրա,
ձեռքերը ցած դրեց ծնկներին, աչքերը հատակին հառած,
անշարժ: Նրա աչքերի մեջ մի խորունկ վիշտ կար, որ ծխում
էր ինչպես կրակը:

Արդյոք ա՞յն միտքն էր համակել նրան, թե տանն ամեն
ինչ կարող է շուռ գալ, փոխվել, եթե Տիգրանն իրեն հետ շա-
րունակի այսպես... արդյոք խա՞նդ էր արթնացել Սեդայի

հանդեպ, արդյոք ինչ որ վատ բան էր նախազգում: Բայց որքան էլ աշխատում էր համոզել իրեն, որքան էլ ուզում էր հավատալ Տիգրանի շիտակությանը իր նկատմամբ, այնուամենայնիվ տանջվում էր, մտածում, թե ինքը գուցե բնավ չգիտե Տիգրանի բնավորությունը: Բայց արդյոք չգիտե՞: Քանի անգամ տեսնի, քանի՞ անգամ համոզվի:

Նրա շրթունքներն արդեն թեթև կերպով դողում էին: Եվ սիռուցի ծայրով որքան էլ սրբում էր աչքերը, բայց նորից արցունքներն առատ թափվում էին կոպերի տակից: Այդ գուցե նրանից էր, որ ամեն ինչ նա զգում էր խորը և ուժեղ, բայց դադանի: Սակայն և այդ ամենի համար նա շարունակ կշտամբում էր ինքն իրեն... Երբեմն մտածում էր, գոնե ամոթ չզղա, խոսի խեղանի հետ, որպես մերձավոր, հոգատար մարդու հետ, սիրտը բաց անի՝ նրա մոտ, ամեն ինչ պատմի: Խեղանք կհասկանա իրեն, կազդի Տիգրանի վրա: Բայց նա շատ է ինքնասեր, կիմանա՝ ավելի վատ, կվիրավորվի: Չէ՛, թող չվիրավորվի: Չէ՛ որ ինքը հիմա էլ նրան երբեք մատը չի կամենա: Եվ եթե կուզի՝ թող գնա, հեռանա իրենից, իհարկե ծանր կլինի իրեն համար, բայց կկարողանա դիմանալ: Ինչո՞ւ ապրի խաբվելով, վիրավորված. ինչո՞ւ: Ինքը կթողնի տունը, կթողնի Տիգրանին, նանին ու որքան էլ դժվար լինի՝ կհեռանա:

Նա արագ վեր կացավ, արցունքներից արդեն թեթևացած սրտով մոտեցավ իր ճամբրուկին, հանեց զգեստները, հայելու առջև կանգնած, զգեստները մեկիկ-մեկիկ ուսերից շափելով զննեց, կարծես առաջին անգամն էր ձեռքն առնում, ապա ընտրեց մեկը, նետեց աթոռի թիկնակին, հանեց սանրը, բռնեց շրթունքներով ու մի փոքր ետ թեքված՝ սկսեց երկար մազերը քանդել:

* * *

— Ոչինչ չեմ հասկանում, աստված վկա, չեմ հասկանում, — մատները լայն շռած, երկու ձեռքն օդի մեջ թափահարելով, Պավել Պետրովն ուսերը քաշեց վեր, տարակու-

սանքով նայեց Տիգրանին, ապա հայացքը դարձրեց Սեդայի կողմը:

Դա մի հաղթանդամ, շեկլիկ դեմքով, գանգրահեր ու ալեխառն մարդ էր, թեթև բուրմունք տարածող ծխամորճը շրթերի անկյունից՝ բեղերի տակ շարունակ կախ: Նա մոտ վաթսուն տարեկան էր, բայց տակավին ժիր, կենսախիղ ու աղմկող, հզոր թավ ձայնով: Գնդապետի աստիճանի հասած հին զինվոր էր Պավել Պետրովը, զինվորի շիտակ ու մաքուր սրտով: Մեղմ կանաչի ու կապույտին տվող երկնագույն աչքեր ուներ նա, զննող ու խելացի, որոնք թեթև փայլով կարծես առկայծում էին անսահման պարզությամբ: Պավել Պետրովը ծնվել էր Հայաստանում, բքաշունչ լեռների հանգուցյում ընկած՝ ռուսական հին Սեմյոնովկա դյուղում և մաքուր գիտեր հայերեն, որ սովորել էր դեռ մանկությունից: Արդեն ծերության հասակում Պավել Պետրովը թողել էր զինվորական ծառայությունը, սակայն չհրաժարվելով զինվորական իր սիրած գործից՝ աշխատում էր որպես աերոդարոցի պետ:

Նա նստած էր գրասենյանի հետևը, թիկունքով դեպի բաց պատուհանը, որտեղից երևում էր դարոցի արևոտ լայն դաշտը:

— Պատրաստ եմ ձեզ ամեն կերպ օգնել, բայց ի՞նչ է ձեր պահանջը, չեմ հասկանում, — իր հզոր ձայնով շարունակեց Պավել Պետրովը դիմելով Տիգրանին:

— Ուզում եմ իմանալ՝ ինձանից օղաչու դուրս կգա՞:

— Ինչու չէ: Բնությունը ձեզ ոչինչ չի խնայել: Ձեր կրթությունն էլ համապատասխան է: Человек вы, пишут про вас, энергичный, — նա թռուցիկ հայացքով նայեց գրասենյանին ընկած լրագրին, ուր տպված էր Տիգրանի նկարը, ապա գլխով նշան արեց Սեդային, — նու, իսկ ձեր դեմլյաչկան դերադանց գնահատական է տալիս ձեզ: А она считается у нас совсем не плохим инструктором...

— Ես ուզում եմ հաստատն իմանալ, որ ինձ կոմիսիան պատասխանի:

— Այսինքն, քննություն եք ուզում տալ: Ընդհանուր կարգով:

— Ըհը: Քննություն...

— Ուրեմն մեզ մոտ ընդունվել եք ուզում:

— Հա՛, ընդունվել... այսինքն դեռ չէ, հետո կընդունվեմ:

— Разрешите об'яснить, товарищ начальник, — միջամտեց Սեդան. — Он хочет сейчас сдать испытания, а потом, когда будет возможность, приступить к занятиям.

— Նու, իսկ հիմա ինչո՞ւ չեք կարող:

— Դե մեր կոլխոզը... բրիգադս թողնել չեմ կարող... Ա՛յ, ինձ փոխարինող պատրաստեմ, հետո...

* * *

Հյուրանոցի մարմարե աստիճաններով Նունոն իջավ ներքև, սրահում հայելու մեջ թիկունքից նայեց իր վրա, վերևից ցած դիտով մի թեթև շարժում անելով, ու մտավ ճաշարան: Ընդարձակ ճաշարանում, ուր սեղաններին մեխակներ ու այլ ծաղիկներ կային և տեղ-տեղ թաղարների մեջ՝ բազկատարած արմավենիներ, — նվազում էին սպիտակ կրծքկալներով երաժիշտները: Մենակ նստած մտածկոտ ու տխուր ճաշեց Նունոն: Հարևան սեղանների մոտ ճաշողներից մի քանիսի ձեռքին նա լրագրում տեսավ Տիգրանի նկարը: Սիրտը նորից ցնցվեց. նայեց շուրջը, ինչ լավ էր, որ ծանոթներից ոչ ոք չկար: Բայց չէ որ ճաշի ժամ է հիմա, բոլորը կարող են գալ, իրեն տեսնելով մենակ՝ կարող են հետաքրքրվել, հարցնել Տիգրանի մասին: Ի՛նչ պատասխան տա նրանց: Ինչո՞ւ շուտ չէր մտածել: Նունոն խուսափեց երևալ ծանոթների աչքին, շտապեց հեռանալ: Թող ոչ ոք ոչինչ չիմանա: Նա վճարեց մատուցողին, ելավ դուրս:

Կեսօրը թեքվել էր արդեն: Շոգ էր: Արևի գույն դեղնավուն, անշարժ ծառերի ստվերները փռվել էին տոթ մայթերի վրա: Փողոցով գնում էր Նունոն: Սիրտն ուզում էր թափառել,

շրջել մենակ, ծանոթներից հեռու: Տեղ-տեղ նա կանգնում էր խանութների լիքը ցուցափեղկերի առջև, ուշի-ուշով նայում էր ներս, նորից քայլում արևոտ շոգ փողոցով, նայում էր անցնող աղջիկների ու կանանց զգեստներին... Ու նորից խանութներ՝ լիքը ցուցափեղկերով, նորից աղջիկներ, կանայք: Ամեն տեղ կանգնում էր Նունոն, ամեն տեղ նայում էր խանութներին, ցուցափեղկերին, կանանց: Իրեն անծանոթ մի ինչ-որ շենքի գեղեցիկ մեծ շքամուտքի մոտ նա նկատեց օլիմպիադայի հայտարարությունը, մոտեցավ, ծրագրի առաջին օրվա բաժնում սրտի թրթռոցով կարդաց իր անունը, ու մուտքի մոտ երկար մնաց կանգնած:

...Տիգրանն ավտոյից նկատեց փողոցում մենակ կանգնած Նունոյին, ուրախ կանչեց նրան: Նունոն շրջվեց: Ավտոն կանգ առավ: Տիգրանը վազեց, շտապելուց Նունոյին ոչինչ չասաց, նրա ձեռքը բռնած արագ քաշ տվեց, տարավ: Տիգրանը բացեց ավտոյի դռնակը, Նունոն փորձեց նստել, բայց հանկարծ թույլ ցնցվեց, կանգ առավ, շփոթվեց, ավտոյում նա տեսավ Սեդային, թեթև հտ քաշվեց, ուզեց հեռանալ:

— Դե՛հ, մենք դպրոցից ենք գալիս, Նունո,— ասաց Տիգրանը, Նունոյին գրեթե հրելով ավտոյի մեջ,— Սեդայի հետ դպրոց էի գնացել:

Ավտոն գնաց:

— Իսկ ինքդ ի՞նչ էիր կարծում, Ճիշտն ասա, Նունո,— նկատելով Նունոյի շփոթմունքը, զվարթ հարցրեց Սեդան,— երևի՝ դու արդեն խանդո՞ւմ ես... Իմ Միքայելին ես միշտ ասում եմ, տես, եթե մեր մեջ արթնանա խանդը, անասնական այդ բույթ զգացումը, ապա այլևս ինձ չես տեսնի: Ճիշտ եմ ասում:

Նունոն թեթև շիկնեց, չպատասխանեց:

— Նունո ջան, ես օղաշու պիտի դառնամ,— նրա սիրտն առնելով, քնքշորեն ու երազելով, ուրախ ասաց Տիգրանը:

Նունոն շնայեց ամուսնու՛կ կողմը, օտարոտի ու հանգիստ, անվրդով հարցրեց նրան.

— Ուրեմն, մնո՞ւմ ես քաղաքում սովորելու:

— Հիմի չէ, Նունո ջան, հետո՛... էնպե՛ս երջանիկ եմ...
Վաղը քննություն ունեմ: Քննությունից հիմի չեմ վախենում:

— Իսկ ես վաղը երգելու եմ ու կմնամ քաղաքում, կսովորեմ, հետո կընդունվեմ կոնսերվատորիա, — նորից օտարոտի, սառը ասաց Նունոն:

Տիգրանն անակնկալի եկած նայեց նրան, և նոր միայն հիշեց, որ Նունոն խռոված է իրենից: Նա վայրկենապես փոխվեց, լռեց, դեմքը կարծես մթնեց, երկաթի պես ծանրացավ:

Սեդան տարակուսած նայեց նրանց. արդյոք ի՞նչ կատարվեց, ոչինչ չկարողացավ հասկանալ:

XII

Մյուս օրը, ճաշից հետո, Նունոն մեծ հայելու դիմաց կանգնած փոխում էր զգեստները: Հայելու մեջ, իր թիկունքում նա նկատեց ամուսնուն, աչքի ծայրով երկար և ուշի-ուշով ծածուկ հետևեց նրան: Տիգրանը նստած էր սեղանի մոտ, փոքրիկ հայելու առջև, կապում էր փողկապը, բայց դժվարանում էր, զայրանում:

Ամբողջ օրը Նունոն ներքուստ ինչ-որ տարօրինակ հուզմունք էր զգում, մի թեթև ցավ: Նա դարձել էր լռակյաց ու թաքուն ամաչում էր նախորդ օրվա իր արտասույնքներից, շարունակ մտածել էր, զայրացել իր վրա, նախատել իրեն, կըշտամբել: Չէ՛, չէ՛, սխալվել է ինքը, սխալվել: Ամեն ինչ այժմ պարզ է իրեն — Տիգրանն ուզում է դպրոց ընդունվել, Սեդան օգնում է նրան: Բայց ինչե՛ր էր մտածում նրա մասին, ինչ հանցավոր մտքեր էին ծագում: Ու իր սխալը գիտակցելով ամաչում էր, լռում, թաքուն խղճի խայթ էր զգում, բայց սիրտը լցվել էր մի խորունկ, քնքույշ սիրով, սակայն չգիտես ինչու, ինչպես առհասարակ բոլոր կանայք, այդ ամենը թաքցնում էր ամուսնուց ու իրեն դեռ ճշահում էր խռոված:

Երբ մեկ էլ նա նայեց ամուսնուն, մի թեթև ժպիտ հազիվ նկատելի սահեց շրթերի վրայով ու մեղմորեն սառեց: Նա խղճահարվելով, վերջապես հաշտված, մոտեցավ Տիգրանին:

— Տուր կապեմ,—ասաց Նունոն ու խուսափելով Տիգրանի հայացքից, աշխատելով դեմքին շնայել, կապեց նրա փողկապը:

— Նունո... ես ուզում էի քեզ ասել...—հանկարծ խորունկ փաղաքշանքով ասաց Տիգրանն ու լռեց, երկար լռեց.— ես, ճիշտ է, մինչև հիմի թաքցրել եմ քեզանից, լավ չեմ արել... ամաշում էի, թե հանկարծ չընդունվեմ: Դու ուրիշներին էլ մի' ասի... Սիրտս նորից դողում է քննության համար:

— Իզուր: Դու քննություն կբռնես,—կրկին խուսափելով նրա հայացքից, անվրդով, հանգիստ պատասխանեց Նունոն, ավարտելով փողկապ կապելը:—Դե, ես գնում եմ, օլիմպիականից շուշանամ: Քննությունդ թե շուտ վերջացնես՝ կուզես արի, ես էնտեղ կլինեմ:

Նունոն մոտեցավ դռներին: Տիգրանն արագ շրջվեց ետ, ուզեց ձայն տալ, ինչ-որ բան ասել նրան: Նունոն բացեց դուռն ու ապշած կանգ առավ: Դռների մեջ հայտնվեց Սոնա տատին: Նա բեռնված էր խուրջինով, դանազան մանր կապոցներով, փոքրիկ կողովներով:

— Նանի՛,—զարմացած կանչեց Նունոն,—էս ո՞նց եկար: Սոնա տատին խոսելով կապոցներն ու կողովները քաշ տվեց ներս:

— Գիտեիք՝ թե չե՞մ դա: Հո՛, եկա, դե՛ գնացեք: Ինձ թողեցիք որ մեռնեմ, ես էլ միտքս ծռեցի, չմեռա, ու հրես եկել եմ տեսնեմ առանց ինձ ոնց եք էստեղ ապրում... էդ ու՛ր, Նունո:

— Ես շտապում եմ, նանի, շատ եմ շտապում... Դո՛ւ, ճամփից ես եկել, մի քիչ հանգստացիր, ես հիմա կգամ,—շփոթված պատասխանեց Նունոն, խուսափելով Սոնա տատից ու արագ հեռացավ:

— Ո՞նց ես, նանի ջան,—զարմանքից դեռ ուշքի չեկած հարցրեց Տիգրանը, մորը գրկեց, արագ-արագ ձեռքերից վար առնելով կապոցները, կողովները:

— Ես լավ եմ, քո տղերքը լավ չեն,—ցուցամատը տնկելով ասաց Սոնա տատին, հետո փնտրելով շոշափեց ծոցը,

ապա կարծես հիշեց, կռացավ, արագ ու իրար հետևից բարձ-
րացրեց իր բազմաթիվ ու լայն շրջազգեստների փեշերը, ամե-
նատակի փեշին կարած ծաղկավոր գրպանից հանեց թաշկի-
նակը, քանդեց ականջի հանգույցը, ուր հոգատար խնամքով
պահված մի նամակ կար ու մի քանի արծաթե ու թղթե դրամ-
ներ: Նամակը պարզեց որդուն:

Տիգրանն անհանգիստ վերցրեց նամակը, կարդաց, կար-
ծես սառը ջուր ածեցին գլխին, չնայեց մորը, ոչ մի խոսք չա-
սաց նրան, պոկվեց տեղից ու շտապ վազեց սենյակից դուրս:
Սոնա տատին վախեցած շտկվեց, նայեց որդուն, տեսնես ի՛նչ
պատահեց, ու արագ գնաց նրա հետևից, անցավ միջանցքով,
հասավ մինչև աստիճանների մոտ, թեքվեց ճաղից, նայեց դե-
պի վար, բայց Տիգրանն արդեն չկար: Շվարուն կանգնած Սո-
նա տատին նայեց շուրջը, որոնելով նորից նայեց վար, ապա
դանդաղ վերադարձավ, մտավ ներս, ծածկեց բաց թողած
դռները:

Հանկարծ ուժեղ թակեցին դուռը: Արագորեն ներս մտավ
Սեդան, հետը կարծես ինչ-որ կարկաչուն զվարթ աղմուկ
բերելով:

— Պո՛ւյ, եկե՛լ ես, Սոնա տատի... Իսկ ինչո՞ւ ես ինձ
այդպես նայում: Տիգրանն ու՛ր է:

Սոնա տատին մեջքով շրջվեց նրան, փոքրիկ քիթը կծկե-
լով՝ ուսի վրայից խիստ նայեց ետ.

— Տիգրանը չկա՛... Ու չի էլ գա՛: Գնաց:

— Իսկ ինչո՞ւ չսպասեց ինձ:

Սոնա տատին չպատասխանեց, շրջեց երեսը, ուսերը քա-
շեց վեր, կզակը բարձր բռնած՝ շրթունքներն ուժեղ սեղմեց
իրար, բարկությունից երկար լռեց: Սեդան ժպտաց ու հեռա-
ցավ: Սոնա տատին կանչեց նրա հետևից, ուղղեց լաշակ-
ները:

Քիչ հետո խաղաղվելով նա հայացքը պտտեցրեց իրերի
վրա, մոտեցավ մահճակալներին, կռացավ, հետաքրքրությամբ
ու կարծես թաքուն, մեկիկ-մեկիկ ղգուշորեն բարձրացրեց
մետաքսե անկողնու ծալերը, հրապուրվելով ուշադիր զննեց,
տնտղեց, մտքի մեջ երևի հազար ու մի վճիռ հանելով:

Դուռը նորից թակեցին: Բայց այս անգամ ավելի հանգիստ, մեղմ: Սոնա տատին արագ ուղղվեց: Միքայելը մտավ ներս, դռների մոտ կանգնեց, նայեց նրան, պարզամիտ ու քնքշորեն ժպտաց.

— Բարև ձեզ... Ը՛մ, ներեցեք, նունուն դեռ չի՞ գնացել:

Սոնա տատին շալատասխանեց, նորից շրջվեց մեջքով: Նրա վերաբերմունքից Միքայելը շփոթվեց. ինչու այդպես ընդունեց իրեն, ոչինչ չհասկացավ, ետ-ետ քաշվելով ելավ դուրս:

... Տիգրանն աստիճաններից արագ վազելով հյուրանոցի ընդարձակ վեստիբյուլում հասավ նունոյին, ձայն տվեց: Նունոն շրջվեց, կանգնեց մարմարե սյուների մոտ, Տիգրանը մոտեցավ նրան:

— Ա՛ռ, նունո, կարդա՛, ոչինչ չեմ հասկանում:

Նունոն երկյուղով նայեց ամուսնուն, այնպես այլաշլված, հուզված էր նա: Վերցրեց նամակը, կիսաձայն կարդաց.

— «Տրակտորների վերանորոգումը ժամկետին չենք կարող ավարտել: Խոպանի հերկը նույնպես: Մեր բրիգադը կարող է ետ մնալ: Իսկ ես հենց առաջին դասին տապալվեցի շերտյոժի քննությունից: Չեմ կարող գլուխ հանել: Շտապ արի, վերադարձիր, մի ուշանա: Լևոն»:

— Էն ժամանակ նա հրաշալի շերտյոժ նկարեց: Սիմոնն էլ... հո՛ ինքդ տեսար: Դե՛, արի ու հասկացիր, — փոխված ձայնով, դառնացած ասաց Տիգրանը:

Նունոն մի փոքր շփոթված կախեց հայացքը: Տիգրանը նկատեց, կասկածելի կերպով նայեց նրան:

— Դու որևէ բան գիտե՞ս, նունո:

— Էդ ես նկարեցի նրա շերտյոժը, — ցածր ձայնով պատասխանեց Նունոն:

— Դու՛:

Նունոն բարձրացրեց գլուխը:

— Ըհը՛: Լևոնն սկսեց նկարել, բայց հանկարծ վախից շփոթվեց, մոռացավ: Նա որ շփոթվում է, ամեն ինչ մտքից ընկնում է, մոռանում: Դե, ես էլ վերցրի ու նրա փոխարեն նկարեցի, որ Խեչանը քեզ քաղաք թողնեի...

Տիգրանն ապշած նայեց նրան:

— Ինչի՞ չես հավատում, որ ես կարող էի, — նույնն հան-
ցավոր ու թեթև ժպտաց: — Ես ուզում էի քեզ ասել, բայց էն
ժամանակ մենք խռովեցինք ու էդպես էլ մնաց, չասացի:

— Կա՛մ չես արել, — վրդովված խոսեց Տիգրանը, — հիմի
ես ստիպված պիտի շտապ ետ գնամ:

Նրա խոսքերը նույնն ընդունեց որպես ծանր հանդիմա-
նություն, կշտամբանք, խղճի խայթ զգաց:

— Կա՛մ: Ինքս կգնամ:

— Բայց էսօր դու պիտի ելույթ ունենաս...

— Ես մի ուրիշ անգամ ելույթ կունենամ... Սա հո՛ւ վեր-
ջին օլիմպիադան չէ: Իսկ դու մի տարի կկորցնես:

— Նույն՞...

— Մեղավորը ես եմ, ես էլ կգնամ... մի՛ մտածիր...
Գնացքը ե՛րբ է գնում:

— Գնա՛ցքը: Յոթն անց երեսուն: Քառասուն րոպե հետո:

— Չեմ էլ հասցնի, թե շորերս փոխեմ: Իրերս էլ... լա՛վ,
հետդ կբերես, ոչինչ չմոռանաս: Քառասուն րոպեում ես
կհասնեմ կայարան: Չէ, պետք չէ, չէ՛, դու մի գա ինձ հետ
ես մենակ կգնամ: Կանցնես օլիմպիադայի տեղը, կասես որ
ես չեմ գալու... Դե՛, գնացի ինքդ էլ գնա, շուշանաս:

— Նույն... շնորհակալ եմ: Գնա:

Նույնն գլխով լռիկ հրաժեշտ տվեց, մեղմորեն փայլփլող
աչքերը հառած նրան, հեռացավ: Տիգրանն արագ դուրս եկավ
փողոց:

XIII

Վեստիրյուլում, ամուսնուց բաժանվելով, նույնն մոտե-
ցավ հյուրանոցի հերթապահին:

— Ինձ ավտո կարելի՞ է մինչև կայարան:

— Չկա: Ավտոներով գնացել են օլիպմիադայի, — պա-
տասխանեց հերթապահը, — մի ժամից՝ խնդրեմ: Շուտ չի լինի:

— Չէ, մի ժամից ուշ է: Ես պիտի կես ժամից տեղ հաս-
նեմ: Ինչպե՞ս անել:

— Ինչի՞ կես ժամ, ավելի շուտ, — հանկարծ նույն լսեց
Խեչանի բարձր ձայնը, շրջվեց: Խոսելով մոտեցավ Խեչանը, —
պետք է վազել, ումուղ ջան, ուշանում ենք: Դե՛, գնանք:
Ինչի՞ կես մենակ:

Նույն շփոթված ժպիտով նայեց նրան: Խեչանը բռնեց
Նույնի ձեռքը, տարավ: Հյուրանոցից դուրս ելան փողոց:
Ինչ-որ մի գող, խորը մի երկյուղ պատել էր Նույնին. որտե-
ղից պատահեց Խեչանը, ինչ ասի նրան, արդյո՞ք պատմի՞
ամեն ինչ, արդյո՞ք կթողնի՞ իրեն, չի՞ զայրանա, ետ չի՞
ուղարկի Տիգրանին... Չէ՛, չէ՛, թող ոչինչ չիմանա Խեչանը,
մտածում էր Նույն, դանդաղ ու մի փոքր ետ քայլելով նրա
կողքից:

— Ուշանում ենք, չե՞ս լսում, Նույն, առաջինը դու պիտի
ելույթ ունենաս, արի, է՛, — ետ նայելով շտապեցրեց Խեչանը:

— Չէ, ես... էսօր ես ելույթ չեմ ունենալու, — նորից
շփոթվելով պատասխանեց Նույն, — Միքայելը եկավ ինձ ա-
սաց, իմ ելույթը հետաձգված է վաղը:

— Վա՞ղը: Էդ քո Միքայելը հո՞ չի շփոթել: Լավ է
ստուգենք...

— Չէ, ես օլիմպիադայի չեմ գնա... Սիրտս ման գալ է
ուզում, մի քիչ քաղաքում պտտել, թե չէ՝ Երևանը շտեպած՝
պիտի գյուղ գնամ: Իսկ դու գնա օլիմպիադայի:

— Որ վաղն ես երգելու, քեզ հետ ման գալու կգամ: Մե-
նակ հո չե՞ս գնա:

Նույն չպատասխանեց, միանգամից արագացրեց քայ-
լերը:

— Համբերի, էլ ինչի՞ կես վազում, — նրա հետևից հաս-
նելով կանչեց Խեչանը:

Նրանք անցան տրամվայի կայանի մոտով: Մոտեցավ մի
տրամվայ, Խեչանը կանգ առավ:

— Տրամվայով չգնա՞նք, Նույն, հը՞:

Նույն նայեց տրամվային, նրա վրա գրված էր. «Կենտ-
րոն — աերոպորտ»:

— Ի՛, ի՞նչ հաճույք տրամվայով ման գալ: Նեղվածք է...
տոթ... — պատասխանեց Նույն:

— Դու գիտես: Իսկ ես սիրում եմ: Գյուղում հո տրամվայ չկա: Մտիկ, դատարկ է:

— Հիմի ժողովուրդը լիքը կլցվի: Կալ է՝ ոտքով գնանք: Կայանում բազմաթիվ սպասող ուղևորներից նստեցին միայն մի քանի հոգի ու գրեթե դատարկ գնաց տրամվայը: Խեղանք հառաչեց.

— Է՛հ, ի՞նչ ասեմ քեզ: Դե՛, լավ, գնանք ոտքով:

Նրանք դեռ չէին հեռացել, երբ մոտեցավ երկրորդ տրամվայը, նրա վրա գրված էր. «Կենտրոն—կայարան»: Տրամվայը ղեփ-լեցուն էր: Կայանում սպասող ուղևորներն իրենց ճամբրովներով, կապոցներով խոնվեցին տրամվայի մուտքի մոտ: Նույնն հանկարծ անխոս բաժանվեց Խեղանից, փախավ, նետվեց ուղևորների մեջ:

— Էդ ո՞ւր, էդ ո՞ւր, — կանչեց Խեղանը:

Բայց հոսանքի հետ նույնն արդեն բարձրացավ ներս: Խեղանը շտապեց նրա հետևից, սակայն ուղևորներն այնքան շատ էին, որ չկարողացավ բարձրանալ: Նույնն պատուհանից նայեց դուրս, տեսավ Խեղանին, ժպտաց, գլխով հրաժեշտ տվեց, բայց Խեղանին թվաց կանչում է իրեն: Տրամվայը գնաց: Սակայն Խեղանը, որ վերջիվերջո մի կերպ կարողացել էր բարձրանալ, ուղևորների միջից խցկվելով մոտեցավ նույնին: Նույնն շնկատեց նրան, նայեց տոմսավաճառին, հարցրեց.

— Հեռո՞ւ է կայարանը, քանի՞ րոպեում կհասնենք:

— Կայարանում ի՞նչ ունես... — Նույնն հանկարծ լսեց Խեղանի ձայնը, ցնցվեց, զարմացած նայեց ետ:

— Խեղա՞ն... նստեցի՞ր:

— Համա թե տրամվայ ջոկեցիր, հա՛: Բա չէի՞ր ուզում: Կայարանում գո՞րծ ունես:

— Չէ: Տրամվայը կայարան է գնում՝ ես էլ հարցրի:

— Ասենք ոչինչ, գնանք կայարան: Ինձ էլ հարկավոր է հեռագրատուն մտնել:

Այլևս ոչինչ չխոսեցին նրանք: Ամբողջ ճանապարհին Նույնն լուռ էր, միայն մտածում էր Խեղանից ազատվելու մա-

աին, որքան ժամանակ կորցրեց նրա հետ, արդյոք չի՞ ուշա-
նա, կհասնի՞ գնացքին:

Շուտով տրամվայը կանգ առավ կայարանի հրապարակում:
Ուղևորների հետ իջան նաև Նունոն ու Խեչանը: Նունոն նայեց
հրապարակի ժամացույցին, գնացքին ընդամենը մնում էր
հինգ րոպե, ապա նա անհանգիստ հայացքը դարձրեց Խեչանին
ու տրադ փախավ: Բայց ահա հակառակի պես, հանկարծակի
անցնող ավտոների հոսանքը փակեց նրա ճանապարհը: Նու-
նոն անհանգիստ նետվեց ավտոների հոսանքի մեջ, Խեչանը
հաղիվ բռնեց նրան, ետ քաշեց, պահեց: Նունոն ձեռքը քաշքը-
շելով ուղեց ազատվել, սակայն ամուր բռնել էր Խեչանը: Վեր-
ջապես ավտոներն անցան: Նունոն ազատվելով նրանից՝ փա-
խավ, կարծես քամին քշեց, տարավ նրան:

Կայարանի դահլիճում, փոստ-հեռագրատան պատուհա-
նի մոտ, Խեչանը հասավ Նունոյին, անհանգստացած բռնեց
նրան:

— Քեզ ի՞նչ է պատահել, Նունո:

— Խեչան, ես ուզում եմ ասել...—մի առանձին վճռա-
կանությամբ հանկարծ խոսեց Նունոն:

Բայց ուղիղ այդ պահին լսվեց շոգեքարշի սուլոցն ու վա-
գոնների շխշխկոցը: Նունոն այլևս ոչինչ չշարունակեց, նայեց
դեպի կառամատույցի կողմը: Գնացքը շարժվեց, հեռացավ:

— Է՛, գնաց, — աչքը չհեռացնելով կառամատույցից, հույ-
սը կորցրած, զայրույթով ասաց Նունոն:

— Ո՞վ գնաց, — գլխի շրնկնելով հարցրեց Խեչանը, ապա
խորը զննելով հետաքրքրությամբ երկար նայեց նրան. — հաս-
կանում եմ, լեզվիդ տակին դու բան ունես պահած: Կա՞մ,
համբերի՞ հեռագրին պատասխան տամ, կխոսենք: Չեր տղա-
ներից է:

— Ի՞նչ հեռագիր, — կենդանացած հարցրեց Նունոն:

— Հասկանո՞ւմ եմ: Ուզում եմ հեռագրել, մի ուրիշին ու-
ղարկեն բան հասկանամ: Ա՛ռ, կարդա, — ու ծոցից հանեց հե-
ռագիրը, պարզեց Նունոյին:

Նունոն վերցրեց, կարդաց.

— «Իմացանք Լեոնի նամակի մասին: Ամենևին ոչ: Կուեկտիվ կերպով օգնում ենք նրան: Եվ ժամկետին կալարտենք: Ցանկանում ենք օլիմպիադայում հաջողություններ: Սիմոն»։ — Սա ինձ համար... չէ, հետո քեզ կպատմեմ: Շուտ արա հասնենք, Խեչան: Շուտ արա գնանք: Ես օլիմպիադայում պիտի ելույթ ունենամ, — հանկարծակի խառնվելով ասաց Նունոն, բռնեց անակնկալից զարմացած Խեչանի ձեռքը, և այս անգամ արդեն ինքը քաշ տալով նրան, վազեց դուրս:

XIV

Օլիմպիադան վաղուց սկսվել էր, երբ Նունոն Խեչանի հետ նախասրահի մարմարե աստիճաններով բարձրացավ վեր: Աստիճանների վրա նեղ դորգեր կային փռված, իսկ աջ ու ձախ դարսած բրոնզե քանդակներով բարձր սկահակների մեջ՝ ծաղիկների փնջեր կային թեթև ու սառնորակ բուրմունքով: Ահա վերջացան աստիճանները: Կիսախավար սրահում բազմաթիվ մոմերով ջահերը հանգած էին: Սրահի խորքում, այս ու այնտեղ հատ ու կենտ մարդիկ էին երևում: Դահլիճից խուլ լրսվում էին նվագի ու երգի ձայներ: Նունոն մի պահ շվարուն կանգնեց սրահում: Ուշացան, այո, շատ-շատ ուշացան, տեսնես չի՞ անցել երգելու իր հերթը, արդյոք հիմա հնարավոր է, կթողնե՞ն որ երգի, մտածում էր Նունոն: Ու հանկարծ սիրտը դողաց, ինչ-որ անհանգիստ մի զգացում կաշկանդեց նրան: Դժվարանում էր ուշացած ներկայանալ, արդյոք չթողնի՞, չվերադառնա՞ տուն:

Խեչանն արագ տարավ նրան, մտան լույսերով ողողված զարդասենյակների սրահը: Աղջիկները, կանայք, ծերունիները խռնվել էին շողացող հատակով սրահում: Քաղաքներից, գյուղերից իրենց ճոխ ու խայտաբղետ հին տարազներով, իրենց զարդարուն թմբուկներով, սրինգներով, թառերով, նրանք եկել հավաքվել էին օլիմպիադային մասնակցելու: Եկել էին Շիրակից՝ ոսկեթել ծաղիկներով ելուզած կարմիր-կապույտ վառվռուն խրիսաններով, ճերմակ քողերը թիկունք-

ներին, ճակատները, լանջերը, դաստակներն ականակուռ զարդերով: Եկել էին բրդե շորերով, թուխ բեղերով հին սասունցիները, պարելու համար պայտե նիզակներ ու վահաններ պահած: Եկել էին զնգզնգան զարդերով, վառվռուն զգեստներով զանգեզուրցիները: Եկել էին զազախի շուխաներով, փափախներով լոռեցիները:

— Միքայել, նունոն եկավ, — կանչեց աղջիկներից մեկը և ուրախ վազեց լուրը տանելու:

Ծանոթները շրջապատեցին նունոյին:

— Ո՛ւր էիր, նունո: Միքայելը քեզ շատ փնտրեց:

Նունոն շաատասխանեց: Խեչանը նրան տարավ բեմի կողմը: Բայց հանկարծ, մեկն ամուր քաշեց նրա թևից, բռնեց: Նունոն շուռ եկավ, տեսավ Սոնա տատին:

— Վա՛յ, նանի՛: Էստեղ ի՞նչ ես անում:

— Գիտեիր՝ չեմ իմանա՛, որ պիտի երգես: Իմացա ու հրես եկել եմ, — հպարտ, հանգիստ ասաց Սոնա տատին:

— Հրա՛շք ես: Ե՛րբ ես եկել, Սոնա, — հարցրեց Խեչանը:

— Առավոտը: Տիգրանն ո՛ւր է, նունո:

Նունոն ուղեց պատասխանել, բայց ուղիղ այդ պահին մոտեցավ Միքայելը:

— Ո՛ւր էիր, նունո: Ձեր պատճառով կես ժամ ուշ սկսվեց: Ինչո՞ւ ուշացաք...

— Հետո կասեմ, — ասաց Խեչանը, — ուշացե՛լ է, չի՞ երգելու...

— Երգելու է: Հիմա ձեր մուտքն է, նունո: Շտապեցեք, — ու Միքայելն անհանգիստ, թեթև երկյուղով նայեց Սոնա տատին:

Խեչանը նկատեց Միքայելի շփոթմունքը.

— Դահլիճ չգնա՞նք, Սոնա, — միջադեպից խուսափելով համոզեց նա: — Էնտեղից լավ է լսելը: Դե՛, արի:

Սոնա տատին հասկացավ Խեչանի միտքը, ժպտաց, շաատասխանեց նրան, նայեց նունոյին ու մի կողմ քաշելով՝ հոգատար քշիչաց, անհանգստացավ:

— Դոշդ ծածկիր: Դոշդ բաց է:

— Վիզս է, նանի, մենակ վիզս...

— Մի հաշիվ է, ամոթ է,— գաղտնի ու խրատական շարունակեց Սոնա տատին, և որպէս մեծ զոհաբերութիւնն իր կողմից, հանեց խոշոր ծաղիկներով իր շալը՝ նետեց նրա ուսերին:

Նունոն փորձեց շալը վերցնել, հանկարծ աչքն ընկավ սրահի հայելուն, մոտիկից դիտեց իրեն, շալը հաճելի թվաց, և միաժամանակ չկամենալով Սոնա տատինն վշտացնել, թողեց ուսերին: Միքայելն արագ մոտեցավ նրանց, բռնեց Նունոյի ձեռքից, բաժանելով տարավ նրան, այնպէս արագ, հանկարծակի, որ զարմանքից Սոնա տատին մի պահ մնաց անշարժ: Մի քանի քայլ հեռացավ Միքայելը, ուսի վրայից նայեց ետ ու գնաց, Նունոյի հետ խառնվեց բազմութեան մեջ:

Լուռ, անսահման լուռ էր շքեղ օթյակներով, դեղահարկերով բարձր երկնահաս դահլիճը: Լուսթյան մեջ քայլելիս Նունոն լսեց միայն հատակի ճոճոցը, մոտեցավ բեմի վրա նստած երաժիշտներին, կանգ առավ, սիրտը դեռ թրթռում էր, մատները դողում: Լարված նայում էին իրեն անթիվ դեմքեր, քարացած, անսահման լուսթյամբ, իսկ ինքն ամբողջովին հեղեղված էր լույսերի մեջ, կարծես հալվել էր լույսերից: Աչքերը շաղկեցին, գլուխն սկսեց պտտվել, նորից շփոթվեց, ականջի հետևն ուղղեց մազերը, գողումի նայեց շուրջը, վարագույրի ծալքերի մոտ տեսավ Միքայելին, հազիվ ժպտաց: Մորմոքով հնչեցին ջութակները, սրինգները հառաչեցին, երգեց Նունոն.

Քելեր, ցուեր՝ իմ յարը,

Արևի տակին

Քելեր, ցուեր՝ իմ յարը.

Սարի սովոր,

Մեն մենավոր,

Շե՛կ տըղա,

Շո՛ղ արեգակ,

Թո՛ղ արեգակ,

Ե՛կ, տըղա:

Դահլիճում լսում էին ամենքը, հպարտ լսում էր Խեչանը, լսում էր Լևոնյանը՝ բարձր ծաղիկներով զարդարված սեղանի մոտ, ժյուրիի անդամների հետ։ Լսում էին կուլիսներում։ Սիրտը լցված լսում էր Սոնա տատին Միքայելի կողքը կանգնած ու արցունքոտ աչքերով, ժպտերես, հպարտ նայում էր շուրջը, նորից լսում։

Դահլիճի խորքում հանկարծ դռների թեթև աղմուկ բարձրացավ։ Հանդիսականներից ոմանք շշուկներ արձակելով նայեցին ետ։ Քննությունից հաջող վերադառնալով ուրախ ներս մտան Տիգրանն ու Սեդան։ Նրանք կանգ առան դռների մոտ։ Տիգրանը դարձացած նկատեց Նունոյին. չի՞ դնացել ուրեմն, ինչո՞ւ չի վերադարձել... Սիրտն սկսեց տափալով թրթռալ, ոչինչ չէր հասկանում, չէր կարող կռահել։ Հնչում էին ջութակները, դահլիճը հեղեղվել էր սրինգների ձայներով, երգում էր Նունոն.

Քելեր, ցուեր՝ իմ յարը,
Գերանդին ուսին,
Քելեր, ցուեր՝ իմ յարը.
Հով ծառի տակ,
Զով ծառի տակ,
Ե՛կ, տըղա,
Հունձ ես արել,
Քրտինք դառել,
Շե՛կ տըղա։

— Կավ է երգում։ Հրաշալի է, — շնչաց Սեդան։ — Բախտդ բերել է, Տիգրան։ Բայց երբեմն դու վատ ես վարվում նրա հետ, և անուշադիր ես, ինձ դուր չի գալիս։ Նա շարունակ քեզանից նեղացած է։

Տիգրանը կարծես չսեց, թողեց նրան, ելավ դուրս։ Արագ գնաց՝ մտավ զարդասենյակների սրահը։ Արդեն ոչ ոք չկար այնտեղ, դատարկ էր սրահը։ Բեմի կողմից՝ դահլիճից լսվում էր ծափերի աղմուկը։ Շուտով արագ ներս մտավ Նունոն, շփոթված, շիկնած. նրա հետևից անմիջապես ներս թափվեցին բոլորը, շրջապատեցին նրան։ Շատերը դեռ ծափահարում

էին, շնորհավորում: Ամենքին ժպտում էր նունոն՝ շփոթված, անխոս: Տիգրանին շնկատեց: Սոնա տատին հպարտացած ու ժպտերես պատասխանելով ամենքին՝ աջ ու ձախ տըմբ-տըմբացնում էր գլուխը, հետո քնքշորեն բռնեց նունոյի ուսե-րից, նստեցրեց բազմոցի վրա:

— Նունո՛, չե՞ս գնացել, — մոտենալով հարցրեց Տիգ-րանը:

— Չէ՛: Սիմոնից խեղանի մոտ հեռագիր կա... Ամեն ինչ կարգին է...

Մի խումբ լրագրողներ, լուսանկարիչներ Սարոյանի հետ մոտեցան նունոյին:

— Ծանոթացե՛ք, — ներկայացրեց Սարոյանը նունոյին, — հրաշալի երգչուհի և անվանի տրակտորիստ: Շնորհավորում եմ, նունո: Դուք մեծ անուն հանեցիք: Ձեզ ուզում են նկարել: Իսկ դուք, Տիգրան, հեռու չգնաք... Նունոյի ամուսինն է, ծանոթացե՛ք:

Տիգրանը կարմրեց, բայց անմիջապես տիրապետեց իրեն: Ամեն կողմից նկարեցին նունոյին:

— Իսկ հիմա խմբով, — շարունակեց Սարոյանը: — Դուք նունոյի մա՞յրն եք, ո՞չ: Ամուսնո՞ւ մայրը: Լա՛վ: Կանգնեք այստեղ: Իսկ դուք ձախ կողմը, նունո, բռնեցե՛ք ձեր ամուս-նու թևը:

Տիգրանը նորից կարմրեց, թևը քաշելով հեռացավ:

— Ո՞ւր, Տիգրան: Ո՞ւր եք գնում, — կանչեց Սարոյանը:

Բայց նա չպատասխանեց, շնայեց ետ, հեռացավ: Ան-նկատելի, բայց խորունկ ամոթով ճնշվեց նունոն, ինչ-որ ան-հանգստություն տիրեց նրան: Սարոյանը երկար նայեց հե-ռացող Տիգրանին: Նունոն արագ քայլերով նույնպես հեռա-ցավ Տիգրանի հետևից, մոտեցավ նրան:

— Ի՞նչ պատահեց քեզ: Քննությունդ ո՞նց անցավ: Ին-չո՞ւ հեռացար:

— Քննությունս բռնեցի, իսկ էստեղ ես գործ չունեմ, նկարում են քեզ, դու հրաշալի երգչուհի ես, դու անվանի տրակտորիստ, դու...

— Ինչե՞ր ես խոսում, Տիգրան,— Նունոն ընդհատեց նրան:

— Լավ է, գոնե ինքդ հիշում ես իմ անունը,— շմեղմանալով շարունակեց Տիգրանը,— ուրիշներն ինձ հիմի պարզապես կանչում են. «Նունոյի ամուսին»: Իմ անունն ինձ հերիք է: Ես ոչ ոքի չեմ ուզում ամուսին լինել:

Ու նորից գնաց, մոտեցավ մարմարե բարձր ծաղկամանի մոտ կանգնած Սեդային: Նունոն շփոթված նայեց, վիրավորված ու հպարտ շրջեց երեսը: Միքայելն ուրախ խոսելով մոտեցավ Նունոյին:

— Ձեր երգով, Նունո, հիացած են բոլորը: Մրցանակ անպայման կշահեք: Ինքը, պրոֆեսոր Լևոնյանն է այժմ ասում՝ ձեզ անհրաժեշտ է սովորել: Մնացեք անպայման:

— Ձեմ ուզում: Ես էսօր գնալու եմ գյուղ,— տիրապետելով իրեն, ինչ-որ ճիգով ժպտաց, կամացուկ պատասխանեց Նունոն:

— Նորի՞ց: Ախր ինչո՞ւ չեք ուզում,— և Միքայելը եռանդով ու երկար սկսեց համոզել նրան:

Իսկ քիչ հեռու, մարմարե բարձր ծաղկամանի մոտ դեռ զրուցում էին Սեդան ու Տիգրանը: Ծաղիկների մանր ստվերները քնքշորեն ու խաղաղ փռվել էին Սեդայի ոսկեգույն դեմքի վրա և կարծես ավելի գեղեցկացրել էին նրան, բայց նա հոգեպես հուզված էր, անհանգիստ:

— Դու չիմացար, Սեդա: Ինձ համար վիրավորական է: Ինձ արդեն սկսում են ճանաչել միայն որպես Նունոյի ամուսին:

— Հիմարություններ ես խոսում, Տիգրան,— ցրված պատասխանեց Սեդան, ուշադիր նայելով Միքայելի ու Նունոյի կողմը:

— Ինչո՞ւ է հիմարություն:

— Որովհետև հիմարություն է:

— Ձէ՛, պատասխանիր ինձ, Սեդա: Ինչո՞ւ չես պատասխանում: Ո՞ւր ես նայում: Դո՞ւ էլ ես նայում Նունոյին:

Իսկ Սոնա տատին լրագրողների և լուսանկարիչների

կենտրոնում, որոնք ուշադիր ժպիտներով լսում էին նրան, բազմոցի վրա հպարտ նստած, կարծես փառքի պտուղներն աշխարհում մենակ վայելելով, հանդիստ պատմում էր, հրճվանքով գովում Նունոյին.

— Մեր Նունոն գեղում առաջին երգ ասողն է. ինքն էլ կրակի պես աշխատող, ոսկի ձեռքեր ունի: Տան միջին էլ՝ վարդ ու սուսամբար: Աստված թող ամեն օջախի իմ Նունոյի պես հարս տա... Չես հավատում՝ հարցրու: Տիգրանին, — ու հայացքով անհանգիստ որոնեց նրան:

Տիգրանն ավելի աշխուժացած զրուցում էր Սեդայի հետ: Չէր լսում Սոնա տատիի խոսքերը: Սոնա տատին գտավ, նկատեց նրան, ինչ-որ անհանգստություն սահեց դեմքի վրա:

— Քա՛, Նունոն ո՞ւր է, — ինքն իրեն թոնթորաց Սոնա տատին, փնտրելով շրջեց երեսը:

Քիչ հեռու, Միքայելի մոտ կանգնած էր Նունոն. կասկածելի կերպով կամաց, հայացքը կախ զրուցում էր նրա հետ:

Սոնա տատին իր խոսքը թողեց կիսատ, առանց նեղվելու բարձրացավ, անհանգիստ ու մանր արագ քայլերով մոտեցավ Նունոյին, անխոս ու զայրացած նրան Միքայելից բաժանելով՝ քաշ տվեց իր հետևից, ապա մոտեցավ Տիգրանին՝ նրան նույնպես բաժանեց Սեդայից, մի քանի քայլ հեռացավ, կանգնեց:

— Ինձ տուն տարեք: Բեզարել եմ: Տեսնո՞ւմ չե՞ք՝ ոտքի վրա չեմ դիմանում, — խիստ ու անդրդվելի պահանջեց Սոնա տատին, իր հոգնածությունն ու ցավերը նույնիսկ թեթևակի արտահայտելով և այնպես լճուականությամբ երկուսին էլ քաշ տվեց իր հետևից, որ նրանք հարկադրված, ինչ-որ երկուողով անխոս անթարկվեցին:

Եվ հենց այն պահին, երբ նրանք հեռանում էին սրահի միջով, Սեդան մոտեցավ Միքայելին:

— Այն ի՞նչ էիր խոսում Նունոյի հետ, — հարցրեց Սեդան, — նա իրոք այդքան տաղանդավոր է և գեղեցիկ: Դու նրան գեղեցիկ ես համարում: Ինչո՞ւ ես նրան նայում այդպիսի աչքերով:

— Սեդա, դու խանդո՞ւմ ես, — հանկարծակիի եկած բա-
ցադանչեց Միքայելը:

— Խանդո՞ւմ եմ, այո՛, խանդում եմ: Չհամարձակվեո
նրան նայել այդպիսի աչքերով: Այդպիսի աչքերով դու կա-
րող ես միայն ինձ նայել...

Միքայելը ժպտաց:

XV

Ամբողջ ճանապարհին անխոս քայլելով ու իրարից զայ-
րացած, նրանք օլիմպիադայից վերադարձան հյուրանոց:
Ներս մտնելով Սոնա տատին բարկությունից շրխկացրեց դու-
ռը: Նունոն հանկարծակի բռնկվելով, դռան աղմուկի վրա
շրջվեց Սոնա տատիին:

— Ինձ ինչի՞ քաշ տվեցիր օլիմպիադայից...

— Գործ չունես ուրիշի փեսացուի հետ, որտեղ պատա-
հի՞ էնտեղ խոսես: Հրես դու քո մարդն ունես, — զայրացած
ասաց Սոնա տատին:

— Սիրտս ում հետ ուզի, նրա հետ (էլ կխոսեմ: Առաջ
ե՞ս մոտեցա Միքայելին: Տիգրանը մոտեցավ Սեդային: Մո-
տեցավ ու հետը երկար-բարակ խոսեց...

— Ինքդ հո՞ւ ասիր, սիրտդ ում հետ ուզի՞ նրա հետ էլ
կխոսես: Ասիր, չէ՞: Իսկ ես ինչի՞ չպիտի խոսեմ, — ընդհատե-
լով Նունոյին, վիրավորված բորբոքվելով պատասխանեց Տիգ-
րանը:

Բայց Նունոն, որի սիրտն անշափ լցված էր, այլևս չը-
համբերեց.

— Ես մաղուց գիտեմ, սիրտդ սառը չի նրա վրա, — ասաց
ու հանկարծ շիկնեց:

— Հա՛, էդպես է, պրծա՞նք, — զայրույթից շարունակեց
Տիգրանը:

— Թող էդպես լինի: Վերջը, հո խոստովանեցի՞ր: Դե,
ես կմնամ քաղաքում, կսովորեմ, դու էլ գնա՛ Սեդայի հետ
ամուսնացիր:

— Նունո՛ւ,—ճշաց Սոնա տատին:

— Թո՛ղ, նանի, միւնույն է, ես կասեմ,—պատասխանեց Նունոն,—նա կարծում է մենակ իրեն մասին պիտի գրեն թերթերում, մենակ իրեն պիտի պատիւ տան, մենակ իրեն է հարկավոր սովորել, որ օգաշու դուրս գա: Իսկ ինձ էլ ուզում է, որ թոնրի շրթին նստեմ, ոնց որ իրեն գերին... Այ, հիմի իմ մասին էլ կգրեն թերթերում: Որ երգչուհի դուրս գամ՝ էլի կգրեն: Կտեսնես, կմնամ քաղաքում, կսովորեմ, երգչուհի դուրս կգամ:

— Մնում ես՝ մնա: Ես էլ կմնամ...

— Տիգրա՛ն,—սաստեղով ու ավելի սարսափած ճշաց Սոնա տատին:

— Չէ, նանի, ինձ բան մի՛ ասի,—շարունակեց Տիգրա-
նը,—ինձ համար ի՛նչ կա, դյուզում առանց ինձ հիմի յուր
կզնան, փոխարինող կա: Կով ժամանակն է սովորելու: Կը-
մնամ: Թող շորերս հավաքեմ,—և իրոք, նա սկսեց իր զգեստ-
ները արագ-արագ հավաքել ճամբրուկի մեջ:

— Տիգրա՛ն,—հեծկլտաց Սոնա տատին:

— Կաց մի՛ լինի, նանի, պետք չի, լաց մի՛ լինի: Դու
բարե կտանես դյուզ ու մնացած շորերս կուղարկես: Հրես
իմ հասցեն,—նա գրեց հասցեն, թողեց սեղանի վրա, վերց-
րեց ճամբրուկը՝ գնաց:

Նունոն թիկունքով դեպի նրան կանգնած, աչքերն իր սո-
վորության պես կախ, հպարտ ու շիտակ ձգված. մնաց ան-
շարժ, բայց սիրտը հանկարծ սկսեց ուժգին բաբախել, սա-
կայն տիրապետելով իրեն, չըջվեց, չնայեց ետ: Ճիշտն
ասած, նա երբեք չէր սպասում այն ամենը, ինչ անսպասե-
լիորեն ու հանկարծակի տեղի ունեցավ: Սիրտը լցվեց մի
խորը կարեկցությամբ դեպի Տիգրանը, մի դառը և տխուր
կարեկցությամբ, բայց ինչպես միշտ, աշխատեց ամեն ինչ
թաքցնել: Իսկ Սոնա տատին, որ ամբողջ կուլի ժամանակ
անօգնական հարձակվում էր երբեմն Նունոյի, երբեմն Տիգ-
րանի վրա, աշխատելով մեղմացնել նրանց բորբոքվող վեճը,
այժմ ամենեին շնամանվելով ինքն իրեն, բազմոցի ծայրին
կծկված, խեղճ-խեղճ նստած, կամաց հեկեկում էր վշտից:

Դուռը հանկարծ թակեցին:

— Մտեք, — անուշադիր և ընկճված ձայն տվեց Նունոն:
Ներս մտավ պրոֆեսոր Լևոնյանը:

— Երեի ես անհարմար ժամանակ եկա, — ասաց նա բարեկեցիկ և մի պահ դռների մոտ կանգ առավ՝ նկատելով Նունոյի հուզված վիճակը ու դեռ լռիկ հեկեկացող Սոնա տատիին, — բայց անպայման ուզում էի ձեզ հետ խոսել: Միքայելն ինձ ասաց, որ այսօր դուք վերադառնում եք գյուղ:

Սոնա տատին լռեց, անհասկանալի ու լարված հայացքը դարձրեց նրան, աշխատելով թաքուն սրբել արցունքները:

— Նստեցեք, պրոֆեսոր, — Նունոն շփոթված հրավիրելով նրան աթոռ առաջարկեց:

Գլխարկն ու ձեռնափայտը դնելով աղատ բաղմոցի վրա, Լևոնյանը նստեց սեղանի մոտ:

— Ես ուղղակի պիտի խոսեմ: Երեսունվեց տարի է երաժշտություն եմ սովորեցնում, շուտով իմ յոթանասունը կլրանա, — խոսեց նա աչքերը սփռոցին դրած, հետո նայեց Նունոյին, — սովորեցրել եմ հարյուրավոր երգիչ-երգչուհիների, բայց պիտի խոստովանեմ, նրանց մեջ ձեզ նմանները քիչ կային: Դուք ինչո՞ւ չեք ուզում սովորել:

Սոնա տատին հետաքրքրությամբ նայեց նրան, նայեց Նունոյին:

— Ուզում եմ... — պատասխանեց Նունոն: — Բայց լքյուդից չեմ ուզում հեռանալ: Հիմի չեմ կարող... — Ու մեքենայորեն սկսեց զգեստները դանդաղ հավաքել ճամբրուկի մեջ:

Սոնա տատին թույլ ժպտաց, պառավ կնոջ խաղաղ ժպիտով, ուրախությունից ու երջանկությունից փոքրիկ դեմքը քնքշորեն շողշողաց, հեղեղվեց պայծառ լույսով:

— Դուք առաջին մրցանակ եք շահելու օլիմպիադայում: Ունենալ այդպիսի ձայն ու շնորհիլ՝ հանցանք է, — իր հաստ, ճերմակ հոնքերի տակից խորունկ նայելով հազիվ նկատելի ժպտաց, աշխատեց համոզել Լևոնյանը:

— Ես ի՞նչ հրաշալի ձայն ունեմ որ, — նույնպես ժպիտով պատասխանեց Նունոն, — մեր գյուղում ինձ նման երգող աղջիկներ չատ կան...

— Լո՞ւրջ եք ասում:

— Ազնիւ խոսք, պրոֆեսոր:

— Իսկ դուք չե՞ք կամենա սովորել:

— Ե՛ս: Ես, դե, ասացի, պրոֆեսոր, — պատասխանեց Նունոն, — դուցե հետո, մի տարի, երկու տարի հետո...

— Այդ արդեն ուշ է, — նրան ընդհատեց Լեոնյանը ու երկար լռեց, իր կապույտ խոշոր աչքերը մտածկոտ կկոցելով, ծերացած ձեռքի մատների ծայրերը սեղանին խաղացնելով: — Լավ, հավատում եմ ձեզ, կաշխատենք մի բան մտածել: Դե, ներեցեք ինձ, ցանկանում եմ առողջություն: Բարի գիշեր:

Նա վերցրեց գլխարկն ու ձեռնափայտը, հեռացավ: Նունոն նրան ուղեկցեց մինչև դռների մոտ, վերադարձավ, շարունակեց դասավորել զգեստները: Սոնա տատին այլևս ոչինչ չխոսեց, արցունքներից դեռ խոնավ, բայց բախտավորությունից վառվող աչքերով մոտեցավ Նունոյին ու տենդորեն սկսեց օգնել նրան:

XVI

Մոտիկ բակերից, տներից արագ իրար ձայն տալով, կանչելով, դուրս թափվեցին, ոմանք շտապելուց ձեռքի գործը թողած կիսատ, ոմանք ուրախությունից խառնված, շփոթված, վազելով եկան, եկան այգիներից, եկան կալերից, մոտիկ դաշտերից, գյուղական հրապարակը լցվեց բազմությամբ, ուրախ աղմուկով: Վիթխարի ուռիների տակ կանգնել էր երկաթուղու կայարանից հենց նոր վերադարձած՝ մարդկանցով լեցուն ավտոն: Բոլորը, որոնք մի քանի օր առաջ գնացին քաղաք՝ օլիմպիադային մասնակցելու, վերադարձել էին: Բայց նրանց մեջ այժմ չկային՝ Տիգրանը, Սեդան ու Միքայելը: Ավելացել էր միայն Սոնա տատին: Ավտոյի շուրջը խոնվելով դիմավորում, կանչում էին իրար, ասում-խոսում. ոմանք բարձրացան ավտոյի վրա, օգնելով՝ ձեռքից առնում էին իրերը, կապոցները, կանայք ու աղջիկներն ուրա-

խությունից համբուրում էին իրար: Մի քանիսը հարցնում, փնտրում էին Տիգրանին, բայց ոչ ոք չպատասխանեց. մի խորը տարակուսանք կարճատև լռությամբ համակեց բոլորին:

— Խեչան, Տիգրանն ո՞ւր է,— հարցրեց Սիմոնը:

— Մնաց քաղաքում: Սովորելու է... Օգաշու է դուրս գալու,— դլուխն ավտոյի դռնակից շրջելով դուրս, մռայլվելով պատասխանեց Խեչանը և անմիջապես շտապեցրեց շոֆերին,— դե՛, քշի՛ր, քշի՛ր գնա...

Ավտոն գնաց: Նրա վրա այժմ կողք-կողքի լուռ նստած էին միայն Սոնա տատին ու Նունոն: Ուրախությունը նորից կարծես մոռացնել տվեց ամեն ինչ: Բոլորը խոսելով, պատմելով բաժանվեցին, հեռացան: Մնացին միայն Սիմոնը, Լևոնը, Սաղաթելն ու մի խումբ տղաներ: Անշարժ, քարացած նրանք նայեցին հեռացող ավտոյի հետևից, հետո անխոն նայեցին իրար ու դուրս գալով ճանապարհի միջից, խմբով արագ վազեցին, թույն մոտիկ ցանկապատի վրայով, անհետացան: Քիչ հետո, այդու միջից նրանք դուրս եկան Խեչանենց բակը, շարվեցին բարձր ցանկապատի մոտ, նայեցին դեպի դուրս: Իսկույն մոտեցավ ավտոն: Խեչանն իջավ, գլխով շոֆերին ցույց տվեց Սոնա տատիի ու Նունոյի կողմը:

— Սրանց տուն կտանես, հետո քշիր գարաժ,— ու գրկի մեջ հավաքելով իր կապոցներն ու իրերը, մտավ բակը, աչքի տակով նայեց տղաներին ու բացահայտորեն չկամենալով խոսել, գնաց դեպի տուն:

— Խեչա՛ն...— թախանձելով ձայն տվեց Սիմոնը:

— Հը՞,— դյուրագրգիռ, խիստ հարցրեց Խեչանը, կանգ առավ:

— Մենակ մի բան հարցնեմ...

Բայց, ընդհատելով իրար, բոլորն անհանգիստ սկսեցին խոսել, հարցեր տալ, թե Տիգրանը ո՞րտեղ է սովորելու, ի՞նչ դպրոց է, ամենքի՞ն կընդունեն արդյոք, քանի՞ տարի է սովորելու, քննություն տվե՞ց, բռնե՞ց, թե՞ չբռնեց...

— Իմ գործը չի: Չեմ իմանում, բռնեց թե չբռնեց: Ես

մենակ մի բան եմ իմանում: Լավ հույսեր էի կապել, շուրճ
ածեց,—դառնացած խոսեց խեղանք:—Երբ ես էլ, քո հերն էլ
քսան տարեկան էինք, էս տեսակ կյանք տեսնո՞ւմ էինք երա-
զում: Անվանի տրակտորիստ էր: Հազար աշխօր ուներ: Նոր
տուն շինեցինք: Սրանից հետո սովորել ես ուզո՞ւմ, պաժա-
լուստա, գնա: Քանի՞-քանիսն են գնացել: Քեզ մարդ էլ չի
արգելի: Համա, ինչի՞ փախչել գյուղից: Մինչև անգամ չու-
ղեց ընկերներին մնաս բարով ասել...

Եվ գրկի մեջ իրերն ուղղելով շուռ եկավ, զայրացած
գնաց, բարձրացավ պատշգամբը, ներս մտավ, դուռը հետե-
վից շրխկացնելով:

* * *

Ավտոն մտավ բակը, կանգնեց: Սոնա տատին Նունոյի
կողմը շնայելով, դանդաղ հավաքեց իր խուրջինը, զամբյուղ-
ներն ու կապոցները: Նունոն նստած էր անշարժ, շվարում
հայացքով, նա տխուր էր, հոգնած:

— Ինձ հորանցս տուն կտանես,—ցածր, ընկճված ձայ-
նով Նունոն խնդրեց շոֆերին:

— Գոնե շեմից ներս գալ չե՞ս ուզում,—հարցրեց Սոնա
տատին:

— Ինչի՞ համար,—անտարբեր, օտարոտի խոսեց Նունոն:

— Շորերդ հավաքես,—աշխատելով համոզել, բավական
անվստահ կերպով պատասխանեց Սոնա տատին, թե՛ վախե-
ցած, թե՛ սարսափելով այն շեշտի վրա, որ տվեց իր խոս-
քերին:

Նունոն մի փոքր լռեց: Խնդրեց շոֆերին համբերել ու
Սոնա տատիի հետևից գնաց տուն: Սենյակի կենտրոնում
նա մի պահ մնաց անշարժ, սառած աչքերով դիտեց լռիկ ու
տխուր կանգնած կահկարասիները: Այժմ ամեն ինչ, թե՛ տու-
նը, թե՛ կահկարասիները, որոնք դեռ մի քանի օր առաջ այն-
քան քաղցր էին, հարազատ, արդեն թվում էին օտար ու
ամայի: Թվում էր, թե այդ ամենը վաղուց արդեն հեռավոր
կարոտով ինքը կորցրել է կյանքում:

— Դե՛, նստի՛ր, մի քիչ նստի՛ր, ախր բեզարած ես, մի քիչ հանգստացիր,—թախանձելով, մեղմորեն ասաց Սոնա տատին ու թախտի վրա հոգատար նստեցրեց նրան։

Նունոն շղիմադրեց։

— Վաղելու ի՞նչ ունես, թե շատ ես բեզարած, կուզես գիշերը կաց էստեղ,—նորից թախանձելով ու քնքշորեն շարունակեց Սոնա տատին, հանեց նրա վերարկուն,—դե՛, լա՛վ, լա՛վ, շե՛ս մնա, էլի կգնաս։ Ինձ հետ հո՞ կարող ես մի քիչ նստել։ Դու նստիր, ես հիմի կգամ։

Նունոն անխոս համաձայնեց։ Սոնա տատին մտահոգված վաղեց դուրս։

Դուրս գալով բակը, նա զարմանալի ճարակով յամբատոյից իջեցրեց Նունոյի ճամբրուկը, ապա ձեռքով թաքուն ու անհանգիստ նշան արեց շոֆերին, որ անաղմով ու արագ հեռանա։ Ավտոն գնաց։ Սոնա տատին ճամբրուկը երկու ձեռքով բռնած տարավ, բարձրացավ աստիճաններով։ Բայց ծերացած էր Սոնա տատին, շատ էր ծերացած, շուտով հոգնեց, աստիճանների կեսի վրա դրեց ճամբրուկը, որ մի փոքր հանգստանա, ձեռքը տարավ կողքին, կամաց ուղղեց տկար մեջքը, խորը շունչ քաշեց։ Հենց այդ պահին՝ ոտքի ձայների վրա Սոնա տատին շուռ եկավ. աստիճաններով բարձրացավ Սիմոնը, նա արագ վերցրեց ճամբրուկը, տարավ ներս։

— Ո՛ւր դնեմ, նանի,—սենյակում աղմկելով, գոռոռացով հարցրեց Սիմոնը, իր հետևից տազնապով ու շփոթված ներս ընկնող Սոնա տատին։

Ձեռքով արագ ու սարսափահար Սոնա տատին փակեց նրա բերանը, նայեց կից սենյակի կողմը, սիրտը թրթռաց, արդյոք չլսե՞ց Նունոն դռան հետևից։ Ու անխոս, բարկացած, զանազան նշաններով Սոնա տատը հապկացրեց Սիմոնին, որ ճամբրուկը թաքուն պահի թախտի տակը։ Սիմոնը ոչինչ չհասկացավ, վախվխելով շփոթվեց, զգուշորեն խկույն պահեց ճամբրուկը, ապա նույնպես թաքուն կարծես հնազանդվելով կամաց խնդրեց։

— Նանի, ինձ Տիգրանի հասցեն տուր։

Սոնա տատին վշտախառն ուրախությամբ, ուշիմ ու դո-
հունակ հայացքով նայեց նրան, բարձրացրեց շրջազգեստի
փեշերը, ամենատափի գրպանից հանեց թաշկինակի մեջ պա-
հած հասցեն ու արդեն սովորականից շատ բարձր ձայնով
կարդաց.

— Նո...րա...գավիթի: Նորագավիթի, համարը...

Դուան ձայնի վրա Սիմոնը շրջվեց ետ, պատշգամբում
նկատեց Սաղաթելին, անհանգստացավ, ուղեց շրխկոցով
նրա վրա ծածկել դուռը. բայց արդեն ուշ էր: Սաղաթելը դուռ-
նը հենված՝ գլուխը թեքեց ներս: Այս անգամ արդեն Սիմոնը
վախժանելով թաքուն աշխատեց լռեցնել Սոնա տատին,
բայց նա չհասկացավ: Սաղաթելը ամեն ինչ լսեց ու այնպես
արագ կրկնելով հարցրեց համարը, որ Սոնա տատին շրջվե-
լով նրան դայրացած, թե՛ միամիտ՝ ավելի բարձր շարունա-
կեց.

— Համարը քսան:

Սաղաթելն արագորեն անհետացավ. նրա հետևից դուրս
եկավ Սիմոնը: Այս ամենից խիստ շվարած, ոչինչ գլխի չընկ-
նելով, Սոնա տատին զարմացած նայեց նրանց հետևից,
ապա գնաց կից սենյակը, ուր Նունոն սպասում էր իրեն:

— Դու Տիգրանի հասցեն ի՞նչ ես անելու, — աստիճան-
ների վրա հարցրեց Սիմոնը:

Սաղաթելը սիրալիր-հեգնական ու կասկածամտորեն նա-
յեց նրան, թաքցրեց.

— Հենց էնպես: Ուզում եմ նամակ գրել Տիգրանին...
Դո՛ւ ինչ ես անելու:

— Ես էլ հենց էնպես, — երեսը նրանից շրջելով զուսպ
կրկնեց Սիմոնը ու հայացքը բարձր պահած, քայլեց, հեռա-
ցավ:

Լեոնը ցանկապատի հետևը թաքնված՝ բարձրացրեց գլու-
խը, աստիճանների վրա նկատեց նրանց, թռավ ցանկապատի
վրայով, նորից թաքնվեց կանեփների մեջ, սպասեց, երբ բա-
կից հեռացան նրանք, վազելով բարձրացավ պատշգամբը...

Սենյակում, թախտի ծայրին, նույն անշարժ դիրքով, ձեռ-

քերը ծնկների վրա գցած, առաջվա նման տխուր դեռ նստած էր Նունոն: Սոնա տատին խաղաղ խոսելով շարունակում էր համոզել նրան:

— Ինքդ չէի՞ր ասում՝ տունը մերն է, տնից տեղ չեմ գնա. քառուրդ ես գնում: Դու քեզ համար, դե՛, ապրի...

Արագ բացվեց դուռը, Լևոնը գլուխը թեքեց ներս:

— Քո ուղածն ի՞նչ է,— զայրացած հարցրեց Սոնա տատին, որ նա անսպասելի հայտնվելով խանդարեց իր զրույցը:

— Տիգրանի հասցեն, նանի,— գաղտնաբար շշջաց Լևոնը:

— Նորագավիթի, համարը քսան,— գոռաց Սոնա տատին: Լևոնը երկյուղով արագ ծածկեց դուռը:

— Դե, քեզ համար ապրի,— նորից Նունոյին շրջվելով, մեղմացած շարունակեց Սոնա տատին,— տունը հո մենակ Տիգրանինը չի՞: Թե ուզում ես կիսել, պետք չի, Տիգրանը մնաց քաղաքում, դու էլ ապրի... Ինձ հետ չե՞ս ուզում ապրել:

Դուռը նորից բացվեց, վախժխելով հազիվ ներս թեքվեց աղյուսի գույն մազերով մի գլուխ.

— Հասցեն...

— Նորագավիթի քսան,— անմիջապես ընդհատելով նրան գոռաց Սոնա տատին, վազեց դեպի դուռը, շրխկացնելով ծածկեց նրա հետևից:

Սոնա տատին դեռ չէր հեռացել, երբ բացվեց դուռը և գլուխը համառորեն թեքվեց ներս.

— Հո՛, ասի քեզ, Նորագավիթի քսան,— ավելի սաստիկ զայրացավ Սոնա տատին, որ արդեն հաճախակի ընդհատում են իրեն, բայց մի պահ ուշադիր նայեց դռների մեջ վայրկենապես հեռացող գլխին, ինքն իրեն թռնթորաց.— քա, էս էլ ուրիշ էր: Այ, չորանա ձեր շշմած գլուխը:

Նորից մոտեցավ Նունոյին, նորից մեղմորեն, քնքուշ ձայնով խոսեց.

— Իմ մասին չե՞ս մտածում. ես մենակ կմնամ... Մեզ համար անուշ ապրում էինք, մտածում էի թոռներ կունենամ, կպահեմ, կուրախանամ...— ու հանկարծ հեկեկաց Սոնա տատին, լաշակի ծայրով սրբեց աչքերը:

Դռների մեջ հայտնվեց մի ուրիշ տղայի գլուխ:

— Դե,՝ բո՛ւ է, զահլա տարաք, գնա ընկերներիցդ հարցրու, կորի՛,— փայլատակող աչքերով, ծայրահեղ բարկությամբ բռնկվեց Սոնա տատին. նրա հետևից դուրս շարտեց ավելը, աղմուկով կրկին շրխկացրեց դուռը ու այս անգամ զայրացած ամուր կողպեց, բանալին դրեց գրպանը:

XVII

— Նստեք, Տիգրան,—ասաց Պավել Պետրովը ու նորից շրջվելով, մտածկոտ նայեց բաց պատուհանից դուրս՝ դպրոցի բակը:

Տիգրանը նստեց: Նա իր նոր համազգեստի մեջ կարծես ավելի էր աճել, գեղեցկացել, փօխվել էր բոլորովին. փայլուն հովանիով շքեղ գլխարկը և դեղին կոճակներով մահուդե կիտելը մի առանձին գրավչություն էին տալիս նրա առողջ ու անթերի արտաքինին: Արդյոք ինչո՞ւ է կանչել, ի՞նչ է ասելու իրեն, սրտի դողով մտածում էր Տիգրանը, իր կրակոտ, սև փայլուն աչքերը քարացած հառելով նրան: Երկար ու մտածկոտ կանգնել էր Պավել Պետրովը, երեսը դեպի պատուհանը, խոշոր զորեղ ձեռքերը թիկունքին, անշարժ, ծխամորճից բարձրացող արծաթ ծուխը մազերի փնջերին խառնված: Վերջապես նա շրջվեց, մոտեցավ սեղանին. խոսելով ծխամորճը խփեց մոխրամանին, թափ տվեց՝ հայացքը շղարձնելով Տիգրանին:

— Ձեր ընդունվելուց հետո, մենք իրար հանդիպում ենք միայն պարապմունքի ժամերին, այդպես էլ՝ չի հաջողվում առանձին խոսել: Դուք ի միջի այլոց, չէ որ ուշ էիք ուզում ընդունվել, ինչո՞ւ հանկարծ փոխեցիք ձեր որոշումը:

— Հանգամանքները, ընկեր գնդապետ, այդպես դասավորվեցին,—ասաց Տիգրանը հայացքը կախելով:

Պավել Պետրովը ժպտացող աչքերը թեթև կկոցելով նայեց նրան, ինչ-որ խորունկ հայացքով, ուշադիր:

— Իսկ ինչո՞ւ եք շարունակ մոռալ: Կարոտե՞լ եք ձեր գյուղը, ձեր ընկերներին:

— Այո: Գյուղի կարոտը չի հեռանում... Ընկերներին
կարոտը նույնպես:

— Իսկ գյուղում շատ ընկերներ ունեք:

— Շատ:

— Նամակներ ստանում եք նրանցից:

— Ոչ: Չեմ ստանում:

— Նո՛ւ, իսկ ես ստանում եմ,— Պալել Պետրովը մոտե-
ցավ դրասեղանին, հանեց նամակների մի ահագին կապոց:
Սեդան դուռը բացեց:

— Թույլ տվեք մտնել, ընկեր գնդապետ: Ներկայանում
եմ ձեր հրամանով:

— Նստեք, Սեդա... Այս նամակները բոլորը ձեր գյուղից
են, երևի ձեր ընկերներից: Մեկը խորհուրդ է հարցնում,
մյուսն ուղղակի խնդրում է ընդունվել դպրոց: Մի խոսքով,
ուզում են օգաշու լինել,— ու հանեց նամակներից մեկը.—
այ, ո՛վ է, օրինակ, Սիմոն Մաճկալյանը:

— Հրաշալի տղա է,— ոտքի ցատկելով ոգևորվեց, բըռ-
նըկվեց Տիգրանը,— իմ բրիգադից է, ինձ փոխարինեց, կո-
մերիտական է: Իմ կարծիքով, Սովետական Միության Հերոս
դուրս կգա:

— Նո՛ւ, իսկ էս մեկն ո՛վ է, Լևոն Քարամյան:

— Լևոնն էլ է իմ բրիգադից: Մի քիչ դիմացկուն չէ,
ջահել է դեռ, բայց ոչինչ, ընդունակ է, շա՛տ ընդունակ:

— Իսկ Սաղաթել... ինչպե՞ս է աղդանունը:

— Ահարոնյան: Ֆիզկուլտուրնիկ է, դիրիժոր, հրաշալի
տղա է:

— Հանգիստ, հանգիստ, Տիգրան: Նստեք,— ժպտաց
Պալել Պետրովը:

— Երգվում եմ, բոլորն էլ հրաշալի տղաներ են: Հարց-
րեք Սեդային:

— Ճիշտ է: Ես կարծում եմ...

— Հանգիստ, Սեդա, հանգիստ և լուրջ ավելի: Նստեք:

— Իսկ ես լուրջ եմ այդպես մտածում: Ի՛նչ տղաներ
են, տրակտորիստներ, մեխանիկներ, մեքենայից չեն վախե-

նում, ճարպիկ ֆուտբոլիստներ են, միջնակարգ կրթություն ունեն բոլորը, կոմերիտականներ են նախ և առաջ... Եվ քանի որ որոշել են, միևնույն է, նրանք կգան այստեղ:

Պավել Պետրովը ձեռքը վերցրեց մի ուրիշ նամակ:

— Ձեր կոլխոզի նախագահն էլ նույնն է ասում ու գրում է ինձ թե...

— Մեր խեչա՞նը:

— Да, խեչան նիկիտիչը... Դրա համար էլ նա ուզում է դյուզում դպրոց բանալ, առանց արտադրությունից տղաներին կտրելու, թե չէ գրում է. «Павел Семенич, все мои колхозники оторвутся от земли и в небо улетят».

— Это будет замечательно...

Պավել Պետրովն իր խորունկ պայծառ աչքերով նայեց Տիգրանին.

— Чтобы колхозники в небо улетели?

— Զէ... որ դյուզում դպրոց կազմակերպվի:

— Նո՛ւ, որ ասում եք էդպես լավ տղաներ են, նրանց հետ պետք է ծանոթանալ: Возьмем, да и слетаем в ваш КОЛХОЗ:

— Պավել Սեմյոնիչ...

— Հանգիստ, հանգիստ, Սեդա: Կատուգենք, կտեսնենք, какие такие у вас замечательные парни: Ես, Սեդա, դրա համար էլ կանչել եմ ձեզ, вы нас повезете:

XVIII

Ամեն ինչ նույնն էր, կարծես ոչինչ չէր փոխվել տանը: Սոնա տատին նորից հատակին նստած հավանդ էր ծեծում, բայց այժմ արդեն այնպես անուժ էին նրա հարվածները, դանդաղ ու մեղմ: Առաջվա նման չէր զրնգում Սոնա տատիի հավանգը: Բակից ահա կրկին ներս մտան հավերը, մոտեցան Սոնա տատիի կողքն ընկած պարկին սկսեցին արդեն համարձակ կտցահարել:

— Քշշ...—բարկացավ Սոնա տատին, բայց այնպես

հանգիստ, փշրված սրտով, որ հազիվ մի փոքր հեռացած հավերթ կրկին մոտեցան, շարունակեցին կտցահարել: Սակայն այս անգամ նա արդեն չէր նկատում: Տխուր հայացքն անորոշ մի կետի հառած, Սոնա տատին դադարեց հավանգ ծեծելուց: Նրա մտքերը տարածվում էին հեռուները...

Դուռը բացվեց ու ներս մտավ Տիգրանը: Ներս մտավ կանգնեց դռան մոտ: Նրա թիկունքում, բաց դռան միջից, դրսում երևաց Պավել Պետրովը:

— Նանի'... — կանչեց Տիգրանը:

Սոնա տատին գլուխը բարձրացրեց, շփոթված, շփարած նայեց որդուն. դեմքին հանկարծակի սահեցին ուրախության ու լացի նշաններ, մի խորունկ ջերմություն վախվխելով պարուրեց նրան, արդյոք հավատա՞ ջրակալած աչքերին, թե՞ հեռավոր երազ է, անուշ ու խաղաղ: Ու այդպես անշարժ, քարացած, նա նայեց որդուն, նայեց մի քանի վայրկյան, ապա այլևս չկարողացավ համբերել, ծափ պես վեր թռավ, դեմ վազեց:

— Տիգրա՛ն, բալա ջա՛ն, — տկար, բեկբեկուն ձայնով ասաց Սոնա տատին ու իր փոքրիկ մարմնով ամուր փաթաթվեց նրան, հեկեկաց:

— Դե՛, բոլ է, նանի, դե՛ լավ, — նա նույնպես հուզված ու հոգատար հանգստացրեց մորը, — հո տեսնում ես, եկել եմ, հո չե՛մ գնում: Դու մեր պետի հետ ծանոթացիր:

Որդուց դժվարությամբ բաժանվելով, Սոնա տատին գոգնոցի փեշով արագ սրբեց աչքերը, ապա խոնարհվելով՝ իր փոքրիկ, թառամած ձեռքը մեկնեց Պավել Պետրովին, բարեվեց, հետո կարծես նոր միայն նկատեց հավերթին, զայրացած դուրս քշեց ու խոսելով՝ արագ հավաքեց հատակին ընկած հավանգը, ուղղեց թախտի վրա շարված բարձերը:

— Ախ, քոռանամ ես, քոռանամ, մի գրի կտոր էլ չեք ճամփել՝ թե ձեր գալն իմանայի, թե իմանայի, ամեն թագաբուրք կտեսնեի, մի քիչ գաթա կթխեի, մի քիչ տոլմա կեփեի, հավից-ճափից կմորթեի...

— Վնաս չկա, նանի, ինչ ասիր, հիմի արա, — ասաց

Տիգրանը ու դառնալով Պավել Պետրովին շարունակեց.— էս մի մահճակալը իմն է, իսկ դուք, Պավել Սեմյոնիչ, էն մյուսի վրա կքնեք,— ու գլխով ցույց տվեց Նունոյի մահճակալը, առանց այն կողմը նայելու:

Սոնա տատին վախեցած նայեց որդուն:

Պավել Պետրովն իր փոքրիկ ճամբրովը դրեց Նունոյի մահճակալի մոտ, աչքը նետեց իրար վրա բարձր դարսած, ժանյակե երիզներով բարձերին, ամենատափի բարձի ծայրից դուրս մնացած նկատեց ծխադույն ծաղիկներով ու ծխի պես թեթև, թափանցիկ մի շարֆ, վերցրեց ձեռքը:

— Դուք ամուսնացած եք, Տիգրան,— հարցրեց Պավել Պետրովը, շարֆը նետելով աթոռի թիկնակին:

— Ըհը՛, Այո՛... — մի աննկատելի դառնությամբ, զուսպ պատասխանեց Տիգրանը, բայց չկամենալով ամեն ինչ թաքցնել, նույն դառնությամբ կիսատ ասաց.— նա հիմի տանը չի, գնացել է... հորանց մոտ է:

Սոնա տատին ուղեց շեղել վտանգավոր զրույցը, զգուշացնել որդուն ու մեջ ընկնելով ասաց.

— Սոված կլինեք, ուտելու մի բան սարքեմ, հը՛,— ու թաքուն, խիստ անհանգստացած նշաններով դուրս կանչեց որդուն:

Պավել Պետրովը նկատեց, ժպտաց.

— Դու ջուր տուր՝ լվացվենք, ուտելու մասին հետո:

— Հա՛, լվացվիր, գնանք ես ջուր լցնեմ,— ասաց Սոնա տատին, պահարանից հանեց մաքուր մի սրբիչ ու Պավել Պետրովի հետ ելավ դուրս:

Սենյակում մնաց Տիգրանը: Նա մոտեցավ աթոռի թիկնակին ընկած շարֆին, վերցրեց ձեռքը, մտածկոտ նայեց, հիշեց Նունոյին... Ուղիղ երկու շաբաթ էր անցել, որ Նունոյի հետ գնաց քաղաք, բայց ինչքա՛ն բան է փոխվել... չկա և Նունոն: Նա կարծես նոր միայն, տուն վերադառնալուց հետո, զգաց Նունոյի բացակայությունը: Բայց ինչո՞ւ Նունոն չմնաց քաղաքում. տեսնես, եթե իմանա, որ ինքը եկել է՝ կգա՞ արդյոք, կվերադառնա՞ տուն: Ինչքա՛ն է վշտացել Նու-

նոն, որ թողել հեռացել է. ինքը մի՞թե մեղավոր է այդքան: Եվ ո՞վ իմանա, Նունոյի համար ինչքա՞ն է տանջվել նաև ու մենակ ապրելու վշտից, թե՞ ծերությունից, ահա կարծես ավելի է փոքրացել, փոքրացել է նաև տունը, բակը ու հին թթենին:

Երեսը սրբելով ներս մտավ Պավել Պետրովը: Նրա հետևից՝ Սոնա տատը: Պավել Պետրովը նկատեց շարժը ձեռքին մտածկոտ կանգնած Տիգրանին, աչքով արեց, շշնջաց Սոնա տատին.

— Կնոջը ո՞նց է կարոտել...

Ցավախառն ժպիտով այնպես խորը, այնպես բարձր ձայնով հառաչեց Սոնա տատը, որ Տիգրանը շրջվեց, շարժը դեպի ձեռքից, կարմրեց:

— Սրբիչը մի՞ դնի, նանի, ես էլ եմ ուզում լվացվել, — ասաց Տիգրանը, ելավ դուրս:

Սոնա տատը դուրս եկավ, վերցրեց կուժը, գնաց որդու հետևից:

Պավել Պետրովը բարձրացրեց շարժը, նետեց աթոռի թիկնակին, մոտեցավ Նունոյի մահճակալի մոտ դրած իր փոքրիկ ճամբրուկին, բացեց, ապա սկսեց կիտելի բոլոր կոճակները քանդել: Շփոթված ներս մտավ Նունոն, երևի բակից անցնելիս, հեռվից թաքուն նկատել էր Տիգրանին: Ներս մտավ սրտի թրթռոցով և՛ ուրախ, և՛ ինչ-որ անհանգիստ շփոթմունքով, սակայն տեսնելով անծանոթ Պավել Պետրովին, մի տարօրինակ երկյուղով կարծես քարացավ: Պավել Պետրովը նույնպես անակնկալի եկած, նկատելով նրա շփոթմունքը, վերադրեց իրեն, քաշվելով արագ սկսեց կոճկել կիտելի բոլոր կոճակները: Տիրեց կաշկանդող ու երկար մի լռություն:

— Բարև ձեզ, — ասաց Պավել Պետրովը:

— Բարև, — ուշացած, կամաց պատասխանեց Նունոն:

— Я здесь гость. Вы подождите, сейчас хозяйева зайдут, — շարունակեց Պավել Պետրովը, նստեց, աթոռի թիկնակից շարժն ընկավ, շնկատեց:

— Хорошо, я подожду, — ժպտաց Նունոն, մոտեցավ, վերցրեց հատակին ընկած շարժը, տարավ դրեց պահարանը:

— Ներեցեք, ձե՞ր շարժն է, — անվճռականորեն հարցրեց Պավել Պետրովը, — դուք Տիգրանի կի՞նն եք:

— Այո:

— Так чего ж вы молчите?, — ուրախացած տեղից բարձրանալով, իր հզոր ձայնով սրտաբաց հարցրեց Պավել Պետրովը, — տե՞սաք Տիգրանին. չէ՞: Ինչ լավ ժամանակին վերադարձաք, իմիջի այլոց, խեղճը ձեր կարոտը շատ էր քաշում, դպրոցումն էլ շարունակ տխուր էր: Բայց ինչ դադարնապահ է: Ուրեմն չե՞ք տեսել: Դե՛, նստեք: Հիմա մենք այսուպրիզ կսարքենք նրան, — ու աղմուկով նա դուրս եկավ սենյակից:

Բակի մի անկյունում լվացվում էր Տիգրանը: Սոնա տառը կուժը գրկած՝ ջուր էր լցնում որդու ձեռքերին ու խոսում էր, պատմում, ուրախությունից լացը հաղիվ զսպելով.

— Համբերի, վերջն ականջ արա, դու վերջը չես իմանում...

— Պետք չի, նանի, չեմ ուզում. ինձ ոչինչ մի ասի, չեմ ուզում իմանալ: Նունոն շուգե՞ց ինձ հետ ապրել, հո բաժանվե՞ց, տնից հո հեռացա՞վ, էլ ի՞նչ պատմես:

— Մեղավորը դու ես... Չես իմանում: Համբերի՛ ասեմ...

— Ասի՛ չեմ ուզում, վերջ տուր, նանի:

— Տիգրա՛ն, շուտ արա, тут срочное дело... — լավեց Պավել Պետրովի ձայնը:

Տիգրանը սրբիշը նետեց նանի ուսերին, հեռացավ: Պատրշդամբում կանգնած էր Պավել Պետրովը:

— Ներսում, Տիգրան, ձեզ մոտ մի հյուր է եկել... Ասենք, ինքներդ հիմա կտեսնեք: Նո՛ւ, էլ ի՞նչ եք կանգնել, ներս մտեք, — ու նրան Պավել Պետրովը տարավ ներս:

Նրանց դիմավորելով, սենյակի կենտրոնում շիկնած կանգնել էր Նունոն, շփոթված, աչքերը կախ, գեղեցիկ գլուխը հպարտ բռնած: Տիգրանը մնաց դռների մոտ, ջերմ, թեթև մի դող անցավ մարմնով: Մի պահ նրանք մնացին լուռ: Պավել Պետրովը ոչինչ չհասկացավ:

— Да, вы не стесняйтесь, — բարի աւ լալն ժպիտով
ասաց Պավել Պետրովը, ապա նրանց թեթևակի հրելով մո-
տեցրեց իրար, — вы поцелуйтесь, вот чудак...

— Բարեւ, Տիգրան, — հաղթահարելով իր կաշկանդումը,
ձեռքը երկարացրեց նունոն, գլուխը թեքեց ուսերի վրա:

— նունո՛, — պատասխանեց Տիգրանը, քնքշորեն բռնե-
լով նրա ձեռքերը, ուզեց խոսել, խոստովանել, որ ինքը մե-
ղավոր է. բայց լռեց՝ Պավել Պետրովի ներկայությունից
ճնշվելով:

Աղմուկով ներս մտավ Սոնա տատը, սրբիչն ուսից
հանա, կուժը գրկած: Պավել Պետրովը նայեց նրան, առան-
կով մատը թաքուն մոտեցրեց շրթունքներին, ժպտաց, աչքով
ցույց տվեց դուռը, ձեռքը դրեց Սոնա տատի ուսին, տարավ
դուրս: Նրանք ելան պատշգամբը, նստեցին թախտի վրա,
Սոնա տատը երեսը շրջեց պատուհանի կողմը, անհամբեր,
թաքուն նայեց ներս:

— Վո՛ւյ, պաշտում են, — հրճվանքը չկարողանալով զրս-
պել ասաց Սոնա տատը, ու հանկարծակի ամոթահար ժրպ-
տալով նայեց Պավել Պետրովին:

XIX

Տիկին Սաթենիկը պատշգամբում եռացող ինքնայեռը
դրեց սեղանի վրա, պահարանից շխտակոցով հանեց թելի
բաժակները, ափսեները: Ամուսինը, ինչպես միշտ, ծղոտե-
րազկաթոռին նստած, լրագիր էր կարդում: Տանն ամեն ինչ
նորից լուռ էր, խաղաղ, ավելացել էր միայն Միքայելը: Նա
լռիկ նստած գրում էր՝ նոտաների թերթերը սեղանին թա-
փած:

Իր սովորության պես Սեդան անսպասելի մտավ բակը,
աստիճաններով արագ բարձրացավ, հետը կարծես ինչ-որ
թարմություն բերելով, պատշգամբում ոտքի վրա կարկաչուն
ու աշխույժ խոսելով համբուրվեց բոլորին:

— Բարեւ, մամոշկա, բարեւ, պապոշկա, — վերջում համ-
բուրեց Միքայելին, — բարեւ, Միքայել:

Տիկին Սաթենիկը հանկարծակի շիկնեց, ձեռքից բաժակը նորից ընկավ, շրթակ, փշրվեց:

— Նորի՞ց...—նայելով փշրված բաժակին ասաց Սեդան:

— Սեդա՛, —ամոթի երկյուղով խոսեց տիկին Սաթենիկը, —նա դեռ քո ամուսինը չէ և դու...

— Մամոչկա, մի վերցնի, մի վերցնի էդ մյուս բաժակը, հավատա, նա արդեն իմ ամուսինն է, հասկանո՞ւմ ես, նա սկսել էր անտարբեր շնայել Նունոյին: Դե, ես է՛լ վճռեցի, ինքս անվտանգ լինելու համար Միքայելին զազս քաշ տալ: Նվի՞նչ ես կարծում, վերջը միայն այդ եղա՞վ: Հենց որ նա եկավ այստեղ, երաժշտական դպրոց բանալու, սկսեց Նունոյի հետ անհատական դասերով զբաղվել: Չէ՛, չէ՛, մամոչկա, ես կատակ եմ անում, նա հրաշալի ընկեր է, հրաշալի ամուսին: Բժիշկը նայեց լուկ ժպտացող Միքայելին:

— Իսկ դու եկե՛լ ես, լռե՛լ: Նվ, Սեդա, ոչինչ չի ասում: Բաղդակի ինձ նման է. ճի՞շտ չեմ ասում, Սաթո: Սեդա, երկա՞ր ես մնալու: Հարկավոր է հարսանիք անել:

— Չէ՛, չէ՛, չարժե: Վաղը ես վերադառնալու եմ:

Սակայն ծնողները դեմ կանգնեցին, խոսեցին, վիճեցին և տանն ամեն ինչ կարծես աշխույժ աղմուկով լցվեց:

* * *

Պատշգամբի դիմացը, հեռվում, իրիկնապահի կապույտ սարերի վրա, երկնքի վրա փռվել էին դեղին վառվռուն ու մութ ամպերը: Արեգակը մայր էր մտել: Օրը մարում էր արդեն: Սարերից հոսում էր իրիկնապահի բարակ քամին, չոր խոտերի բույրը բերելով: Հեռավոր երկնքում, պայծառ ու բարձր պլպլում էր մի աստղ, կարծես արևից էր ծորել նա ու ծորելով դեռ գնում էր դեպի անհունը: Բակում, թթենու վրա, սարսափահար պտտվում էր չղջիկը, մե՛րթ շեշտակի մոտենում էր պատշգամբին, մե՛րթ հեռանում: Պատշգամբում դեռ նստած, զրուցում էին Սոնա տատն ու Պավել Պետրովը:

— Աստծուց էլ ի՞նչ ուզեմ, մեռնեմ զորությանը, — ասաց

Սոնա տատը,—ինձ ականջ արեց, մերոնց էլի մեր տունը հալածեց:

— Դու հավատո՞ւմ ես աստծուն,—հարցրեց Պավել Պետրովը:

— Սովորութիւն է դարձել,—հանցավոր ժպտաց Սոնա տատը,—մեկ-մեկ խոսում եմ հետը:

— Նո՛ւ: Աստծո՞ւ հետ ես խոսում:

— Ըհը՛,—Սոնա տատը նորից ժպտաց, մատների ծալքով թեթեւ շփեց ծունկը, մտածկոտ նայեց ձեռքին, մի փոքր լռեց:—Աստված ինձ գեշ օրեր շատ է տվել: Ինքս էլ իրան էի դանդաղ դնում, խոսում էի հետը: Իմ առջնեկ տղեն որ մեռավ, գիշեր էր, ձեռքերիս վրա պահած խոսում էի, աղաչում, աղոթում աստծուն: Տե՛ս, ասում էի, ինչ սիրուն տղա է, անմեղ է քո առաջ, քորփա երեխա է: Դու, ասում էի, կարող է մահը ճամփեւ ես ուրիշի, սխալվել է, իմ շեմն է եկել: Խղճա՛, ես մեղավոր չեմ: Ճար արա, ասում էի, թող ապրի գոնե մինչի արեւ դուրս գա, լուսանա, որ մին էլ կենդանի տեսնեմ իրան: Ճրագ չկար, ձեթ չունեինք, արեւ պիտե՛ր՝ որ տեսնեի... Համա արեւ դուրս չեկած՝ մեռավ: Մի աղջիկ ունեի՝ էն էլ մեռավ: Երկու տղես էլ Ղարս սալդաթ գնացին, կորան: Տիգրանը մնաց: Հերը սովի տարին մեռավ. ի՞նձ թողեց: Ամեն գործ արել եմ, ուրիշի թոնիրներում հաց եմ թխել, ուրիշի արտում քաշել եմ գերանդի, գիշերները ճրագի տակ անքուն մանել եմ ճախարակ, դռն դուռ եմ ընկել. հիմի որ էսպէս ապրում եմ՝ չեմ հավատում ու աստծու հետ խոսելիս միտն եմ գցում...—հանկարծ լռեց Սոնա տատը, հայացքը նորից դարձրեց պատուհանի կողմը, գլուխը թեքելով գողտուկ նայեց. նա անշափ ուզում էր ներս մտնել, ճնշվելով հարցրեց.—չգնա՞նք, հը՛:

— Չէ, մի քիչ էլ նստիր, նստիր խոսենք: Իսկ աստված քեզ ի՞նչ է ասում, որ միտն ես գցում:

— Սոա է մնում...

Պավել Պետրովը ժպտաց:

— Իսկ դու չե՞ս հավատում աստծուն,—հարցրեց Սոնա տատը:

— Նու, ո՞նց ասեմ, ես միշտ լինում եմ երկնքում: Միշտ թռչում եմ, բայց աստծուն չեմ տեսել:

Երկար-երկար լռեցին նրանք, հանկարծ Սոնա տատը ուշացած հարցրեց.

— Էդքան շատ ո՞ւր ես գնում:

— Ուր ուղարկեն:

— Քեզ Մոսկո՞ւյ էլ են ուղարկում, հը՞:

— Պատահում է: Ի՞նչ ես պնդում:

— Ուզում եմ իմանալ, ինձ շիտակն ասա, դու Ստալինի մոտ դռնադ չե՞ս գնալու:

— Ա՛յ, էդ արդեն չգիտեմ: Թե որևէ հրաշալի բան անեմ, էն ժամանակ իհարկե կգնամ:

— Թող քեզ աստված հաջողի, դու էլ արա, լա՛վ: Ու Ստալինի մոտ որ գնաս, իմ անունից ասա իրեն՝ շնորհակալ եմ: Չմոռանաս հա՛:

— Ну, очень хорошая ты старуха, — ասաց Պավել Պետրովը:

Միքայելի հետ եկավ Սեդան:

— Բարե, Սոնա տատի: Հո էլ չե՞ս զայրանա ինձ վրա: Տիգրանը, Նունոն ո՞ւր են, — հարցրեց Սեդան:

— Էստեղ ենք, Սեդա, էստեղ ենք, ներս եկեք, — պատուհանից Նունոյի հետ դուրս նայեց Տիգրանը:

Սեդան դիմեց բուրրին.

— Քեզ, Սոնա տատի և՛ քեզ, Նունո, և՛ քեզ, Տիգրան, и вас, Павел Семенич, մենք բուրրիդ приглашаем... я здесь не причем, это все папа с мамой... վաղը հրավիրում ենք հարսանիքի, на свадьбу:

XX

Բախում, ծառերի տակ, գորգերի վրա բացած սեղանի շուրջը՝ բարձերի վրա բուրրել էին հյուերերը: Բախը զարդարված էր վառվռուն լույսերով, թղթե գունավոր լապտերներով: Աստղազարդ գիշեր էր: Մերթ հովերի պես ծորացող, թրթռուն

մորմոքով, մերթ զիւ նվագում էին երաժիշտները: Տանը, պատշգամբում, սենյակներում ուր ոտքի վրա արագ, ժիր աշխատում, եփում, դասավորում էին կանայք, նույնպես վառվում էին բոլոր լույսերը:

Կողք-կողքի նստել էին Սեդան ու Միքայելը: Նստել էր Սեդան շողշողուն, սպիտակ զգեստով, մոմե քնքուշ ու նուրբ ծաղիկների պսակը գլխին, գեղեցիկ երեսը վարդագույն շառագունած: Նրանց կողքին նստել էին ծնողները, մյուս կողքին Պավել Պետրովը, Սոնա տատը, Խեչանը: Մեծ ու փոքր նոր շորեր էին հագել. կանայք՝ ծալերով-ծալերով ծիրանի գույն շրջազգեստներ, պառավները կարմիր գոգնոցներ կապած, կարմիր մինթանա, կարմիր ու ծիրանի սիրուն գույնն էր ամենքի վրա: Տղամարդիկ սևահեր էին, զորեղ, իսկ կանայք՝ բարձրահասակ, նրբիրան: Սեդանից հեռու ոչորվում էր հարսնեորդների բոլորակ պարը, հանդարտ ու նազանքով, մե'րթ մեղմօրոր տատանվում, շորորում, դառնում էին ձեռքերը վեր, ողջը միասին ու հանդիսավոր, միշտ դեպի աջ, մե'րթ բքի պես գալարվելով թռչկոտում էին վեր-վեր, կանանց թիկունքներին թրթռում էին սպիտակ քողերը, թրթռում էին աղջիկների բարակ ծամերը ու արագ դառնում էին, երգում: Սեդանի շուրջը ոմանք ծափ էին տալիս, ոմանք կերակուրների, մրգերի սինիները ձեռքե-ձեռք պարզելով հյուրասիրում էին իրար, խոսում, պատմում, ծիծաղում էին:

Պարից հետո Պավել Պետրովը բարձրացրեց գավաթը, ու պարզելով նորապսակներին, զիւ կանչեց.

— Горько, горько...

Աղմուկը դադարեց: Տիրեց անհասկանալի, կարճ լռություն, շփոթմունքը պարուրեց ամենքին: Պավել Պետրովը նույնպես շվարուն լռեց, լույսերից ալ կարմրած, շողացող դեմքով ժպտաց: Սոնա տատը ձեռքով ծածկեց բերանը, ծիծաղկոտ նայեց տիկին Սաթենիկին:

— Կոնծել է,— թաքուն աչքով արեց նրան, նորից ծիծաղկոտ երեսը շրջեց Պավել Պետրովին: — Էդ ի՞նչն է լեղի:

— Չէ: Մեզ մոտ, երբ խմում են նորապսակների կենա-

ցը, գոռում են ԳՕՐԵԿՕ, պահանջում են, որ համբուրվեն...
Սովորութիւնն է:

— ԳՕՐԵԿՕ,—կանչեց Սաղաթելը, երաժիշտները կրկնեցին, հետո կանչեցին, աղմկեցին բոլորը:

— Հասարակութիւնը պահանջում է, որ մենք համբուրվե՞նք,—շիկնելով հարցրեց Սեդան,—խնդրեմ, ինչու չէ, կընդառաջենք ձեր պահանջը. միայն թե թող հասարակութիւնը... Մամոչկա, դավաթդ դիր,—ու շրջվելով համբուրեց, ինչպես միշտ՝ լռիկ ժպտացող և ամոթից շիկնած Միքայելին:

— Ինչո՞ւ են այստեղ հրապարակով համբուրվում: Ի՞նչ է տեղի ունենում այստեղ,—ցանկապատի մոտից ձայն տվեց մեկը:

Բոլորը շրջվեցին: Բակի դռնակի մոտ, աշնանային վերարկուն ուսից կախած, կանգնած էր Սարոյանը:

— Համեցեք, համեցեք խնդրում ենք...—աղմկեցին բոլորը:

— Էս կողմը, խնդրում եմ, համեցեք,—հրավիրեց Խեչանը,—հարսանիք է տեղի ունենում:

— Փեսացուն շքանշանակի՞ր է,—մոտենալով հարցրեց Սարոյանը...—Ո՛չ: Իսկ հարսնացո՞ւն:

— Առայժմ ոչ,—ժպտաց Սեդան:

— Ափսո՞ս,—կատակով շարունակեց Սարոյանը,—ուրեմըն դրելու համար հետաքրքիր նյութ չէ: Մի՛ անհանգստացեք, մի՛ անհանգստացեք, ես կնստեմ: Հասկանո՞ւմ եք, անցնում եմ գյուղի միջով, և ո՛չ մի բնակիչ: Էլ ինչպե՞ս, մտածում եմ, կատարել խմբադրության հանձնարարութիւնը: Բայց պարզվում է ահա...

— Ուրեմն, նորի՞ց մեզ մոտ,—հարցրեց Խեչանը:

— Այո՛, նորից, ընկեր Խեչան: Նորից ձեզ մոտ, ձեր հեռավոր խուլ Կաղնուտը: Ի՛նչ արած, դուք սիրում եք ձեր Կաղնուտը, ամենքդ նրա սիրահարներն եք. ինչե՞ր ասես չեք կատարում: Ճի՞շտ է արդյոք, որ երաժշտական դպրոց եք կազմակերպել:

— Ոչ,—ասաց Միքայելը,—նոր է կազմակերպվում:

— Եւ օգաշուների՝ դպրոց, առանց արտադրութիւնից
կտրուելու:

— Լինելու է: Только набираем курсантов, — պատաս-
խանէց Պավել Պետրովը:

— Ուրեմն ես ճիշտ եմ: Չէ՛, շնորհակալ եմ, սիրելի
բժիշկ, ինձ խորոված մի գնեք, ես հիմա գնալու եմ... Ո՛ր-
տեղ են ձեր ապագա օգաշուները, երաժիշտները:

— Էստեղ են, — ասաց Խեչանը, ձեռքը լայն պարզելով, —
բոլորն էստեղ են:

— Այդ դեպքում, ես խորովածից չեմ հրաժարվի, բայց
նախ մի երկու նկար և մի փոքր ինտերվյու: Վաղը նյութերը
հասցնելու եմ խմբագրութիւն: Ո՛ւմ նկարեմ առաջ:

— Մեզ, օգաշուներիս, առաջ մեզ, — կանչեցին տղաները:

— Չէ, երգիչներին, երաժիշտներին...

— Ինչո՞ւ խառնվեցիք, չի՛ հասկացվում, ո՞վ է այստեղ
օգաշու, ո՞վ է երաժիշտ: Ասենք, լա՛վ, թող լինի խառը, բո-
լորիդ նկարում եմ միասին: Կանգնեք այս կողմը: Խտացեք:
Նկարում եմ: Հիմա քանկվելու է մազնի, ջղայիններին
խնդրում եմ շփախենալ:

Ու շլացուցիչ լույսից՝ փայլատափեց բակը, ցուրը մխրճվե-
լով կարծես թռավ, գնաց դեպի աստղերը ու կախվեց հորի-
զոնի ծայրից: Լուսինը բարձրանում էր Կաղնուտի վրա...

Պատ. խմբագիր՝ ԴՐ. ՍԱՐԴՍՅԱՆ
Նկարիչ՝ Կ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Ս. ՇԱՀԲԱԶՅԱՆ


ՎՖ 03367. Պատվեր 110. Տիրաժ 4000:

Տպագր. 6³/₄ մամ., հեղ. 4,7 մամ.:

Հանձնված է արտադրության 11/III 1948 թ.:

Ստորագրված է տպագրության 20/IV 1948 թ.:

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ և Հրատ. Վարչության
№ 3-րդ տպարան, Ալավերդյան 65, Երևան, 1948 թ.



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220029130

60

A ^{II}
29130